«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2022

ՆԱԽԱԲԱՆ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի (այսուհետ ՇՊՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959- Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար տեղացի և միջազգային փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1.իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն ՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2.որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Սույն Զեկույցը պարունակում է ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային դիտարկումները ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 14

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 15

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 15

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 15

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 19

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 19

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 22

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 26

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 36

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 46

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 53

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 59

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 65

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 72

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 76

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 81

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 90

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 90

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 91

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 93

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 96

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 101

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 102

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 103

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականցրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Փորձագիտական գնահատում իրականացնելիս խումբը հաշվի է առել, որ մասնագիտական ուսումնական հաստատության (ՄՈՒՀ) նախորդ հավատարմագրման արդյունքում վերանայված առաքելության համապատասխան՝ ՇՊՀ-ն ցանկանում է դառնալ ապագայի հայկական համալսարան՝ հիմնված գիտական, կրթական, տնտեսական, մշակութային ու սոցիալական գործընթացների միասնական սկզբունքների, հայրենասիրական ու հումանիստական համընդգրկուն արժեքների վրա, ծառայել տարածաշրջանի (Շիրակի մարզ, Ջավախքի հայ համայնքներ, իսկ առանձին մասնագիտությունների դեպքում՝ նաև Սփյուռք) գիտակրթական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումներին՝ ապահովելով համապատասխան մասնագետների որակյալ պատրաստումը՝ գիտության և կրթության զարգացման միջազգային չափանիշներին և ՀՀ գիտակրթական քաղաքականությանը ներդաշնակ՝ աջակցելով արտաքին ու ներքին շահառուների համապատասխան կարիքների բավարարմանը: Նշյալի համատեքստում փորձագիտական խումբը նշում է, որ ձևակերպված առաքելությունը բավականին հավակնոտ է, մասնավորաբար՝ գիտության և կրթության զարգացման միջազգային չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից, և ՇՊՀ-ի շրջանավարտները հիմնականում բավարարում են մարզի կարիքները: Փորձագիտական խումբը լիահույս է, որ նոր Ռազմավարական ծրագրի (ՌԾ) շրջանակում ՄՈՒՀ-ը կսահմանի առավել իրատեսական և ՇՊՀ-ի իրողություններին համահունչ առաքելություն, որից բխող յուրաքանչյուր պլանավորված գործողություն կլինի իրագործելի և հստակ չափելի: Փորձագիտական խումբը նշում է՝ կրթության ոլորտում ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը և դրան միտված քաղաքականությունն ընդհանուր առմամբ համապատասխանում են ուսումնական հաստատության որդեգրած առաքելությանը և համահունչ են Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 6-րդ, 7-րդ, 8-րդ մակարդակներին:

ՇՊՀ-ի գործունեությունը ներառում է բակալավրի, մագիստրատուրայի և հետազոտողի կրթական աստիճանների իրականացում՝ ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ աստիճաններում: ՄՈՒՀ-ը ներկայումս ունի առկա բակալավրի 39, հեռակա բակալավրի 32, մագիստրոսի 26 և հետազոտողի 20 (ըստ 6 ուղղությունների) կրթական ծրագրեր: Հատկանշական է, որ ՇՊՀ-ում պարբերաբար ներդրվում են նոր մասնագիտական կրթական ծրագրեր, սակայն

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

համալսարանը բավարար ուշադրություն չի դարձնում արտաքին շուկայի կարիքների բովանդակային և համապարփակ ուսումնասիրություններին, արտաքին վերլուծություններին, համալսարանը կրթական գործընթացի արտաքին ռիսկերի գնահատման և կառավարման անհրաժեշտ գործիքակազմ չունի, հետևաբար ինչպես գործող որոշ ՄԿԾ-ներում, այնպես էլ նոր ներդրված ՄԿԾ-ներում դիմորդների բավարար քանակ չի ապահովվում: Բացի այդ էլ, ՄՈՒՀ-ի համար կարևոր խնդիր է թերբեռնված խմբերի առկայությունը՝ մինչև ութ ուսանողից կազմված խմբերը կազմում են ընդհանուր խմբերի կեսից ավելին, ինչը շահութաբեր չէ ՇՊՀ-ի համար: Վերոշարադրյալն ուղղակիորեն կարող է բացասաբար անդրադառնալ ՄՈՒՀ-ի հետագա զարգացման վրա: Փորձագիտական խումբը նշում է, որ դիտարկված ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ համահունչ են ՄՈՒՀ-ի նպատակադրումներին, սակայն փորձաքննության արդյունքում դուրս են բերվել անհամապատասխանություններ ՄԿԾ-ների նպատակների և հայտարարված վերջնարդյունքների միջև, ԹՕՊ-երում չի երևում բովանդակային կապը՝ ըստ առանձին թեմաների ներառված դասավանդման մեթոդների, հանձնարարականների, ռեսուրսների միջև, ավելին՝ դրանք երբեմն զուտ ֆորմալ բնույթ են կրում, դասավանդման մեթոդ-գնահատման մեթոդ համահնչեցումը ևս իրատեսական չէ: Փորձագիտական խումբն անհանգստացնող է համարում այն, որ արտաքին շահակիցներն ու դասախոսները հիմնական մասով չունեն մասնակցություն ՄԿԾ-ների վերջնարդյունքների սահմանմանը: Բակալավրիատում կամընտրական դասընթացների բաղադրիչը բացակայում է, որով ուսանողները կարող են մեծացնել իրենց մասնագիտական գործնական կարողությունները: Նշյալի համատեքստում կարող է խոչընդոտվել սահմանված վերջնարդյունքների ձեռքբերումը: 3-րդ Չափանիշի շրջանակում փորձագիտական խումբն առանձնացնում է իր դրական դիտարկումներն առ այն, որ ՄՈՒՀ-ն իրականացնում է ՄԿԾ-ների բենչմարքինգ ՀՀ առաջատար բուհերի և ՌԴ բուհերի հետ, որի արդյունքում ներդրվել է նոր մագիստրոսական կրթական ծրագիր, առկա է ԳՔՈԱԿԿ-ի կողմից մշակված բենչմարքինգի ձևաչափ, որոշ ուսանողներ և դասախոսներ մասնակցել են շարժունության ծրագրերի, սակայն միևնույն ժամանակ այդ տվյալները գոհացուցիչ չեն այն առումով, որ ՄԿԾ-ների բարելավման արդյունքները շոշափելի և չափելի չեն, ՄԿԾ-ների համահունչության վերաբերյալ առկա չեն հստակ վերլուծություններ, շարժունության հնարավորություններն ամբողջովին չեն օգտագործվում: Այս համատեքստում սահմանափակվում են ՄԿԾ-ների շարունակական բարելավման հնարավորությունները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՇՊՀ-ն իր ծավալած գործունեության և ՄԿԾ-ների իրականացման համար ունի բավարար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Մարդկային ռեսուրսների առումով գովելի է, որ ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմի ապահովումը ՄՈՒՀ-ի նպատակներից է, բացի դա, ՄՈՒՀ-ն իր առջև խնդիր է դրել ՄԿԾ-ների արդյունավետությունը բարձրացնելու նկատառումով սահմանել դասախոսական կազմին ներկայացվող պահանջներ և չափանիշներ: Արժանագով է, որ ՊԴ կազմի առավել քան 55%-ը ունեն գիտական աստիճան

կամ կոչում, ավելին՝ վերջին տարիներին գիտական աստիճան և կոչում ստացողների թիվն աճել է։ ՇՊՀ-ն շահադրդված է ՊԴ կազմի աստիճանական երիտասարդացմամբ, բացի այդ էլ, ելնելով ՄԿԾ-ների պահանջներից, հրավիրվում են դասախոսներ նաև այլ ՄՈՒՀ-երից։ Փորձագիտական խումբը փորձագիտական այցի մասնագիտական հանդիպումներից առանձնահատուկ շեշտադրում է, որ ՄՈՒՀ-ում ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական ներուժը մեծ է և այն կարելի է ուղղել ՄԿԾ-ների իրագործմանն ու պարբերաբար բարելավմանը։

Փորձագիտական խմբի կողմից արժևորվում է, որ ՄՈՒՀ-ում բազմագործոն գնահատման հիմքի վրա իրականացվում է ՊԴ կազմի վարկանիշավորման գործընթաց՝ ըստ «ՇՊՀ-ի ՊԴԿ-ի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման» կարգի, սակայն հարկ է առանձնացնել, որ սույն կարգում ներդրված մեխանիզմները դեռևս ամբողջովին չեն գործարկվում, և վարկանիշավորման արդյունքում առկա չեն ՊԴ կազմի աշխատանքային պայմանագրերի վերակնքման, երկարաձգման կամ խզման, մրցութային ընտրությունների, պաշտոնական առաջընթացի, նյութական և բարոյական խրախուսման միջոցների կիրառման դեպքեր։ Փորձագիտական խումբը գտնում է, որ վերոնշյալ կարգի կատարելագործման և ամբողջությամբ գործարկելու պարագայում զգալիորեն կբարելավվեն համալսարանի ՊԴ կազմի ներկայացուցիչների մասնագիտական որակները։ Դրան նպաստում են նաև ՇՊՀ-ում գործող ՊԴ կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման մեխանիզմները, իրականացվող ՊԴ կազմի վերապատրաստումները։ Փորձագիտական խումբն ունի այն դիտարկումը, որ ՇՊՀ-ում իրականացվող վերապատրաստումները դառնան համալսարանի համակարգված քաղաքականության առանձին բաղադրիչ։

ՇՊՀ-ն իր գործունեությունը ծավալում է երկու շենքում։ 2017 թ.-ից գլխավոր մասնաշենքը բարեկարգվել և համալրվել է նիստերի դահլիճով, «Բանականության բանալի» ակումբով, Լրացուցիչ և շարունակական կրթության ռեսուրս կենտրոնով, Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի սենյակով և այլ կաբինետներով, որոնք համալրված են համապատասխան սարքավորումներով։ Փորձագիտական խումբն առանձնացնում է, որ նշյալ ռեսուրսների համալրումը ՇՊՀ-ն հիմնականում իրականացրել է միջազգային ծրագրերից դրամական մուտքերի հաշվին։ Դրական է դիտվում, որ ՄՈՒՀ-ն ունի հիմնանորոգված հյուրատուն՝ ապահովված անհրաժեշտ պայմաններով, վերջին տարիներին վերանորոգվել և կահավորվել են մարզադահլիճները, որոշ լսարաններ, լաբորատորիաներ, սակայն, այդքանով հանդերձ, առկա է լաբորատորիաների վերհագեցման, համակարգչային առկա բազայի նորացման, գրադարանային ֆոնդի և էլեկտրոնային գրադարանի արդի մասնագիտական գրականությունով համալրման անհրաժեշտություն, ինչն ուղղակիորեն կնպաստի ՇՊՀ-ում կրթական գործընթացների առավել արդյունավետ իրականացմանը։

Ինչ վերաբերում է ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսներին, ապա դրանք ձևավորվում են բյուջետային և արտաբյուջետային մուտքերից, ուր գերակշռում են պետական ֆինանսավորումից մուտքերը։ Փորձագիտական խումբն առանձնացնում է, որ ֆինանսավորման այլ աղբյուրները էական կշիռ չունեն համալսարանի բյուջեում՝

անհրաժեշտություն առաջացնելով այլընտրանքային եկամուտների նոր աղբյուրներ փնտրելուն։ Փորձագիտական խումբն իր մտահոգությունն է հայտնում առ այն, որ ըստ տարիների, տարբեր ծախսային հոդվածների պլանավորման և դրանց կատարողականի միջև առկա են շեղումներ, դրամական միջոցների բաշխումը չի բխում ՄՈՒՀ-ի ՌԾ-ի առաջնահերթություններից՝ խոշոր հաշվով վտանգելով ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխման քաղաքականությունը։ Ի հավելումն վերը նշյալի, ծախսային հոդվածներում գերակշռում է աշխատավարձի ֆոնդը, բավականին քիչ են գիտահետազոտական գործունեությանը, արտաքին կապերին և միջազգայնացմանը տրամադրվող միջոցները, ուստի այս համատեքստում ևս փորձագիտական խումբը մտահոգված է ՄՈՒՀ-ի հետագա զարգացման կասեցմամբ։

Փորձագիտական խումբն ընդգծում է, որ ՇՊՀ-ում կառավարչական գործընթացներն իրականացվում են կառավարման գործիքակազմի ներգցիայով։ Դա պայմանավորված է նրանով, որ ՇՊՀ-ում կառավարչական գործընթացներ իրականացնող մարմիններից ՀԽ-ի, ԳԽ-ի և ռեկտորի գործունենությունը ժամանակ առ ժամանակ կասեցվել է՝ առաջացնելով ՄՈՒՀ-ում փոփոխությունների կառավարման գործիքների ներդրման անհրաժեշտություն։ Տվյալ դեպքում ՄՈՒՀ-ը հստակ կողմնորոշում չունի առկա իրողություններին համարժեք կառավարչական գործիքների ընտրության հարցում, ավելին՝ ավարտվել է 2015-2019թթ. ՌԾ-ն և առ այսօր ՄՈՒՀ-ը չունի նոր ՌԾ։ Նշյալի համատեքստում կարևորվում է կառավարման գործընթացը սպասարկող արդյունավետ գործիքակազմի ներդրումն ու եղածի բարելավումը։ Խոսքը վերաբերում է նոր ՌԾ-ին համահունչ ՄՈՒՀ-ի գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշների մշակմանը, ինչպես կրթական, այնպես էլ ֆինանսական պլանների և դրանց կատարողականների համապատասխանեցմանը, կառուցվածքային ուղղաձիգ կապերի հստակեցմանը, ԳԱՑ-երի հաշվարկման համար համադրելի նորմատիվների սահմանամանը և այլն։ Փորձագիտական խումբը գտնում է, որ կառավարման մակարդակում ՄՈՒՀ-ն անհրաժեշտություն ունի դիվերսիֆիկացնել առկա ֆինանսական ռեսուրսները՝ զուգահեռաբար միջոցներ ազատելով համալսարանի հետագա զարգացումն ապահովելու համար։ Փորձագիտական խումբը հավաստիաբար նշում է, որ մինչև համալսարանը չմշակի և չաշխատեցնի փոփոխությունների կառավարման հստակ մեխանիզմներ, ՄՈՒՀ-ը կառավարման մակարդակում արդյունավետություն չի կարող ապահովել։

Դրական է ընկալվում, որ ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի գործունեությունը միտված է ՄՈՒՀ-ի կրթական գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ապահովմանն ու տարածմանը։ ՇՊՀ-ում որակի ներքին ապահովման խնդիրները ԳՔՈԱԿԿ-ի տիրույթում են, վերջինս բազմաֆունկցիոնալ կառույց է, համատեղում է նաև գիտական քաղաքականության և հետբուհական կրթության հետ կապված գործընթացները։ Փորձագիտական խումբը մտավախություն ունի, որ կենտրոնի կառավարման լայն գործառույթների շրջանակում կարող է վտանգվել որակի ապահովման անկախության սկզբունքը և, զուգահեռաբար՝ ՄՈՒՀ-ի համար ռազմավարական առաջնահերթություն համարվող գիտության և հետազոտության

զարգացումը։ Գովելի է, որ ԳՔՈԱԿԿ-ի կողմից ՈԱ գործընթացներում ներդրվել է հետազոտական բաղադրիչը, որի արդյունքում հաշվետվությունները վերլուծական են, որոշումները՝ տվյալահենք։ ՇՊՀ-ում գործում են որակի ապահովման տարբեր մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք ընդհանուր առմամբ աշխատող են և խնդիրներ շեշտադրող։ Փորձաքննության ընթացքում դրականորեն արձանագրվել է, որ իրականացված տարբեր վերլուծությունների միջոցով առկա են վեր հանված խնդիրներ, որոշ խնդիրների մասով առկա է առանձնացված առաջարկությունների փաթեթ, սակայն առկա չեն բարելավման ենթակա խնդիրները հետագա բարելավման պլաններում ներառելու մեխնիզմներ, այդ պատճառով համարժեք լուծումները հապաղում են։

Ընդհանուր առմամբ ուսանողները գոհ են ՇՊՀ–ի տրամադրած կրթական միջավայրից, դա են վկայում ուսանողների շրջանում իրականացված տարատեսակ հարցման արդյունքները։ Փորձագիտական խումբն առանձնացնում է, որ ՄՈՒՀ-ում տեղի ունեցած տարաբնույթ փոփոխությունների արդյունքում ներկայումս ՈՒԽ-ն և ուսանողները ցուցաբերում են բարձր նախաձեռնողականություն՝ համալսարանում առկա կրթական խնդիրները վերհանելու և լուծելու կապակցությամբ։ Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության մեծացման պարագայում էապես կբարելավվեն ուսանողների մասնագիտական հմտությունները։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում գիտությունը տարածաշրջանի կարիքներին ուղղելու ՇՊՀ-ի նպատակադրումը։ Սակայն ինստիտուցիոնալ մակարդակում ՄՈՒՀ-ի գիտահետազոտական, գիտակրթական և նորարարական, տեղեկատվական ոլորտում բացակայում են գործունեություն ծավալելու գերակա և իրատեսական ուղղություններն ու առաջնահերթությունները, առանց որի ՇՊՀ-ի համար դժվար կլինի երկարաժամկետում գիտությունը և հետազոտությունը զարգացնելու վեկտորի ուղղությունը որոշել։ Նշյալից բացի, ընդհանրական առումով անհանգստացնող է այն վարքագիծը, որ ՇՊՀ-ում մեծ ջանքեր չեն գործադրվում հետազոտական գործունեության զարգացման ուղղությամբ, բյուջեից տրամադրվող միջոցները սակավ են, որն էլ իր հերթին որոշակիորեն հանգեցրել է հետազոտական բաղադրիչի ոչ լիարժեք գործարկմանը։ Գրվածքի շրջանակում փորձագիտական խումբն իր դիտարկումներն է ներկայացրել ՄՈՒՀ-ի գիտական ուղղվածությունների հստակեցման, հետազոտական ծրագրերում օտարերկրյա գիտնականների ներառելու, հետազոտական քաղաքականությանը համարժեք աշխատանքային պլաններ ունենալու առումով։

Դրական է գնահատվում, որ ՄՈՒՀ-ն ունի բազմամակարդակ հաշվետվողականության համակարգ՝ ապահովելով հաշվետվողականության ներքևից վերև մոտեցումը։ Այդ հաշվետվությունները սահմանված ձևաչափ ունեն, քննարկվում են տարբեր օղակներում և հրապարակային են։ Հատկանշական է, որ հաշվետվությունները պարունակում են հետազոտական բաղադրիչ։ Փորձագիտական խումբը դրականորեն ընդգծում է, որ ՄՈՒՀ-ը կարևորում է համալսարանի դրական վարկանիշի ձևավորմանը և գործունեության մասին տեղեկատվության տարածմանը նպաստող աշխատանքները։ Այս համատեքստում կարելի է առանձնացնել Շիրակի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների համար

կազմակերպվող դասընթացները, հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների համար նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացները: Փորձագիտական խումբն իր դիտարկումն ունի առ այն, որ վերոնշյալ միջոցառումները լինեն շարունակական:

Հատկանշական է, որ ՇՊՀ-ն ունի տարածաշրջանային լայն գործընկերային համագործակցությունների շրջանակ, մասնավորաբար՝ համագործակցությունը ՀՀ ՊՆ-ի հետ, մարզային դպրոցների և առևտրային կազմակերպությունների հետ, միջազգային հաստատությունների և կառույցների հետ: Սակայն հարկ է նշել, որ միջազգային համագործակցության համաձայնագրերով հաստատվող միջազգային միջոցառումների, այդ թվում՝ ակադեմիական շարժունության և ակադեմիական հետազոտությունների քանակը գոհացուցիչ չէ: Փորձագիտական խմբի կողմից կարևորվում է միջազգային գործընկերների հետ միջազգային միջոցառումների շրջանակի ընդլայնումը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Տարածաշրջանի զարգացմանը նպաստող գիտակրթական հաստատություն լինելը,
2. Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջների բավարարումը,
3. Դիմորդների կայուն հոսքը,
4. Մասնագիտական որակավորումներով օժտված պրոֆեսորադասախոսական կազմը,
5. Նյութատեխնիկական ապահովվածության շարունակականության նկատմամբ ՄՈՒՀ-ի հստակ դիրքորոշումը,
6. Տարածաշրջանի գործատուների հետ համագործակցության լայն շրջանակը և աշխատանքային փորձառությունը,
7. Ներդրված բազմամակարդակ հաշվետվողականության համակարգը,
8. Միջազգային համագործակցության գործուն ծրագրերի առկայությունը,
9. Ներքին դրամաշնորհների առկայությունը,
10. Ներդրված ՈԱ մշակույթը, աշխատող ՈԱ համակարգը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Հիմնադրամի իրավական կարգավիճակին համապատասխան հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործումը,
2. ՄՈՒՀ-ի կառավարչական և կրթական գործընթացներում արտաքին շահակիցների քիչ ներգրավվածությունը,
3. Ֆինանսների կառավարման անարդյունավետությունը, այլընտրանքային եկամուտների սակավությունը,
4. Պետական ֆինանսավորման գերակայությունը սեփական մուտքերի նկատմամբ,
5. Այլընտրանքային եկամուտների աղբյուրների բացակայության պատճառով ՄՈՒՀ-ի հետագա զարգացման համար միջոցների անբավարարությունը,
6. ՄԿԾ-ների մշակման և իրականացման գործընթացներում արտաքին շահակիցների թույլ մասնակցությունը,
7. ՄԿԾ նպատակի-վերջնարդյունքների, ինչպես նաև դասավանդման-գնահատման մեթոդների/հանձնարարականների/ թույլ համահնչեցումը,

8. Հետազոտության ոլորտում սահմանված առաջնահերթությունների բացակայությունը,
9. Միջազգայնացման ռազմավարության և ուղղությունների բացակայությունը,
10. Դասախոսների և ուսանողների շարժունության ցածր մակարդակը,
11. ՊԴ, վարչական կազմի օտար լեզվի ոչ բավարար իմացությունը։

Հիմնական խորհրդատվություններ

Առաքելությունը և նպատակները

1. ՌԾ-ի մշակման աշխատանքները, ըստ համապատասխան ցուցիչների, դիտարկել հրատապ՝ ներգրավելով արտաքին և ներքին շահակիցներին։
2. Մշակել նոր ՌԾ-ին համահունչ պլան-ժամանակացույց՝ յուրաքանչյուր պլանավորված գործողություն դարձնելով հստակ չափելի և իրագործելի։
3. Մշակել և ներդնել սահամանված ցուցիչների գնահատմամբ ՌԾ-ի կատարողական։
4. Ակտիվացնել ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը ՄՈՒՀ–ի առաքելության, նպատակների և խնդիրների, կրթական կարիքների գնահատման գործընթացներում։

Կառավարումն ու վարչարարությունը

5. Մշակել և ներդնել փոփոխությունների կառավարման հստակ մեխանիզմներ, հստակեցնել և ընդգծել կառուցվածքային ուղղաձիգ կապերը։
6. Մշակել և ներդնել ՄՈՒՀ-ի գործունեության կատարողականի տարեկան արդյունքային ցուցանիշներ՝ համահնչեցնելով ՄՈՒՀ-ի նոր սահմանված ՌԾ-ի ցուցիչներին։
7. Մշակել այլընտրանքային եկամուտների ապահովման ուղիներ և միջոցներ ազատել ՄՈՒՀ-ի հետագա զարգացումն ապահովելու համար՝ գնահատելով բոլոր հնարավոր ռիսկերը։
8. Բարձրացնել ֆինանսների կառավարման արդյունավետությունը՝ բյուջեից հատկացումները կապել ստացված արդյունքային ցուցանիշների հետ (ծրագրային բյուջետավորման եղանակ)։
9. Կառավարման համակարգում աշխատեցնել ՊԻԳԲ շրջափուլը, ապահովել պլանների և դրանց կատարողականների համապատասխանությունը։
10. Իրականացնել արտաքին միջավայրի վերլուծություններ՝ նպաստելով տվյալահենք որոշումների կայացմանը։
11. Սահմանել օպտիմալ, համադրելի նորմատիվներ ԳԱՑ-երի հաշվարկման համար։

Մասնագիտության կրթական ծրագրերը

12. Վերանայել գործող ՄԿԾ-ները՝ իրականացնելով աշխատաշուկայի պահանջների համապարփակ վերլուծություններ։
13. Ձևավորել և բազմազանեցնել ՄԿԾ-ներում կամընտրական դասընթացների բաղադրիչը՝ հաշվի առնելով աշխատաշուկայի և ուսանողների մասնագիտական կարիքները։
14. Ապահովել ԹՕՊ-երում ներառված դասավանդման մեթոդ-հանձնարարականներ-ռեսուրսներ բաղադրիչների համահնչեցումը։

15. Բարելավել գնահատման համակարգը՝ ներդնելով գնահատման օբյեկտիվ և վերջնարդյունահենք (գիտելիք, կարողություն, հմտություն) բաղադրիչներ։
16. Բարձրացնել ՄԿԾ-ների կառավարման արդյունավետությունը՝ հստակեցնելով և իրագործելի դարձնելով ՄԿԾ-ների պատասխանատուների գործառույթները։
17. Արտաքին և ներքին շահակիցներին մասնակից դարձնել ՄԿԾ-ների /վերա/մշակմանը, վերջնարդյունքների սահմանամանը։
18. Վերանայել ՄԿԾ-ների մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման քաղաքականությունը՝ ներդնելով ՄԿԾ-ների բարելավման հստակ մեխանիզմներ։
19. Ընդլայնել ակադեմիական ազնվության միջոցառումները։

Ուսանողները

20. ՈՒսանողներին տրամադրվող անվճար խորհրդատվությունները դարձնել պարբերական և շարունակական։
21. Ընդլայնել շրջանավարտների բազան՝ թիրախային աջակցելով նրանց աշխատանք գտնելու հարցում։
22. Խրախուսել ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում՝ ընդլայնելով տեղեկատվության հասանելիությունը և զարգացնելով ուսանողների հետազոտական կարողությունները։
23. Առանձնացնել ուսանողական կառույցների համար որոշակի բյուջե՝ հիմքում դնելով ծրագրերի արդյունքները։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

24. Մշակել և ներդնել ՊԴԿ-ի մեջ երիտասարդ և պրակտիկ ոլորտում լավ փորձ ունեցող մասնագետների ներգրավման և խրախուսման քաղաքականություն։
25. Լիարժեքորեն կիրառել «ՇՊՀ-ի ՊԴԿ-ի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման» կարգում ներդրված մեխանիզմները՝ գնահատելով կարգի արդյունավետությունը։
26. Ֆինանսական պլանավորման մեջ առաջնահերթություն դիտարկել մասնագիտական վերապատրաստումների կազմակերպումը՝ ուղղված դասախոսական և վարչական անձնակազմի և՛ մասնագիտական, և՛ մանկավարժական կարողությունների զարգացմանը։
27. Հստակեցնել և կիրառել ՊԴ կազմի համալրման մրցույթային կարգի մեխանիզմները։
28. Մշակել որակական ցուցիչների վրա հիմնված ՊԴ կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ չափանիշներ։

Հետազոտությունը և զարգացումը

29. Հստակեցնել ՄՈՒՀ-ի հիմնական գիտական ուղղվածությունները և առաջնահերթությունները՝ դրանց համարժեք ներգրավվելով արտաքին դրամաշնորհային ծրագրերում:

30. Ձևավորել դրամաշնորհային ծրագրերով զբաղվող աշխատանքային խումբ՝ ընդգրկելով համապատասխան որակավորմամբ և կարողություններով մասնագետների:
31. Մշակել հետազոտության և գիտության միջազգայնացման քաղաքականությունից բխող աշխատանքային պլաններ՝ չափելի ցուցիչներով, կատարողականի գնահատումներով:
32. ՊԴ կազմի համար կազմակերպել պարտադիր դասընթացներ՝ զարգացնելով դասախոսների գիտությամբ, հետազոտությամբ զբաղվելու, դրամաշնորհներին դիմելու, գիտական հոդվածներ գրելու և այլ հմտությունները և կարողությունները:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

33. Հստակեցնել ռեսուրսների ձեռքբերման առաջնահերթությունները՝ ապահովելով մասնագիտական լսարանների, լինգաֆոնային կաբինետի և լաբորատորիաների տեխնիկական հագեցվածությունը, գրադարանային ֆոնդի և էլեկտրոնային գրադարանի արդիականացումը:
34. Իրականցնել ռեսուրսների ճիշտ պլանավորում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ուսումնառության արդյունավետ կազմակերպման համար:
35. Ներդնել Mulberry համակարգը ներքին փաստաթղթաշրջանառության գործընթացների առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:
36. Ներդնել ֆինանսական ռեսուրսների արդյունավետության գնահատման գործուն մեխանիզմներ:

Հասարակական պատասխանատվությունը

37. Ապահովել հետադարձ կապի ապահովման մեխանիզմների կայուն գործարկումը:
38. Ապահովել աշակերտների համար կազմակերպվող դասընթացների և ուսուցիչների վերապատրաստումների պարբերականությունը:
39. Համալրել կայքէջը օտարալեզու տեղեկատվությամբ՝ միտված միջազգային գործընկերային հարաբերությունների զարգացմանը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

40. Գնահատել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգային համագործակցության ներկայիս կարողությունները և ամբողջականացնել ՇՊՀ-ի արտաքին համագործակցության և միջազգայնացման ռազմավարությունը՝ հստակեցնելով միջազգայնացման ուղղությունները և ոլորտները:
41. Նախատեսվող ՌԾ-ում ներառել ՄՈՒՀ-ի արտաքին համագործակցության և միջազգայնացման ուղղությունները:
42. Մշակել ՄՈՒՀ-ի միջազգայանացման գործընթացի իրատեսական բյուջե:
43. Ակտիվացնել միջազգային դրամաշնորհային ծրագրերի հայթայթման աշխատանքները՝ առանձնացնելով համապատասխան աշխատակցի գործառույթները և անհրաժեշտ մասնագիտական կարողությունները:

44. Ընդլայնել միջազգային գործընկերների հետ միջոցառումների շրջանակը (միջազգային հրավիրյալ դասախոսների ներգրավում, միջազգային վեբինարների մասնակցություն, ուսանողների կողմից միջմշակութային միջոցառումների կազմակերպում)։
45. Ապահովել օտար լեզվի մասնագիտական դասընթացների պարբերականությունը և կիրարկել դրանց արդյունավետությունը գնահատող մեխանիզմները։

Որակի ներքին ապահովման համակարգը

46. Վերանայել ՇՊՀ-ի 2013թ. ՈԱ քաղաքականությունը և ընթացակարգերը՝ համահնչեցնելով ներկայիս իրադրություններին և ՄՈՒՀ-ի կարիքներին։
47. Կատարելագործել և մատչելի դարձնել հարցարանները՝ վերանայելով հարցերը։
48. Մշակել հստակ մեխանիզմներ վերլուծությունների արդյունքները հաջորդ տարվա պլաններում ներառելու համար։
49. Հստակեցնել ԳՔՈԱԿԿ-ի աշխատակիցների հաստիքներն ու գործառույթները։
50. Մեծացնել արտաքին շահակիցների ներգարվվածությունը ՈԱ գործընթացներին։
51. Կատարելագործել ՈԱ աշխատակիցների մասնագիտական հմտությունները՝ ապահովելով նաև միջազգային առցանց վերապատրաստումներին մասնակցություն։

14 հունիսի 2022թ.

Արմենուհի Մհերյան
Փորձագիտական խմբի ղեկավար

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ինստիտուցիոնալ մակարդակում ՄԿԾ-ների իրագործման համար ՄՈՒՀ-ն օգտագործում է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը: ՇՊՀ-ն կիրառում է ԵԿԲՏ որակավորումների շրջանակը՝ տրամադրելով 60 կրեդիտ յուրաքանչյուր ակադեմիական տարվա համար, ինչպես նշված է բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակում: Այնուամենայնիվ չկա ոչ մի ցուցում բակալավրի և մագիստրոսական ծրագրերի համար ECTS կրեդիտների քանակի վերաբերյալ: ՄՈՒՀ-ը նաև օգտագործում է վերջնարդյունքների և կրեդիտային համակարգի գաղափարը՝ որպես ԵԿԲՏ ինտեգրվելու գործիքներ: ՇՊՀ-ում գրանցվել են ՊԴ կազմի և անձնակազմի շարժունության եզակի դեպքեր CBHE Erasmus+ (Key 2) ծրագրի շրջանակներում: Միջազգայնացմանն ուղղված հստակ քաղաքականությունը ՄՈՒՀ-ում բացակայում է, բացակայում են նաև ECTS կրեդիտների փոխանցման թափանցիկ մեխանիզմները: ՈՒսանողական, ՊԴ և վարչական անձնակազմն ունի օտար լեզվի ոչ բավարար իմացություն, որը նույնպես խոչընդոտում է ակադեմիական շարժունության իրականացմանը:

Անհրաժեշտ է, որպեսզի ՄՈՒՀ-ը հստակորեն սահմանի դասավանդման նպատակները՝ դրանք փոխկապակցելով ՄԿԾ-ների հետ՝ հստակեցնելով նաև դրանց իրականացումը և գնահատումը: ՄԿԾ-ների իրականացման գործընթացում պետք է հաշվի առնել ուսանողակենտրոն մոտեցումը՝ անկախ դասավանդման մեթոդից: Ուսանողները նույնպես պետք է մասնակցեն ՄԿԾ-ների վերաբերյալ որոշումների կայացմանը ձայնի լիարժեք իրավունքով: Կրեդիտները պետք է հատկացվեն, երբ գնահատումը ցույց է տալիս, որ սահմանված վերջնարդյունքները ձեռք են բերվել համապատասխան մակարդակում: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև վերջնարդյունքների ձևակերպմանը: Ձևակերպված վերջնարդյունքները պետք է լինեն հակիրճ և ոչ շատ մանրամասն, ինչպես նաև հասկանալի և ստուգելի, որպեսզի ծրագրի ավարտին հնարավոր լինի գնահատել, արդյոք ուսանողը հասավ սահմանված վերջնարդյունքներին թե ոչ:

ՈԱ ներքին գործընթացը պետք է համապատասխանի ESG առնվազն 1.2, 1.3, 1.4 և 1.5 չափորոշիչներին, որոնք վերաբերում են ECTS-ին առնչվող ոլորտներին, մասնավորապես՝ ծրագրի մշակում, ուսանողակենտրոն ուսուցում, ընդունելություն, դասավանդում և գնահատում, ուսանողի առաջընթաց, ՊԴ կազմի կատարելագործում, հետազոտության և կրթական գործունեության կապակցում:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

Արմենուհի Միերյան՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, կրթության ոլորտի անկախ փորձագետ, Հայաստանի Հանրապետություն, փորձագիտական խմբի ղեկավար:

Կարեն Դիլբարյան՝ դեղագիտական գիտությունների թեկնածու, Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարան, ֆարմակոլոգիայի ամբիոնի ավագ դասախոս, Հայաստանի Հանրապետություն, փորձագիտական խմբի անդամ:

Հեղինե Օհանյան՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, Վանաձորի Հ. Թումանյանի անվան Պետական համալսարան, Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ, Հայաստանի Հանրապետություն, փորձագիտական խմբի անդամ:

Օլգա Սաֆոնկինա՝ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Մորդովիայի Օգարյովի անվան պետական համալսարան, փոխդեկան, Erasmus+ և փոխանակման ծրարգերի համակարգող, Ռուսաստանի դաշնություն, փորձագիտական խմբի միջազգային անդամ:

Կարեն Մաստոյան՝ Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտություն բաժնի մագիստրատուրայի ուսանող, Հայաստանի Հանրապետություն, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի մասնագետ Անահիտ Տերտերյանը:

Բանավոր թարգմանությունը կատարել է Քրիտինե Օհանյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, թարգմանիչը և համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՇՊՀ-ն 03.06.2019թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (28.06.2019թ.) ՇՊՀ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: ՇՊՀ–ի ինքնավերլուծությունն իրականացրել են հատուկ այդ նպատակով ՄՈՒՀ-ի ռեկտորի

հրամանով ձևավորված աշխատանքային խմբերը: Խմբերում ներգրավված են եղել ներկայացուցիչներ վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնական, ուսանողական համակազմերից: ՄՈՒՀ-ն իրականացրել է ինքնավերլուծություն և հանձնել ՈԱԱԿ 2019թ-ին, սակայն անհրաժեշտություն է եղել այն վերանայելու 2021թ.-ին, քանի որ COVID 19 համավարակով և երկրում տիրող արտակարգ դրությամբ պայմանավորված հավատարմագրման գործընթացները հետաձգվել են:

ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ–ի պահանջներին ստուգելու նպատակով: ՇՊՀ-ի ներկայացրած ինքնավերլուծությունները համապատասխանել են սահմանված ձևաչափին:

Ինքնավերլուծության վերանայված տարբերակը ՈԱԱԿ է ներկայացվել 15.12.2021թ.-ին: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերը, ՄՈՒՀ–ի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ՇՊՀ–ի հետ:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է 4 վերապատրաստում հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՇՊՀ–ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի «Փորձաքննության իրականացման ձեռնարկով»՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախնական այց

2022 թ. մարտի 7-ին տեղի է ունեցել հանդիպում ՇՊՀ–ի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ համալսարանի հետ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը[2], քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2022թ. մարտի 15-ից 18-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն՝ փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՇՊՀ-ի ուժեղ և թույլ կողմերը, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը՝ հստակեցնելով նաև հետագա քայլերը:

Փորձագիտական խումբը փորձագիտական այցերի ընթացքում երեք զուգահեռ հանդիպումներ է իրականացրել ՇՊՀ–ի առաջադրած 3 կրթական ծրագրի շրջանակներում՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Կենսաբանություն»:

Փորձագիտական այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ (միջազգային փորձագետը միացել է առցանց տարբերակով), ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը: Փորձագիտական այցը սկսվել է ՇՊՀ-ի ռեկտորի հետ հանդիպմամբ և ավարտվել ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են ՄՈՒՀ-ի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացի բաց հանդիպումից: Փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն[3], դասալսումներ և ռեսուրսների դիտարկում տարբեր ստորաբաժանումներում[4]:

Զուգահեռ հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվել է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր մասնագիտական ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող և արտասահմանցի փորձագետներից, նրանք միացել է մյուս փորձագետներին) հնարավորություն է ունեցել առանձին երեք մասնագիտական հանդիպումներ ունենալ ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված կրթական ծրագրի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են թեմատիկ օրացուցային պլանների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված ծրագրում սահմանված վերջնարդյունքի ձեռքբերմանը:

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար** և **անբավարար:**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի ներկայացուցիչները և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք, որը ներառվել է զեկույցի տեքստում: Նախնական զեկույցը ներկայացվել է ՄՈՒՀ-ին 16.05.2022թ.ին: ՇՊՀ-ն իր դիտարկումները ՈԱԱԿ է ներկայացրել 31.05.2022թ.-ին: Դիտարկումները քննարկվել են փորձագիտական խմբի կողմից, իսկ 2022թ.-ի հունիսի 9-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է ՄՈՒՀ-ի և փորձագիտական խմբի առցանց հանդիպում, որի ժամանակ ներկայացվել է փորձագիտական խմբի արձագանքը դիտարկումներին: Փորձագիտական վերջնական զեկույցը կազմվել և ՄՈՒՀ-ին է հանձնվել 14.06.2022թ.-ին:

_____

Անահիտ Տերտերյան
Փորձագիտական խմբի համակարգող

14.06.2022թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանը (նախկինում՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ) հիմնադրվել է 1934թ.-ին, հիմնադրման առաջին իսկ տարվանից Հայաստանի հյուսիսային մասում ծավալել և շարունակում է ծավալել կրթական, գիտական և մշակութային գործունեություն: 1949թ.-ին Կառավարության հատուկ որոշմամբ մանկավարժական ինստիտուտը կոչվել է հայ մեծ լուսավորիչ Միքայել Նալբանդյանի անունով: 1960թ.-ին մանկավարժալան ինստիտուտը դարձել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղ:

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտն իր գործունեության սկզբնական շրջանում ունեցել է ընդամենը երեք բաժին՝ ֆիզիկամաթեմատիկական, լեզվագրական, պատմական, և շուրջ 100 ուսանող ու 16 դասախոս:

ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 1031 –Ն որոշմամբ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը վերակազմավորվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի, որն էլ պետական գրանցում է ստացել 2016 թվականի դեկտեմբերի 2-ին:

ՇՊՀ-ն արդեն տվել է շուրջ 30.000 շրջանավարտ, որոնք կազմում են Շիրակի մարզի հանրակրթության ոլորտի կադրերի 80%-ից ավելին:

Կրթություն. ՇՊՀ-ն ունի 4 ֆակուլտետ՝ Բնագիտամաթեմատիկական, Մանկավարժության, Հումանիտար գիտությունների և արվեստի, Սոցիալական գիտությունների և իրավունքի, 14 մասնագիտական ամբիոն (այդ թվում՝ հատուկ կարգավիճակով Ռազմական ամբիոնը), որոնք ուսումնական գործընթացը կազմակերպում են բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով: Բակալավրիատի առկա համակարգում իրականացվում է 35, հեռակա համակարգում՝ 22, մագիստրատուրայի՝ 31 կրթական ծրագրեր, իսկ հետազոտողի կրթական ծրագրերն իրականացվում են 4 բնագավառում: ՄՈՒՀ-ն ունի շուրջ 2500 ուսանող:

2006թ.-ից ԳՊՄԻ-ում սկիզբ են առել ուսումնական գործընթացի բարեփոխումներ, որոնց նպատակն է եղել նպաստել ԵԲԿՏ-ին (EHEA) ինտեգրմանը՝ անցնելով ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի:

ՇՊՀ մասնագիտական 14 ամբիոնների աշխատանքներում ներգրավված են՝ 1 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, շուրջ 20 գիտությունների դոկտորներ և պրոֆեսորներ, 200 գիտությունների թեկնածուներ և դոցենտներ:

Հետազոտություն. Հետազոտության ոլորտում ՇՊՀ-ի հավակնությունները ներկայացված են 2015-2019թթ. ՌԾ-ում: Հետազոտական գործունեության միջազգայնացման և ուսումնառության հետ կապի ապահովման նպատակով ՄՈՒՀ-ն իր առջև առաջադրել է հետևյալ խնդիրները՝

1. երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործունության պլանավորմամբ հետազոտությունների իրականացման և զարգացման ապահովում,

2.կրթական և գիտական գործընթացների արդյունավետ փոխկապակցվածության ապահովում,

3.հետազոտական աշխատանքների միջազգայնացման կարգավորում և խթանում,

4.գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ապահովում:

ՇՊՀ-ում գործում է հետազոտական 3 լաբորատորիա (տեսական ուղղվածության Նանո և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիա, Ռենտգենյան հետազոտությունների լաբորատորիա և Կենսատեխնոլոգիայի լաբորատորիա), որոնցից մեկը՝ բազային:

ՇՊՀ-ում իրականացվող հետազոտությունները հիմնականում հիմնարար բնույթ են կրում, իսկ դրանց արդյունքները վավերացվում և մասնագետներին են ներկայացվում գիտական ժողովածուների, մենագրությունների, պարբերականների, գրքերի և համացանցային հնարավորությունների միջոցով:

Հետազոտության իրականացումը ՄՈՒՀ-ում խթանելու նպատակով ներդրվել են ներքին դրամաշնորհներ, ՇՊՀ աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման մեխանիզմներ:

Միջազգայնացում. Միջազգայնացման ոլորտում ՇՊՀ-ն տեսլական ունի դառնալու հաստատություն, որի գործունեությունը միտված է եվրոպական կրթական համակարգին ինտեգրմանը և գիտակրթական համակարգի միջազգայնացմանը: Տեսլականին հասնելու նպատակով ՄՈՒՀ-ն իր ՌԾ-ում խնդիր է առաջադրել՝

1. Բարելավել արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող ընթացակարգերը և մեխանիզմները:
2. Մշակել և ներդնել արտաքին կապերի բաժնի ՈԱ քաղաքականություն և ընթացակարգեր:
3. Վերանայել և բարելավել արտաքին կապերի բաժնի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը:

ՇՊՀ-ի միջազգայնացմանը նպաստող գործընթացները հիմնականում իրականացվել են միջազգային համագործակցության TEMPUS, ERASMUS MUNDUS, ERASMUS+ ծրագրերի շրջանակներում: Շնշված ծրագրերի շրջանակում ՄՈՒՀ-ում ստեղծվել է բավականին հարուստ նյութատեխնիկական բազա ու վերապատրաստված աշխատակազմ, ներդրվել են արդիական այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք են սոցիալական աշխատանքը, կայուն տուրիզմի զարգացումը, կենսատեխնոլոգիան: Հիմնվել են կառուցվածքային նոր ստորաբաժանումներ:

Վերջին 3 տարիների ընթացքում ՇՊՀ-ն մասնակցել է ՄՈՒՀ-երի կարողությունների զարգացմանն ուղղված միջազգային համագործակցության 5 ծրագրերի՝ ARMENQA, BOOST, AbioNet, SMARTI և WBL4JOB:

Որակի ապահովում. ՇՊՀ-ում որակի ապահովման ներքին համակարգի նպատակն է ապահովել բոլոր գործընթացների շարունակական բարելավումն ու որակի մշակույթի ձևավորումը: ՈԱ կենտրոնը ձևավորվել է 2011թ.-ին: Կենտրոնն իր գործունեությունը

նպատակաուղղել է ՈԱ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ակտիվ ներգրավմանը: Ձևավորվել են ամբիոնների ՈԱ հանձնախմբեր:

ՇՊՀ-ի կառուցվածքային փոփոխության արդյունքում ՈԱԿԿ-ն վերափոխվել է ԳՔՈԱԿԿ-ի, որը գործում է 2018 թ.-ի մայիսի 4-ից: Այն ստեղծվել է նախկին ՈԱԿԿ-ի բազայի հիման վրա՝ ներառելով նախկին Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի որոշ գործառույթներ և ընդլայնելով դրանք:
Ներկայումս ՇՊՀ-ում արդեն գործում են ՈԱ մի շարք մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են ՇՊՀ-ի կառավարման համակարգի և վարչական կառույցների, ՄՈՒՀ-ում ստացած կրթության, ՇՊՀ-ի մասնագիտական և կազմակերպչական վարկանիշների, ՄԿԾ-ների, ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների, ՈւՕ ու վարչական կազմի, ուսանողների գնահատման համակարգի, մանկավարժական պրակտիկայի և ուսումնառության ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը 02.12.2016թ. փոխել է իր իրավակազմակերպական ձևը՝ դառնալով «Մ. Նալբանդյանի անվան Շիրակի պետական համալսարան» հիմնադրամ: ՄՈՒՀ-ը, հաշվի առնելով համալսարան դառնալու փաստը և նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքում փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվությունները, վերանայել է իր առաքելությունը, որն ամրագրվել է ՀԽ-ի 23.03.2018 թ.-ի նիստին ներկայացված ռեկտորի՝ 2016-2017 ուստարվա հաշվետվության մեջ: ՄՈՒՀ-ի նախորդ առաքելությունն է եղել ազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններով և անհրաժեշտ գիտելիքներով օժտված մասնագետների պատրաստումը: 2016թ.-ի հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը նշել է, որ ՄՈՒՀ-ի առաքելությունը եղել է ընդհանրական և ցույց չի տվել նրա առանձնահատկությունը:

Վերանայված առաքելությամբ ՇՊՀ-ն ցանկանում է դառնալ ապագայի հայկական համալսարան՝ հիմնված գիտական, կրթական, տնտեսական, մշակութային ու սոցիալական գործընթացների միասնական սկզբունքների, հայրենասիրական ու հումանիստական համընդգրկուն արժեքների վրա: Ծառայել տարածաշրջանի (Շիրակի մարզ, Ջավախքի հայ համայնքներ, իսկ առանձին մասնագիտությունների դեպքում՝ նաև Սփյուռք) գիտակրթական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումներին՝ ապահովելով համապատասխան մասնագետների որակյալ պատրաստումը՝ գիտության և կրթության զարգացման միջազգային չափանիշներին և ՀՀ գիտակրթական քաղաքականությանը ներդաշնակ՝ աջակցելով արտաքին ու ներքին շահառուների համապատասխան կարիքների բավարարմանը: Պետք է փաստել, որ վերանայված առաքելությունը հավակնոտ է, նամանավանդ գիտության և կրթության զարգացման միջազգային չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ՇՊՀ-ն հիմնականում պատրաստում է մասնագետներ՝ Շիրակի մարզի կարիքներին համապատասխան:

ՄՈՒՀ-ի ՌԾ-ն նախատեսված է 2015-2019թթ.-ի համար, պետք է նշել, որ ՇՊՀ-ն դեռևս գործարկում է այս ՌԾ-ն: ՌԾ-ի իրականացման համար ՄՈՒՀ-ը մշակել էր նաև իրականացման պլան-ժամանակացույց, որտեղ ներկայացված են իրականացվող քայլերը, ժամանակացույցը, պատասխանատուները, ֆինանսական հատկացումները և այլն, պետք է նաև փաստել, որ պլան-ժամանակացույցով սահմանված ոչ բոլոր գործողություններն են իրականացվել ՄՈՒՀ-ի կողմից:

Ըստ ինքնավերլուծության, ինչպես նաև փորձագիտական այցի ընթացքում ներկայացված տեղեկատվության՝ 2017թ.-ին ռեկտորի հրամանով ձևավորվել է ՇՊՀ-ի ՌԾ-ն մշակող հանձնախումբ, որում ներառված են եղել համապատասխան գործատուներ և ոլորտի մասնագետներ, իսկ 2018թ.-ին հաստատվել է ՇՊՀ-ի զարգացման ՌԾ-ի մշակման, իրականացման և հաշվետվողականության հայեցակարգը: 2018թ.-ի հունվարից ձեռնարկվել է ՌԾ-ի մշակման գործընթաց՝ ըստ հայեցակարգի: Աշխատանքներն անավարտ են մնացել՝ պայմանավորված ՄՈՒՀ-ում տեղի ունեցած գործընթացներով, ինչպես նաև ռեկտորի հրաժարականով:

ՇՊՀ-ն ներկայումս տրամադրում է կրթություն բակալավրի, մագիստրատուրայի և հետազոտողի կրթական աստիճաններում, համապատասխանաբար՝ ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ աստիճաններում: ՇՊՀ-ն իր գործունեությամբ և ՄԿԾ-ների իրականացմամբ առաջնորդվում է ՈԱՇ-ի նույն բնութագրիչներով՝ գիտելիք, կարողություն, հմտություն: ՄՈՒՀ-ում ներկայումս իրականացվում է առկա բակալավրի 39, հեռակա բակալավրի 32, մագիստրոսի 26 և հետազոտողի 20 (ըստ 6 ուղղությունների) ծրագրեր: ՄՈՒՀ-ն ունի նաև ավագ դպրոց և քոլեջ:

1.2 **ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:**

Արտաքին շահակիցների կարիքները ՄՈՒՀ-ում վեր են հանվում հարցումների, հանդիպումների, քննարկումների միջոցով: Գործատուներն ընդգրկված են կառավարման խորհրդում և այլ խորհուրդների կազմերում: Լինելով նշված օղակների լիիրավ անդամներ՝ ըստ գործող ընթացակարգերի, նրանք մասնակից են քննարկումներին, արտահայտում են իրենց կարծիքը, ներկայացնում առաջարկներ և ապահովում մասնակցություն որոշումների կայացմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցները քիչ դեպքերում են առաջարկներ ներկայացնում՝ առանձնացնելով դրանց իրականացման քայլերի հաջորդականությունը:

ՇՊՀ-ի ներքին շահակիցների կարիքների վերհանման հիմնական մեխանիզմները տարատեսակ հարցումներն են. դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, դասախոսի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների գնահատումը, ՇՊՀ-ի ՊԴ կազմի կողմից ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի և վարչական կառույցների գնահատումը և այլն: Պետք է փաստել, որ կարիքների վերհանմանն ուղղված հարցումների արդյունքները դեռևս ռազմավարական պլանավորման չեն վերածվել: Փորձագիտական այից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում նոր են մեկնարկում ՌԾ-ի մշակման աշխատանքները, դեռևս առկա չէ նախագծային տարբերակը:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ՌԾ-ի իրականացման ընթացքը գնահատելու համար մշակվել է 2015-2019թթ.-ի ՌԾ-ի իրականացման ժամանակացույց-պլանը, որը համարվել է ՄՈՒՀ-ի երկարաժամկետ

ծրագիրը: Այս ծրագրի հիման վրա կազմվել են միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը: Ծրագրերի մշակումն իրականացվել է վերևից ներքև սկզբունքով հետևյալ հաջորդականությամբ՝ համալսարանի զարգացման ՌԾ, ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույց, որի հիման վրա ֆակուլտետների և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային պլաններ, ամբիոնների աշխատանքային պլաններ և դասախոսների անհատական աշխատանքային պլաններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՇՊՀ-ն ՌԾ-ի գնահատումը համարում է ռեկտորի տարեկան հաշվետվությունները: ՌԾ-ի առանձին կատարողական՝ սահմանված ցուցիչների գնահատմամբ, ՄՈՒՀ-ում առկա չէ: Փորձագիտական խումբը նշում է, որ որոշ դեպքերում դժվար է ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ գտնել ներկայացվող կատարողականների և պլան-ժամանակացույցերում նկարագրված վերջնարդյուքների միջև կապը, քանի որ առկա են ձևաչափային տարբերություններ:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման արդյունքում տրամադրված խորհրդատվության հիման վրա ՄՈՒՀ-ը վերանայել է իր առաքելությունը և առավել ընդհանրականից այն դարձրել ՇՊՀ-ի առանձնահատկությունը շեշտադրող: Նշյալի շրջանակում գովարժան է, որ ՄՈՒՀ-ը ձգտում է ծառայել տարածաշրջանի (Շիրակի մարզ, Ջավախքի հայ համայնքներ, իսկ առանձին մասնագիտությունների դեպքում՝ նաև Սփյուռք) գիտակրթական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումներին, ապահովել համապատասխան մասնագետների որակյալ պատրաստումը՝ գիտության և կրթության զարգացման միջազգային չափանիշներին և ՀՀ գիտակրթական քաղաքականությանը ներդաշնակ՝ աջակցելով արտաքին ու ներքին շահառուների համապատասխան կարիքների բավարարմանը: Սակայն, վերոնշյալի համատեքստում ՇՊՀ-ի շրջանավարտները հիմնականում բավարարում են մարզի կարիքները, և հաշվի առնելով ՄՈՒՀ-ի ռեսուրսները՝ գիտության, կրթության զարգացման միջազգային չափանիշների ապահովումը, թերևս հավակնոտ նպատակադրում է համալսարանի համար, ուստի առավել իրագործելի առաքելության պարագայում ՄՈՒՀ-ն առավելապես միտված կլինի իր որդեգրած տեսլականի և սահմանած առաքելության իրականացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՄՈՒՀ-ը մշակել է ՇՊՀ-ի զարգացման ՌԾ-ի մշակման, իրականացման և հաշվետվողականության հայեցակարգ, սակայն անհրաժեշտություն կա տարանջատել արտաքին շահակիցներին՝ հիմքում ունենալով աշխատաշուկայում նրանց գրված դիրքը:

Անհանգստացնող է, որ 2015-2019թթ. ՌԾ-ի գործողության ժամկետն ավարտվել է և ՇՊՀ-ի համար այն դեռևս պլանավորված նպատակադրումների իրագործման պլան է ծառայում՝ վտանգելով ՄՈՒՀ-ի՝ առկա իրողություններին համահունչ զարգացմանը: Ինչ վերաբերում է ՌԾ-ի պլան-ժամանակացույցով սահմանված գործընթացների արդյունավետության գնահատմանը, ապա նշյալ համատեքստում փորձագիտական խումբն առանձնացնում է, որ ոչ բոլոր պլանավորված գործողություններն են իրականացվել և դրանց

գնահատականներն առկա չեն՝ խոչընդոտելով նոր ՌԾ-ում չիրագործված կարևոր գործընթացների ներառմանը: Փորձագիտական խումբը լիահույս է, որ դեռևս 2018թ.-ից մեկնարկած նոր ՌԾ-ի մշակման աշխատանքները կավարտվեն, և ՇՊՀ-ն իր կրթական գործունեությունը կծավալի նոր ՌԾ-ին համապատասխան:

Դրական է դիտվում, որ ՇՊՀ-ն իր գործունեությամբ և ՄԿԾ-ների իրականացմամբ առաջնորդվում է ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ աստիճանների բնութագրիչներով և իրականացնում է առկա բակալավրի 39, հեռակա բակալավրի 32, մագիստրոսի 26 և հետազոտողի 20 (ըստ 6 ուղղությունների) ծրագրեր՝ նպաստելով տարածաշրջանի կրթական կարիքների բավարարմանը:

Փորձագիտական խումբը դրական է դիտում, որ ՄՈՒՀ-ում արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանման համար իրականացվում են հարցումներ, տարբեր քննարկումներ, ուր ներկայացվում են կարծիքներ, առաջարկներ: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ քիչ են դեպքերը, երբ ներքին և արտաքին շահակիցները հանդես են գալիս առանձին առաջարկներով՝ նախանշելով դրանց իրագործման քայլերի հաջորդականությունը, ինչի պարագայում նրանք ևս կունենան զգալի մասնակցություն ՄՈՒՀ-ի սահմանած նպատակների և խնդիրների իրագործմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ ՇՊՀ-ի ներքին շահակիցների կարիքների վերհանման հիմնական մեխանիզմները տարատեսակ հարցումներն են և կարիքների վերհանմանն ուղղված հարցումների արդյունքները դեռևս ռազմավարական պլանավորման մեջ ներառելիություն չունեն՝ միտված հարցումների իրականացման արդյունքում հետագա բարելավումների արդյունավետությանը:

Կարևորվում է, որ ՄՈՒՀ-ի երկարաժամկետ ծրագրի՝ ՌԾ-ի հիման վրա կազմվել են միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որտեղ պահպանված է վերևից ներքև սկզբունքը՝ նպաստելով ՌԾ-ի պլան-ժամանակացույցով սահմանված գործողությունների տրամաբանական հաջորդականությանը: Սակայն, միևնույն ժամանակ անհանգստացնող է, որ առկա չէ ըստ սահմանված ցուցիչների գնահատմամբ ՌԾ-ի կատարողական, բացի այդ, առանձին ստորաբաժանումների աշխատանքային պլաններն ու դրանց կատարողականները համադրելի չեն, ավելին՝ առկա ձևաչափային տարբերություններով պայմանավորված դժվար է գտնել հաշվետվության մեջ նկարագրվող կատարողականների և պլան-ժամանակացուցերում նկարագրված վերջնարդյուքների միջև կապը: Արդյունքում տուժում է ՌԾ-ի գնահատման արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ն իր նպատակադրումներն ու խնդիրներն իրագործում է սահմանված առաքելության համատեքստում՝ բավարարելով տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջները, ներքին և արտաքին շահակիցների կարիքները արտացոլվում են ՄՈՒՀ-ի նպատակներում և առաջադրված խնդիրներում, ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման որոշ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն բավարարում է Չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՇՊՀ-ն կառավարվում է ՀՀ օրենսդրության և ՇՊՀ-ի կանոնադրության համապատասխան՝ ինքնակառավարման հիման վրա: Ըստ կանոնադրության՝ ՇՊՀ-ի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, ՇՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի (ՀԽ), ՇՊՀ-ի գիտական խորհրդի (ԳԽ) և ռեկտորի գործառույթների իրականացմամբ: ՇՊՀ-ի գործունեությունն իրականացնող մարմիններն են՝ ՀԽ, ռեկտոր, ԳԽ, ռեկտորատ: ՇՊՀ-ի ՀԽ-ն կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմին է, որի կազմը ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատվել է 08.12.2021թ.-ին: Հարկ է նշել, որ, պայմանավորված ՀԽ-ի որոշ անդամների լիազորությունների դադարեցմամբ, 18.11.2020թ.-ին ՄՈՒՀ-ի ՀԽ-ն լուծարվել է, և շուրջ մեկ տարի ՇՊՀ-ն իր գործունեությունը ծավալել է առանց ՀԽ-ի:

ԳԽ-ն ուսումնամեթոդական, գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է: 2019թ.-ին ՀԽ-ի որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել է գործող ԳԽ-ի գործունեությունը և ձևավորվել է նոր կազմ:

ՇՊՀ-ի ռեկտորը ղեկավարում է համալսարանի կրթական, գիտական, արտադրական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ գործունեությունը, կազմակերպում է ՇՊՀ-ի ԳԽ-ի, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները, հրավիրում է ԳԽ-ի, ռեկտորատի նիստեր, տարեկան հաշվետվություն է ներկայացնում ՇՊՀ-ի ՀԽ-ին, կազմակերպում և ապահովում է ՇՊՀ-ի ՀԽ-ի և ԳԽ-ի որոշումները և կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ: ՇՊՀ-ի ռեկտորի թափուր պաշտոնի ընտրությունը տեղի է ունեցել 2022թ. փետրվարի 19-ին և փորձագիտական այցի ընթացքում՝ 2022թ. մարտի 17-ին ՀՀ կառավարության նիստում հաստատվել է ՇՊՀ հիմնադրամի ռեկտորի ընտրության արդյունքները: Մինչ այդ՝ ՇՊՀ-ն շուրջ 3 տարի ունեցել է ռեկտորի ժ/պ: ՇՊՀ-ի ՌԾ-ի

գործողության ժամկետը լրացել է, և փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կառավարման ասպեկտում ռեկտորն իրականացնում է իրավիճակային կառավարում, նոր իրողություններին համահունչ առկա չի եղել որևէ ուղղորդող երկարաժամկետ կամ կարճաժամկետ պլան։

ՇՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ 4 ֆակուլտետները, 13 ամբիոնները, հատուկ կարգավիճակ ունեցող Ռազմական ամբիոնը, 4 կենտրոնները, բաժինները, քոլեջը, ավագ դպրոցը։ Նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագիտական խմբի կողմից օպերատիվ կառավարման համակարգում դիտարկվել էր կառավարչական ռեսուրսների ոչ արդյունավետ տեղաբաշխում, մասնավորապես՝ ուսումնական գործունեության, գիտության, արտաքին կապերի կառավարման, ուսումնամեթոդական վարչության պետի պարտականությունների կենտրոնացում։ Բացի այդ, փորձագիտական խումբը գիտական ստորաբաժանման բացակայությունը ռիսկային էր համարել ՄՈՒՀ-ի առաքելության ամբողջական իրականացման համար և տրամադրել խորհրդատվություն՝ բարեփոխել կազմակերպական կառուցվածքը՝ այն հարմարեցնելով ռազմավարական խնդիրների իրականացմանը։ Ըստ այդմ՝ ԳՊՄԻ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրով (ԹՎԳԾ) նախատեսվել էր ստեղծել առանձին գիտության և հետազոտության բաժին։ 2017թ. ՇՊՀ-ն կառավարման համակարգում իրականացրել է կառուցվածքային փոփոխություններ, մասնավորապես՝ որոշ ֆակուլտետներ և ամբիոններ միավորվել են, ինչպես նաև վերափոխվել են Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնը (ԳՔՈԱԿԿ), ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնը (ՈՒԳԿԿ), Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնը (ԱՀՀԿԿ), ձևավորվել է Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժինը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս էլ ՄՈՒՀ-ի ղեկավար կազմը կառուցվածքային բարելավումների անհրաժեշտություն է տեսնում։

2018թ.-ից գործում է ԳՔՈԱԿԿ-ն, որը ստեղծվել է նախկին ՈԱԿԿ-ի բազայի հիման վրա՝ ներառելով նախկին Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի որոշ գործառույթներ։ Հարկ է նշել, ԳՔՈԱԿԿ-ի ձևավորման արդյունքում որակի ապահովման գործընթացներում ներդրվել է հետազոտական բաղադրիչ։ ԳՔՈԱԿԿ-ի ներկայիս կառուցվածքով առանձնացված են որակի ապահովման պատասխանատու և գիտական քաղաքականության և հետբուհական կրթության պատասխանատու հաստիքները, սակայն կենտրոնի մյուս աշխատակիցները, ըստ իրենց պատասխանատվությունների շրջանակի, հաշվետու են միայն կենտրոնի տնօրենին։

ՇՊՀ-ն, իր կառավարչական գործունեության իրականացման շրջանակում ապահովված է մարդկային և նյութական ռեսուրսներով։ Ինչ վերաբերում է ֆինանսական ռեսուրսներին, ապա հարկ է նշել, որ 2020թ. ՄՈՒՀ-ի գործունեությունից ստացվող փաստացի մուտքերի բաշխվածությամբ զգալի՝ 52,5% մուտքը բաժին է ընկնում պետական ֆինանսավորմանը, 46,8%-ը՝ ուսման վճարներին, 0,7%-ը՝ վերապատրաստումներին և այլ գործունեությանը։ Բացի այդ, եկամուտների և ծախսերի նախահաշվով բյուջեի բաշխումն

ամբողջությամբ չի արտացոլում ՄՈՒՀ-ի ռազմավարական ուղղությունները, բայց միևնույն ժամանակ ծախսերը հաշվարկված են ըստ գործունեության որոշակի ուղղությունների, որոնցից կառուցվածքային տեսանկյունից 2020թ. փաստացի կատարողականի տվյալներով գերակշռում են ՄԿԾ, ՊԴ և ՈՒՕ կազմի ծախսերը՝ 47,5%, ենթակառուցվածքներ և ռեսուրսներ՝ 23,4%, կառավարում և վարչարարություն՝ 18,6%: Մնացած ուղղությունները (ուսանողներ, հետազոտություն և զարգացում, արտաքին կապեր և միջազգայնացում, ՈԱ ներքին համակարգ) միասին վերցրած կազմում են ընդամենը ծախսերի 10,5%-ը: 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի տվյալներով դասավանդման և ուսումնառության ծախսերը ավելացել են 7,9%-ով՝ կազմելով 55,4%, հետազոտության և զարգացման ծախսերը ևս որոշակի աճման միտում ունեն՝ կազմելով շուրջ 3%: Հարկ է նշել, որ 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվով դրամական միջոցների ելքերի հոդվածներից ամենամեծ տեսակարար կշիռն ունի աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված միջոցների հոդվածը՝ կազմելով շուրջ 80%:

2.2 ՄՈՒՀ_ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՇՊՀ-ի կանոնադրությունը և գործող կանոնակարգերը հնարավորություն են տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցություն ունենալ իրենց առնչվող որոշումների կայացմանը: ՇՊՀ-ի ՀԽ-ում պրոֆեսորադասախոսական կազմն ու սովորողները յուրաքանչյուրն ունի 25% մասնակցություն, ԳԽ-ի ամդամների 25%-ը սովորողներ են, ներգարվված են գիտությունների ամենաերիտասարդ և ամենատարեց դոկտորները, գիտական աստիճան և կոչում ունեցող այլ դասախոսներ: Ֆակուլտետային խորհուրդներում ևս պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական աշխատակիցներն ու սովորողներն ունեն 25% ներկայացվածություն: ՇՊՀ-ի դասախոսները մասնակցում են նաև ամբիոնների ուսումնամեթոդական, գիտահետազոտական գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՀԽ-ում և ԳԽ-ում նախկինում ներգրվված են եղել նույն ուսանողները, ներկայումս ուսանողները տարբեր խորհուրդներում տարբերակվել են: ՈՒսանողներն ակտիվ մասնակցություն ունեն ՀԽ-ի, ԳԽ-ի, ՖԽ-ի նիստերին՝ վեր հանելով իրենց հուզող հարցերը: Դասախոսներն առավել քիչ մասնակցություն են ցուցաբերում իրենց առնչվող հարցերի քննարկմանը, որոշումների կայացմանը: Դա է փաստում նաև այն, որ ՇՊՀ-ի ղեկավարության կողմից բաց քննարկումներից անցկացված գործընթացներից ուսանողների շրջանում գուհունակությունը՝ 75% է, դասախոսների շրջանում՝ 44% :

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Որպես երկարաժամկետ պլանավորման գործիք, ՇՊՀ-ն իր առաքելությանն ու նպատակներին համախատասխան մշակել և իրագործել է ՇՊՀ-ի զարգացման 2015-2019թթ. ՌԾ-ն և 2015-2019թթ. ՌԾ-ի աշխատանքային պլանը, ընդ որում՝ ՌԾ-ի աշխատանքային պլանը ՄՈՒՀ-ի կողմից դիտարկվում է որպես միջնաժամկետ պլան: ՄՈՒՀ-ում ՌԾ-ի

իրականացման և մշտադիտարկման համար հիմք են յուրաքանչյուր նպատակի և խնդրի իրականացման համար աշխատանքային պլանում ամրագրված արդյունքների գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները հինգ տարվա կտրվածքով: Հարկ է նշել, որ 2015-2019թթ. ՌԾ-ի աշխատանքային պլանով ըստ նպատակից բխող խնդիրների առանձնացված են դրանց իրականացման քայլերը, ժամանակացույցը, պատասխանատուները, ֆինանսական հատկացումները, ակնկալվող արդյունքները: Աշխատանքային պլանով սահմանված ակնկալվող արդյունքների ձեռքբերման վերաբերյալ քանակական և որակական գնահատականներ և ամփոփումներ առկա չեն:

2015-2019թթ. ՌԾ-ի գործողության ժամկետի ավարտից առ այսօր ՄՈՒՀ-ը չունի ՌԾ: Առկա չէ նաև նախորդ ՌԾ-ի առանձին կատարողական: ՌԾ-ի կատարողականը գնահատվում և արդյունքները ներկայացվում են ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ ռեկտորի տարեկան հաշվետվություններում: Այդ հաշվետվություններում ներկայացված են տարբեր վերլուծություններ, արդյունքներ, ձեռքբերումներ, պլանավորումներ, որոնք ընդհանուր առմամբ բխում են ՌԾ-ից: Առանձնացված չեն ակնկալվող արդյունքների ձեռքբերման հստակ և չափելի ցուցիչներ:

Նախորդ հավատարմագրման արդյունքումՄՈՒՀ-ի կողմից կազմված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը դիտարկելով որպես միջնաժամկետ պլանի տարատեսակ՝ ինչպես փորձագիտական դիտարկումների, այնպես էլ փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ այդ ծրագրով Կառավարում և վարչարարություն Չափանիշի բարելավմանն ուղղված միջոցառումները կառավարչական տեսույթի հիմնական շրջանակում չեն իրականացվել, մասնավորապես՝ ՌԾ-ի իրականացման ռիսկերի կառավարում, կառավարման գործընթացների արդյունավետության գնահատում, կառավարման գործընթացում արտաքին շահառուների ներգրավվածություն, ներքին շահառուների գործունեության ակտիվացում: Առկա են նաև պլանների և դրանց կատարողականների միջև շեղումներ: Ըստ 2018թ.«ՇՊՀ հիմնադրամի եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության» ընթացակարգի, յուրաքանչյուր տարվա նախահաշվի կազմման համար հիմք են նախորդ տարվա փաստացի տվյալները և տվյալ տարվա համար կատարված տնտեսագիտորեն հիմնավորված կանխատեսումները և հաշվարկները: ՇՊՀ-ի կառուցվածքով աշխատակազմի ղեկավար պրոռեկտորի ղեկավարության ներքո գործում է Ֆինանսատնտեսագիտական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժինը, որի տիրույթում է վերլուծել նախորդ տարիների փաստացի տվյալները, հնարավոր զարգացումները, ամփոփել եկամուտների և ծախսերի մասով առանձնացված փաստացի տվյալների վերլուծության արդյունքները, գործոնային վերլուծության արդյունքները: Միևնույն ժամանակ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ի գործառնական ֆինանսական պլան հանդիսացող եկամուտների և ծախսերի նախահաշիվների և դրանց փաստացի կատարողականների միջև տարեկան կտրվածքներով առկա են զգալի շեղումներ՝ գերակատարումների և թերակատարումների տեսքով:

ՄՈՒՀ-ում առկա են ֆակուլտետների դեկանների կողմից առաջադրված տեսլականներ, առանձին ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլաններ, հաշվետվություններ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ օրինակ՝ Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի աշխատանքային պլանը չի բխում ֆակուլտետի ՌԾ-ից, առկա չեն ֆակուլտետների ՌԾ-ների կատարողականներ: Բացի այդ, հաշվետվությունները, որպես պլանների կատարողականներ, ընդհանուր առմամբ չեն ներառում աշխատանքային պլաններին համարժեք քանակական և որակական գնահատականների ամփոփումներ (որոշակի առումով առանձնանում են մանկավարժության ֆակուլտետի տարեկան հաշվետվությունները, որոնք ներառում են վերլուծությունների արդյունքում ամփոված գնահատականներ, հստակ ձևակերպված խնդիրներ): Որպես կարճաժամկետ պլաններ են դիտարկվում ՄԿԾ-ների ուսումնական պլանները, առաարկաների ԹՕՊ-երը, որոնց արդյունավետության գնահատման վերաբերյալ ևս ամփոփումներ առկա չեն:

Մշտադիտարկումն իրականացվում է նաև դասալսումների, արտաքին և ներքին շահակիցների շրջանում հարցումների իրականացման, ներքին և արտաքին շահակիցների հետ հանդիպումների եղանակով: Այցից պարզ դարձավ, որ վերոնշյալ եղանակներով վեր հանված, ինչպես նաև բոլոր հաշվետվությունների վերլուծությունների արդյունքները չեն ներդրվում հաջորդ տարվա համապատասխան պլաններում:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Ըստ ինքնավերլուծության, ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող հիմնական գործոնները դիտարկելիս ավելի շատ առանձնանում են արտաքին գործոնները (ժողովրդագրական պատկեր, արտաքին շահակիցների կարծիք և պատկերացում, օրենսդրական դաշտ), քան ներքին գործոնները (նյութական և մարդկային ռեսուրսներ, ներքին շահակիցների կարծիք և պատկերացում): Ստացվում է՝ ՄՈՒՀ-ում առկա է գործունեության վրա ազդող արտաքին ռիսկերի գերազանցում ներքին ռիսկերի նկատմամբ, ինչն առավելապես ընդգծում է հավաստի տվյալների վերհանման և կիրառման անհրաժեշտությունը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ արտաքին միջավայրի վերլուծությունները սակավ են:

ՇՊՀ-ում առկա է գործունեության հետ կապված տեղեկատվության հավաքագրման և վերլուծության հստակ մեխանիզմներ: ՄՈՒՀ-ի ԳՔՈԱԿԿ-ն իրականացնում է տարբեր հետազոտություններ, բազմաթիվ հարցարանների միջոցով հարցումներ, հաշվարկում է տարբեր ԳԱՑ-եր (գործունեության արդյունավետության ցուցանիշներ): Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առկա վերլուծությունները հիմնականում սահմանափակվում են ըստ տարիների թվային կամ տոկոսային համեմատությունների արձանագրմամբ, բացակայում են պատճառահետևանքային կապերի դուրսբերումը, ընդհանրական և տեղային գնահատականները՝ դրական կամ բացասական միտումներով ու դրանց հաջորդող պլանային լուծումներով: Հաջորդ ժամանակահատվածի միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններում հարցումների ամփոփված արդյունքների քանակական և

որակական ցուցանիշների ներդրման դեպքերը տեսանելի չեն։ Հաջորդիվ՝ հաշվարկված արդյունավետության ցուցանիշները համադրվում են տարեկան կտրվածքով, վերլուծությունները հիմնականում վերաբերում են տարեկան կտրվածքով տոկոսային տատանումներին։ Հստակ չէ, թե յուրաքանչյուր տարվա վերլուծությունն ինչպե՞ս է կիրառվում ամեն հաջորդ տարվա պլանավորումն առավել արդյունավետ իրականացնելու համար։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ առկա չեն սահմանված օպտիմալ, համադրելի նորմատիվներ յուրաքանչյուր ԳԱՑ-ի համար (պետական մակարդակով, ՄՈՒՀ-ի մակարդակով)։ Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ի ղեկավարության ուշադրության կենտրոնում է կրթական ծրագրերից, ՊԴԿ-ից, լսարանային, գրադարանային ռեսուրսներից, կառավարման համակարգից և վարչական կառույցների աշխատանքից բավարարվածության գնահատականները, որոնց կապակցությամբ առաջիկայում նախատեսվում է մշակել հստակ ցուցիչներ, վերանայել պլանավորման բաղադրիչները։

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ՇՊՀ-ում կառավարչական տարբեր գործընթացներ գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի տարբեր փուլերում։ 2015-2019թթ. ՌԾ-ն պլանավորվել և իրականացվել է. վերջինիս գործողության ժամկետի ավարտին առկա չեն ՌԾ-ի գնահատումների այն ամփոփումները, որոնք պետք է դրվեն 2022-2027թթ. ՇՊՀ-ի նոր ՌԾ-ում։ Փորձագիտական խումբը դիտարկել է նոր ՌԾ-ի աշխատանքային տարբերակը, որտեղ զետեղված չէին նախորդ ծրագրի հիմնական արդյունքները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2015-2019թթ. ՌԾ-ով սահմանված ոչ բոլոր նպատակադրումներն են իրականացվել, ավելին՝ 2016թ. ՇՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրով պլանավորված բարելավմանն ուղղված ոչ բոլոր միջոցառումներն են իրականացվել։ Որոշակի ժամանակահատվածի դրությամբ (2016-2017 ուստարի) բարելավման ծրագրի որոշ միջոցառումներ համարվել են ոչ իրատեսական, այնուհետև, 2018-2019 ուստարում ՄՈՒՀ-ը հիմք է ընդունել բարելավման ծրագրի նախկին հաստատված տարբերակը։ Փաստ է՝ 2015-2019թթ. ՌԾ-ի ՊԻԳԲ շրջափուլը կանոնավոր չի գործել։ ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ների ՊԻԳԲ շրջափուլը ևս հստակ չի գործում, հատկանշական է, որ ՇՊՀ-ի ոչ բոլոր ՄԿԾ-ներով է ընդունելություն կատարվում, բացի այդ էլ, նոր ներդրված ՄԿԾ-ները քիչ դիմորդներ են ապահովում։

Փորձագիտական խումբը ընդգծում է, որ ՄՈՒՀ-ի կառավարման գործընթացներում հիմնական շեշտը դրված է գործընթացների պլանավորման և իրականացման վրա, ընդ որում՝ տարբեր ասպեկտներով արձանագրվում են կատարողականների և պլանների շեղումներ։ Կառավարչական գործընթացների գնահատումներն ու բարելավումները տեսանելի չեն։

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ՄԿԾ-ների որակի, մշտադիտարկման, գնահատման ու պարբերաբար վերանայման ընթացակարգերի և մեխանիզմների մշակումն ու կիրառումը ՇՊՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է: Համալսարանում գործում է 2013թ. հաստատված ԳՊՄԻ-ի ՄԿԾ-ների մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման քաղաքականությունը, որի նպատակներից է ԳՊՄԻ-ի առաքելությանը և նպատակներին համահունչ ՄԿԾ-ների մշակումն ու իրականացումը: Այդ քաղաքականությունը ժամանակավրեպ է, բացի այդ էլ հստակ ընդգծված չեն ՄԿԾ-ների ինչպես մշտադիտարկման, այնպես էլ վերանայման գործընթացները: Այցից ևս պարզ դարձավ, որ այն վերանայման անհրաժեշտություն ունի: 2017թ. ռեկտորի հրամանով ՄԿԾ-ները վերանայելու համար յուրաքանչյուր մասնագիտության գծով ձևավորվել են ֆակուլտետային մեթոդական խորհուրդներ և մեթոդական հանձնաժողովներ՝ նպաստակադրելով ՄԿԾ-ները համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին և շարժունության ապահովմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ների վերանայումը որոշակի պարբերականություն չի ապահովում: ՄՈՒՀ-ն առանձնացնում է արդյունավետության գնահատման որոշ մեխանիզմներ՝ ուսանողների ակադեմիական առաջադիմության ամփոփման հաշվետվություններ, ԳԽ-ում ՄԿԾ-ների վերաբերյալ ընթացիկ հարցերի քննարկումներ, ներքին իրավական ակտերի մշակման և լրամշակման գործող մոտեցումներ, ռեկտորի տարեկան հաշվետվություններ, կենտրոնների, ամբիոնների, ֆակուլտետների հաշվետվություններ, այդ հաշվետվությունների և աշխատանքային պլանների կատարողականների գնահատում: Դրան զուգահեռ, ԳՔՈԱԿԿ-ն պարբերաբար վերանայում է հարցարանները, մշակվում են հետազոտության նոր հարցարաններ, վերանայվել են հաշվետվությունների ձևաչափերը՝ ներառելով վերլուծական բաղադրիչը: Փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ վերոնշյալ մեխանիզմներով ապահովվող գործընթացներում բարելավումները շարունակականություն և պարբերականություն չեն ապահովում, բացի այդ՝ ռեկտորի, կենտրոնների, ֆակուլտետների, ամբիոնների տարեկան հաշվետվություններում կատարողականների գնահատումներ առանձնացված չեն: 2019-2020 ուստարվա ԳԽ-ի աշխատանքային պլանում նախատեսված 68 օրակարգային հարցերից որևէ մեկը չի առնչվում ՄԿԾ-ների կառավարման գործընթացներին: ԹՎԳԾ-ի 9-րդ կետով նախատեսվել է իրականացնել կառավարման գործընթացների գործողության արդյունավետության գնահատում՝ վերջնարդյունքի գնահատման հետևյալ ցուցիչով՝ կառավարաման գործընթացների արդյունավետության գնահատման և բարելավման տարեկան զեկույցներ: Այդ զեկույցներն առկա չեն:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

ՇՊՀ-ի ՄԿԾ-ների, շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվությունը հանրությանը հասանելի է դառնում ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջի միջոցով: Կայքէջում տեղադրվում են ՀԽ-ի նիստերի արձանագրությունները, համալսարանի գործունեության վերաբերյալ ռեկտորի տարեկան հաշվետվությունները, ԳԽ-ի նիստերի

արձանագրությունները, կենտրոնների հաշվետվությունները, ԳՔՈԱԿԿ-ի հետազոտությունները, ֆակուլտետների, ամբիոնների և Ռազմական ամբիոնի տարեկան հաշվետվությունները, ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի տարեկան հաշվետվությունները: ՇՊՀ-ի ֆեյսբուքյան էջում ևս ՄՈՒՀ-ի կենտրոնները, ֆակուլտետները, ամբիոններն իրենց գործունեության վերաբերյալ տեղադրում են տեղեկատվություն: ԳՔՈԱԿԿ-ն նախաձեռնել է ՇՊՀ-ի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում շրջանավարտների հաջողությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, պատրաստումը և հրապարակումը: ՄՈՒՀ-ի կողմից շնորհվող որակավորումների գնահատման համար կարևոր տեղեկատվական հիմք են դիտարկվում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, որոնք, ըստ փորձագիտական այցի տվյալների, համակարգված չեն ներդրվում կրթական ծրագրերի բարելավման հիմքում:

Դատողություններ:

Փորձագիտական խումբն ընդգծում է, որ ժամանակ առ ժամանակ խոչընդոտվել է ՇՊՀ-ի ՀԽ-ի, ԳԽ-ի գործունեությունը, ՄՈՒՀ-ը շուրջ 3 տարի ռեկտոր չի ունեցել, ռեկտորի ժ/պ-ն ՄՈՒՀ-ը կառավարելու որևէ երկարաժամկետ կամ կարճաժամկետ ուղղորդող պլան չի ունեցել, առաջնորդվել է նախորդ՝ 2015-2019թթ. ՌԾ-ով, իրականացրել իրավիճակային կառավարում՝ խնդիրներին տալով տեղային և օպերատիվ լուծումներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ-ի մշակումը ՇՊՀ-ի համար հրատապ է, և առաջիկա պլանները չհստակեցնելու պարագայում ռիսկի տակ կլինի փոփոխությունների կառավարումը:

Ըստ ՇՊՀ-ի կանոնադրության և գործող կանոնակարգերի, դասախոսներն ու ուսանողները մասնակցում են իրենց առնչվող որոշումների կայացմանը: ՈՒսանողները վերջին ժամանակահատվածում առավել գործուն մասնակցություն են ցուցաբերում որոշումների կայացմանը, ինչն ինքնին դրական է, իսկ դասախոսների գործուն մասնակցությունը տեսանելի չէ՝ որոշակի առումով խոչընդոտելով որոշումների կայացման համակողմանիությանն ու արդյունավետությանը:

Թեև ՄՈՒՀ-ը նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների արդյունքում կատարել է կառուցվածքային փոփոխություններ, այնուամենայնիվ, կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների վերաբաշխման, ուղղաձիգ կապերի հստակեցման համատեքստում ՄՈՒՀ-ում կառավարման համակարգի հետագա բարելավման անհրաժեշտություն է զգացվում, ինչը կարող է նպաստել կառավարման համակարգի կատարելագործմանը: Քանի որ ըստ ԹՎԳԾ-ի՝ համալսարանում առանձին գիտության և հետազոտության բաժին չի ստեղծվել, ԳՔՈԱԿԿ-ն ներառում է ինչպես ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման, այնպես էլ գիտական քաղաքականության և հետբուհական կրթության հետ կապված աշխատանքները, երկու բլոկների աշխատակիցները առանձին-առանձին հաշվետու են կենտրոնի տնօրենին, ոչ թե որակի ապահովման պատասխանատուին կամ գիտական քաղաքականության և հետբուհական կրթության պատասխանատուին, ուստի փորձագիտական խումբը մտահոգված է, որ որոշակի առումով կենտրոնի կառավարման լայն գործառույթների շրջանակում կարող է խոչնդոտվել ՄՈՒՀ-ի համար ռազմավարական

առաջնահերթություն համարվող գիտության և հետազոտության առավել արդյունավետ իրականացումն ու զարգացումը, ինչպես նաև որակի ապահովման անկախության սկզբունքը։

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում, որ ՇՊՀ-ն իր կառավարչական գործընթացների իրականացման համար ապահովված է մարդկային և նյութական ռեսուրսներով, ՄԿԾ, ՊԴ և ՈՒՕ կազմի ծախսերը համալսարանի բյուջեում զգալի տեսակարար կշիռ են ապահովում (2021թ.՝ 55,4%) և տարեցտարի աճման միտում ունեն։ Մինչդեռ, միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ի գործունեությունից ստացվող փաստացի մուտքերի բաշխվածությամբ զգալի մասը՝ 52,5%-ը, բաժին է ընկնում պետական ֆինանսավորմանը՝ անհրաժեշտություն առաջացնելով այլընտրանքային եկամտի աղբյուրների ապահովման հիմքով դիվերսիֆիկացնել ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսները։ Խնդրահարույց է, որ ՄՈՒՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվով աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված միջոցները կազմում են դրամական միջոցների ելքերի շուրջ 80 %-ը՝ վտանգելով ՇՊՀ-ի հետագա զարգացումը։

Անհանգստացնող է, որ նախորդ ՌԾ-ի գործողության ժամկետի ավարտից առ այսօր ՇՊՀ-ն չունի ՌԾ, առկա չէ նաև նախորդ ՌԾ-ի առանձին կատարողական, գնահատականների ամփոփումներ, ՌԾ-ի աշխատանքային պլանով առանձնացված չեն ակնկալվող արդյունքների ձեռքբերման հստակ և չափելի ցուցիչները։ Շարունակաբար՝ թերությունների վերացման գործողությունների ծրագրով կառավարչական բլոկի բարելավմանն ուղղված հիմնական միջոցառումները չեն իրականացվել, պլանների և դրանց փաստացի կատարողականների միջև առկա են զգալի շեղումներ, հաշվետվություններն ընդհանուր առմամբ չեն ներառում քանակական և որակական գնահատականների ամփոփումներ, իրականացված վերլուծությունների՝ հաջորդ տարվա պլաններում ներառելու մեխանիզմները հստակ չեն աշխատում, ՊԻԳԲ շրջափուլը կանոնավոր չի գործում, ուստի վտանգված է կառավարչական գործընթացների արդյունավետությունը։

Փորձագիտական խումբը ռիսկային է համարում ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների գերազանցումը ներքին գործոնների նկատմամբ, հատկապես, որ արտաքին միջավայրի վերլուծությունները սակավ են՝ խոչընդոտելով առկա խնդիրների վերհանմանը և համալսարանի կրթական գործընթացների շարունակական բարելավմանը։ Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ ՇՊՀ-ում առկա է գործունեության հետ կապված տեղեկատվության հավաքագրման և վերլուծության հստակ մեխանիզմներ, ԳՔՈԱԿԿ-ի կողմից իրականացվում են տարբեր հետազոտություններ, բազմաթիվ հարցարանների միջոցով հարցումներ, հաշվարկում են տարբեր ԳԱՑ-եր, սակայն առկա վերլուծությունները սահմանափակվում են ըստ տարիների թվային կամ տոկոսային համեմատությունների արձանագրմամբ, առկա չեն պատճառահետևանքային կապերը, ամփոփված արդյունքների ներդրման դեպքերը տեսանելի չեն, առկա չեն սահմանված օպտիմալ, համադրելի նորմատիվներ հաշվարկված ԳԱՑ-երի համար։ Արդյունքում վտանգվում է ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների՝ առավել իրատեսական վերլուծությունը։

Փորձագիտական խումբը գտնում է՝ թեև ՄԿԾ-ների որակի, մշտադիտարկման, գնահատման ու պարբերաբար վերանայման ընթացակարգերի և մեխանիզմների մշակումն ու

կիրառումը ՇՊՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է, սակայն համալսարանում գործող նույնանուն քաղաքականությունը ժամանակավրեպ է և չի արտահայտում ՄՈՒՀ-ում գործող ներկայիս իրողությունները՝ խոչընդոտելով ՄԿԾ-ների կառավարման բարելավմանը։

Փորձագիտական խմբի կողմից դրական է դիտվում, որ գործող մասնագիտությունների և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը հասանելի է պաշտոնական կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով՝ նպաստելով ՄՈՒՀ-ի մասին իրազեկվածության բարձրացմանը, դիմորդների ավելացմանը։ ԳՔՈԱԿԿ-ի կողմից նախաձեռնած ՇՊՀ-ի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում շրջանավարտների հաջողությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, պատրաստումը և հրապարակումը կբարձրացնի ՇՊՀ-ի նկատմամբ վստահությունը։ Մտահոգիչ է, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների վերլուծությունները, որպես ՄՈՒՀ-ի կողմից շնորհվող որակավորումների գնահատման կարևոր տեղեկատվական հիմք, համակարգված չեն ներդրվում կրթական ծրագրերի բարելավման հիմքում։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ընդհանրական առումով ՇՊՀ-ում առկա է կառավարման համակարգի արդյունավետության խնդիր, մասնավորապես՝ գործողության մեջ է կառավարման իրավիճակային մոդելը, երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման մշտադիտարկման մեխանիզմները արդյունավետորեն չեն գործում, երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների և դրանց փաստացի կատարողականների միջև առկա են զգալի շեղումներ, բացակայում են կառավարման համակարգի արդյունավետության գնահատումները, արտաքին միջավայրի վերլուծությունները, կառավարման և վարչարարության տիրույթում նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները հիմնականում իրականացված չեն, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն չի բավարարում Չափանիշ 2-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**։

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՇՊՀ-ի 2015-2019թթ. ՌԾ-ով սահմանված կարևոր նպատակադրումներից է՝ «ձևավորել ուսանողակենտրոն միջավայր, որակի և սովորելու մշակույթ՝ մասնագիտության կրթական ծրագրերի մրցունակության ու որակավորումների համադրելիության ապահովման, արտաքին հարափոփոխ միջավայրի մարտահրավերներին դիմակայելու համար»: Վերոշարադրյալի համատեքստում ՇՊՀ-ի վերաձևավորման արդյունքում (2017թ.) գործում է 4 ֆակուլտետ և 14 ամբիոն, ընդ որում Ռազմական ամբիոնն ունի հատուկ կարգավիճակ: ՄՈՒՀ-ում առկա ՄԿԾ-ները կազմվել են ՈԱՇ-ի 3՝ 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակների պահանջներից: 4 ֆակուլտետներում և Ռազմական ամբիոնում 2015-2021թթ. ներառող ժամանակահատվածում իրականացվում են առկա բակալավրի 39, հեռակա բակալավրի 32, մագիստրոսի 26 և հետազոտողի 20 (ըստ 6 ուղղությունների) ՄԿԾ-ներ: ՄԿԾ-ների մեծաքանակ լինելուն զուգահեռ, առանձին մասնագիտություններում քիչ թվով ուսանողներ կան՝ ձևավորելով փոքր խմբեր: ՄՈՒՀ-ի համար հույժ կարևոր խնդիր է թերբեռնված խմբերի առկայությունը: Ըստ ռեկտորի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության, մինչև ութ ուսանողից կազմված խմբերը կազմում են ընդհանուր խմբերի կեսից ավելին: Հարկ է նշել, որ մինչև ութ ուսանողից կազմված խմբերը տնտեսական առումով շահութաբեր չեն, ավելին՝ կարող են անգամ չապահովել ինքնածախսածածկում և լինել վնասաբեր: Այս ուղղությամբ ՄՈՒՀ-ն իրականացնում է հոսքային դասընթացների կազմակերպում, հարակից մասնագիտությունների խմբերի միավորում համահամալսարանական, ընդհանուր մասնագիտական կրթաբլոկների իրականացման առումով, ուր կարող է խախտվել առանձին մասնագիտությունների գծով ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերման տրամաբանական հաջորդականությունը:

2015-2019թթ. ՇՊՀ-ում մշակվել և ներդրվել են մի շարք նոր ՄԿԾ-ներ (բակալավրատում՝ 12, մագիստրատուրայում՝ 12, հետազոտողի՝ 3): Այս համատեքստում հարկ է նշել, որ 2016-2021թթ. ընդունելությունների արդյունքներով արձանագրվել է, որ ինչպես որոշ գործող ՄԿԾ-ներում, այնպես էլ նոր ներդրված ՄԿԾ-ներից 2-ում ընդունելություն չի կատարվել («Լրագրություն», «Քաղաքագիտություն»), իսկ «Զինվորական հոգեբանություն» նոր ՄԿԾ-ով քիչ դիմորդներ են եղել: Նոր ներդրված ՄԿԾ-ներում դիմորդների ոչ բավարար քանակը որոշ դեպքերում առաջանում է ծրագրերի ներքին մրցակցության պատճառով, օրինակ՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Տեղեկատվական

տեխնոլոգիաներ» ՄԿԾ-ների միջև: Փորձագիտական խումբը նշում է, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրով արդեն-իսկ նախատեսվել էր բարելավել ՄԿԾ-ների ցանկը՝ այն համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին և դադարեցնել չպահանջված մասնագիտությունների ՄԿԾ-ները: Նշյալի շրջանակում ՄՈՒՀ-ը դեռևս գործուն քայլեր չի իրականացրել:

ՇՊՀ-ի ՄԿԾ-ները մանրամասն նկարագրված են, ՄԿԾ-ի այժմյան մասնագիրը մշակվել է՝ հաշվի առնելով 2017 թ.-ին ARMENQA ծրագրի շրջանակներում կազմված «Կրթական ծրագրի մասնագրի և դասընթացի նկարագրիչների լրացման» ուղեցույցը, որում հստակ նշված են մասնագրի պարտադիր բաղադրիչները, ինչպես նաև «Դասընթացի նկարագրիչի» պարտադիր բաղադրիչները: Պետք է փաստել, որ փորձագիտական խմբի կողմից դիտարկված ՄԿԾ-ները հիմնականում համահունչ են ՌԾ-ին, սակայն առկա են որոշակի հակասություններ: «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագրում նշված նպատակները միտված են միայն հիմնարար գիտելիքների տրամադրմանը և նոր գիտելիքներ ձեռք բերելու կարողություններին, հմտությունների ձևավորմանը, այսպիսով, չի արտացոլվում գործնական հմտությունների և կարողությունների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը, ինչը չի համապատասխանում ազգային աշխատաշուկայի պահանջներին, քանի որ առանց նման հմտությունների և կարողությունների շրջանավարտը հնարավորություն չի ստանա աշխատանքի անցնել SS ոլորտի ընկերություններում, ուսումնական հաստատություններում (մասնագրում նշվում է, որ շրջանավարտը կարող է աշխատանքային գործունեություն ծավալել մաթեմատիկական մոդելավորման ու ծրագրավորման բնագավառներում): Փորձագիտական այցի ընթացքում գործնական հմտությունների պակասը նշեցին նաև և՛ ներքին, և արտաքին շահակիցները, իսկ հանձնարարականների ուսումնասիրության արդյունքում գերակշռում էր տեսական գիտելիքի ստուգումը:

ՄԿԾ-ների վերլուծություններից պարզ դարձավ, որ ծրագրերի կրթական վերջնարդյունքերը որոշ դեպքերում անհասկանալի են ձևակերպված և չեն համադրվում ՄԿԾ-ի նպատակի և գաղափարի հետ, նաև առարկաների վերջնարդյունքներին: Օրինակ, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ՄԿԾ-ի մասնագրում որպես գործնական մասնագիտական կարողությունների վերջնարդյունք նշված է «իրականացնել տարբեր իրավիճակների ուսումնասիրություններ, վերլուծել և հանրությանը ներկայացնել ձեռք բերված արդյունքները», ընդ որում, այս վերջնարդյունքի ձևավորումն ապահովում են, օրինակ, «Գծային հանրահաշիվ և վերլուծական երկրաչափություն», «Ծրագրավորման լեզուներ (Python, C++)» և մի շարք առարկաները, սակայն «Մաթեմատիկական անալիզ», «Գործառույթների հետազոտում», «Թվային մեթոդներ» առարկաները չեն մասնակցում այս վերջնարդյունքի ձևավորմանը: Նաև բավականին անհասկանալի է ՄԿԾ-ի վերջնարդյունքների ծածկույթն ապահովող ուսումնական պլանում ներառված առարկաների ընտրության չափանիշները, օրինակ՝ «Մաթեմատիկական տրամաբանություն 1,2» առարկան չի մասնակցում Ա1 «հասկանալ մաթեմատիկական բնագավառի հիմնական հասկացությունները, ոլորտին

առնչվող հայեցակարգերը, տեսությունները և մոտեցումները» վերջնարդյունքի ձևավորմանը, սակայն ապահովում է Ա2-ը «ներկայացնել ծրագրավորման հիմնական սկզբունքները, գաղափարները և մեթոդները, համացանցային կրթական ռեսուրսները, կիրառական ծրագրային ապահովումները, տվյալների հենքերի կառուցվածքը և իրականացումը մասնագիտական գործունեության մեջ» վերջնարդյունքի ձևավորմանը:

«Կենսաբանություն» ՄԿԾ-ի մասնագրում հստակ չեն երևում ՄԿԾ-ի և «Դասընթացների նկարագրիչներում» ամրագրված վերջնարդյունքների փոխկապակցվածությունը՝ առաջացնելով ՄԿԾ-ի և դասընթացների վերջնարդյունքների համահնչեցման խնդիր: Տվյալ ՄԿԾ-ի տարբեր դասընթացների շրջանակում գիտելիքների ստուգման հարցերը կազմված են այնպես, որ հիմնականում ստուգում են ուսանողի գիտելիքը, ոչ թե վերլուծելու և կենսաբանական երևույթները մեկնաբանելու կարողությունները, ինչպես նաև փորձնական հետազոտություններ կատարելու ունակությունները: Ամփոփ՝ հարցատոմսերում ներառված հարցերը չեն կարող գնահատել կարողություն, հմտություն ապահովող վերջնարդյունքները: Բացի դա, առկա հանձնարարականները չեն ապահովում վերջնարդյունքների ամբողջական ձեռեքբերումը, կցված գրականության ցանկերը սակավ են և հին:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ-ի մասնագրի շրջանակում վերջնարդյուքներն ընդհանուր առմամբ չեն արտահայտում մասնագիտության բովանդակությունը: Տվյալ մասնագիտության գծով իրականացված ուսումնասիրությունների, փորձագիտական այցի ընթացքում իրականացված հանդիպումների, ինչպես նաև դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ մեթոդիկա պարունակող դասընթացներում շեշտադրված չեն մեթոդների ուսումնասիրությունները, դրանց կիրառման լավագույն փորձն ու ազդեցությունները, և կոնկրետ մեթոդների իմացությունը և կիրառելիությունը, արտահայտված կոնկրետ հանձնարարականներով, ներառված չեն դասընթացների վերջնարդյունքներում: Տվյալ ՄԿԾ-ի առկա և հեռակա բակալավրիատի, մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի 2021թ. հաշվետվություններում ներկայացվել են դիտարկումներ առ այն, որ հետազոտական աշխատանքների համար կազմվեն ավելի արդիական, ժամանակակից դպրոցում ուսուցման հիմնական հարցերից բխող և մանկավարժության բակալավրի որակավորմանը համապատասխանող նոր թեմաներ, հատուկ ուշադրության արժանանան օրինակ՝ մաթեմատիկայի ուսուցման մեթոդների դասավանդմանը և դրանց պրակտիկ կիրառմանը վերաբերող հարցերին, մասնագետների պատրստման որակի բարելավման գործընթացում լուրջ ուշադրություն դարձնել մագիստրոսական թեզերի և տրվող որակավորման համապատասխանությանը:

Պետք է փաստել, որ ՊԴ կազմը հիմնականում չի մասնակցում իրենց կողմից դասավանդվող առարկաների վերջնարդյունքների ձևակերպմանը: Բացի այդ էլ, ՇՊՀ-ի ՊԴ կազմի միջին գնահատականներով դասախոսների մասնագիտական կոմպետենցիաները վերջին տարիներին նվազման միտում են ցուցաբերել՝ 2018-2019թթ.՝ 4,80, 2019-2020թթ.՝ 4,70, 2020-2021թթ.՝ 4,69:

2017-2018 ուստարում ՇՊՀ-ում ձեռնարկվել է ուսումնական պլանների բովանդակային փոփոխության գործընթաց՝ պայմանավորված աշխատաշուկայի պահանջներին

համապատասխանեցման և ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու, փոքր խմբերում ուսանողների մոտիվացիան բարձրացնելու, բակալավրիատի հեռակա համակարգում ուսումնառությունն առկա համակարգի հետ համատեղ կազմակերպելու նկատառումներով, վերջինիս իրականացման արդյունքում առաջացել են մի շարք խնդիրներ: Նոր փոփոխված ուսումնական պլանները մշակելիս բոլոր դասընթացներին հատկացվել է 3 կամ 6 կրեդիտ, ինչը խոչնդոտել է ուսանողների շարժունության գործընթացի արդյունավետությանը, միջբուհական ակադեմիական շարժունության խթանմանը, ուսանողների հեռացման և վերականգնման գործընթացների իրականացմանը: Ներկայումս ՇՊՀ-ում իրականացվում է առաջացած խնդիրների քայլ առ քայլ շտկելու քաղաքականություն:

ՇՊՀ-ի համար կարևոր մարտահրավեր է աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՄԿԾ-ների իրականացումը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ այս համատեքստում քիչ է երկխոսությունը գործատուների և շրջանավարտների հետ, առկա չեն հետադարձ կապի ապահովման հստակ մեխանիզմներ:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ՇՊՀ-ում ՄԿԾ-ների մասնագրերը և ԹՕՊ-երը (թեմատիկ օրացուցային պլանները) կազմված են ըստ մշակված ձևաչափերի: Յուրաքանչյուր մասնագրում հստակ նշված է ծրագրի նպատակը և ակնկալվող վերջնարդյունքները: Դասավանդման և ուսումնառության մեթոդները ներկայացված են ՄԿԾ-ների մասնագրերի «Դասընթացների նկարագրիչներում» և ԹՕՊ-երում: ՇՊՀ-ում ԹՕՊ-ը կազմվում է դասավանդող դասախոսի կողմից, դասախոսը դասավանդման և ուսումնառության մեթոդներն ընտրում է՝ ելնելով ՄԿԾ-ների ակնկալվող վերջնարդյունքներից: Յուրաքանչյուր թեմային համապատասխան պետք է ամրագրվեն դասավանդման և ուսումնառության մեթոդները, հանձնարարականները, համապատասխան գրականությունը էջերով, էլեկտրոնային դասախոսությունների փաթեթները, գործնական և լաբորատոր աշխատանքների ժողովածուները՝ համապատասխան էջերով և համարներով:

«Դասընթացի նկարագրիչները» և ԹՕՊ-երը կազմելու համար ՇՊՀ-ում 2017 թ.-ին մշակվել է մեթոդական ուղեցույց, որտեղ ներկայացված են դասավանդման, ուսումնառության և գնահատման նորագույն մեթոդները: Սակայն փորձագիտական խմբի կողմից դիտարկվող ՄԿԾ-ների մասնագրերի տարբեր «Դասընթացների նկարագրիչներում» և ԹՕՊ-երում հիմնականում ընտրված դասավանդման մեթոդներ են ներկայացվում դասախոսությունները, սեմինար, գործնական, լաբորատոր աշխատանքները, չնայած վերջնարդյունքները տարբեր են: Դրան զուգահեռ, և՛ դասավանդման, և՛ ուսումնառության մեթոդները ներկայացված են դասախոսությունների, սեմինար, գործնական, լաբորատոր աշխատանքների տեսքով: ԹՕՊ-երում առանձնացված են ուսումնառության մեթոդներ, առաջադրանքներ բաժինը, ուր հիմնականում որպես ուսումնառության մեթոդ նշվում է տեսական կամ դասախոսական նյութի յուրացումը, իսկ առաջադրանքներ առանձին թեմաների համար առանձնացված չեն, հիմնականում որպես առաջադրանք նշվում են

դասագրքերի սկզբնաղբյուրների ուսումնասիրումը, խնդիրներ, վարժություններ և այլն: Փորձագիտական հանդիպումների ժամանակ որպես դասավանդման մեթոդ ևս հաճախ նշվում էր դասախոսությունը, լաբորատոր կամ գործնական աշխատանքը, դրանք նույնացվում էին ուսումնառության կազմակերպման ձևերի և ուսումնառության մեթոդների հետ: Ակնառու է, որ մշակված ուղեցույցի կիրառումը «Դասընթացների նկարագրիչների» և ԹՕՊ-երի կազմման ժամանակ կրում է ֆորմալ բնույթ: Ներկայացված ՄԿԾ-ների մասնագրերի «Դասընթացի նկարագրիչներում» մեծամասամբ ցույց տրված չէ կապը դասընթացի հայտարարված նպատակների և վերջնարդյունքների, հայտարարված դասավանդման և ուսումնառության մեթոդների միջև:

Ուսաղակենտրոն ուսուցման միջավայր ստեղծելու կարևորությունը ամրագրված է ՇՊՀ-ի ՌԾ-ում: 2016թ. դեկտեմբերին ՇՊՀ-ի ՈԱ կենտրոնի կողմից իրականացվել են դասընթացներ՝ վերջնարդյունքահենք և աշխատաշուկայի պահանջներին միտված ՄԿԾ-ների կազմմանը վերաբերող, որի արդյունքում բարձրացվել են ուսանողակենտրոն ուսուցման խնդիրները: Արդյունքում կազմվել է «Ուսանողակենտրոն ուսուցման մեթոդական ուղեցույց»: Այդ նույն ընթացքում TEMPUS-ARMENQA ծրագրի շրջանակում վերապատրաստումներ են անցկացվել ՄՈՒՀ-ի աշխատանկիցների համար, սակայն փորձագիտական հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ դասախոսներից շատերը չեն մասնակցել վերջնարդյունքների ձևավորման հետ կապված հատուկ վերապատրաստումների: Բակալավրիատի ՄԿԾ-ներում բացակայում են կամընտրական դասընթացների բաղադրիչը:

ՇՊՀ-ում ԳՔՈԱԿԿ-ի կողմից անցկացվում են հարցումներ՝ ուղղված նաև դասավանդման և ուսումնառության կիրառված մեթոդներից ուսանողների գոհունակության գնահատմանը, հարցումների արդյունքները տրամադրվում են մասնագիտական ամբիոններին համապատասխան եզրահանգումների և բարեփոխումների համար: Ընդհանուր առմամբ ուսանողների շուրջ 92%-ը գոհ է դասավանդման և ուսումնառության մեթոդներից: Փորձագիտական հանդիպումների ժամանակ ուսանողները շեշտեցին դասավանդման նոր մեթոդների անհրաժեշտությունը և գործնական գիտելիքի նկատմամբ պահանջը:

3.3 ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ՄՈՒՀ-ում 2013թ.-ից գործում է «Բակալավրիատի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման» ընթացակարգը, որը ենթարկվել է բարելավման: Ինքնավերլուծությունում նշվել է, որ հաշվի են առնվել ՊԴ կազմի բանավոր առաջարկությունները, ամբիոններում իրականացված քննարկումները, ուսանողական համակազմի հետ հանդիպումների ընթացքում բարձրացված հարցադրումները: Այցից պարզ դարձավ, որ այժմ ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների գնահատման համակարգի բարելավման քաղաքականություն: Նկատի ունենալով նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամանակ փորձագիտական զեկույցում նշված դիտողությունները՝ ՇՊՀ-ում սահմանվել են

հետևյալ ստուգման հասկացությունները՝ ընթացիկ ստուգում, միջանկյալ ստուգում, ամփոփիչ /հանրագումարային/ ստուգում: Համաձայն ընթացակարգի՝ ուսումնական պլաններում առկա գնահատման ձևերը առաջարկվում են դասավանդող դասախոսների կողմից՝ դասընթացի կրթական վերջնարդյունքներից ելնելով: ՇՊՀ-ում կիրառվում է գնահատման 2 հիմնական ձև՝ ձևավորող և ամփոփիչ: Ձևավորող գնահատման ձևերից է դասընթացի վերջնարդյունքների գնահատումը, որը պետք է ամրագրված լինի ԹՕՊ-երում: Փորձագիտական խմբի կողմից դիտարկվող ԹՕՊ-երից ոչ բոլորում են ամրագրված գնահատման մեթոդները: ՄԿԾ-ների մասնագրերի յուրաքանչյուր «Դասընթացի նկարագրիչում» նշված են դասընթացի գնահատման մեթոդներն ու չափանիշները, միևնույն ժամանակ հստակ արտահայտված չէ ընտրված գնահատման մեթոդների և վերջնարդյունքների ստուգման կապը: Միջանկյալ ստուգման հարցաշարերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որոշ դեպքերում, օրինակ Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա ՄԿԾ-ի հարցաշարերում, ներկայացված են տարբեր բարդության հարցեր՝ տրամադրելով միևնույն միավորը:

ՇՊՀ-ում ուսանողների գնահատումն իրականացվում է գրավոր, բանավոր և թեստային ձևաչափով: Ներկայացված ՄԿԾ-ների շրջանակում հարցատոմսերի, թեստերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գնահատման ընթացքում հիմնականում ստուգվում է ուսանողի գիտելիքը, ոչ թե հմտություններն ու կարողությունները:

22.02.2021 թ.-ին հաստատվել է «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով իրականացվող պրակտիկաների կազմակերպման և անցկացման» կանոնակարգը, որում ամրագրված է պրակտիկաների գնահատման համակարգը:

ՇՊՀ-ում ուսանողների շրջանում անցկացվում են հարցումներ գնահատման համակարգի արդյունավետությունը գնահատելու և առկա թերությունները վեր հանելու նպատակով, ըստ հարցումների՝ ուսանողների մեծ մասը կարծում է, որ դասախոսները սուբյեկտիվորեն են մոտենում գնահատման գործընթացին: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում գրավոր և բանավոր ստուգումները բավարար արդյունավետություն չեն ապահովում, 2 դեպքում էլ առկա են ռիսկեր՝ օբյեկտիվ գնահատելու նկատառումով: Ինչ վերաբերում է թեստային ստուգումներին, ապա դրանք ստուգումների մեջ մեծ տեսակարար կշիռ չունեն, բացի այդ էլ տարբեր մասնագիտությունների գծով թեստային անհրաժեշտ բազաներ առկա չեն:

2015 թ.-ին ՇՊՀ-ում ներդրվել է «Ակադեմիական ազնվության հայեցակարգը», 2019թ.-ին ԳԽ-ի կողմից հաստատվել է «Գրագողության դեմ պայքարի քաղաքականությունը», սակայն փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ներկայումս քաղաքականության իրականացման իրական մեխանիզմներ չեն գործում:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

ՇՊՀ-ն իր ՄԿԾ-ների մշակման և բարելավման ընթացքում կիրառել է առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ): 2017թ.-ին ՇՊՀ-ի ՈԱ կենտրոնի կողմից

կատարվել է ուսումնական պլանների համեմատական վերլուծություն նույն որակավորումները շնորհող ՀՀ բուհերի, ինչպես նաև ՇՊՀ-ի հետ համագործակցող ՌԴ բուհերի ՄԿԾ-ների հետ: Արդյունքում պարզվել է, որ ՀՀ-ում նմանատիպ մասնագիտությունների որոշ ՄԿԾ-ների առումով բովանդակային տարբերությունները քիչ են: 2019 թ.-ին ԳՔՈԱԿԿ-ի կողմից մշակված բենչմարքինգի ձևաչափով ամբիոններում իրականացվել է մի շարք ՄԿԾ-ների բենչմարքինգ: Պետք է փաստել, որ իրականացված բենչմարքինգի արդյունքում ՄԿԾ-ների համահունչության վերաբերյալ առավել թիրախային վերլուծություններ առկա չեն: Փորձագիտական հանդիպումներից ևս պարզ դարձավ, որ ամբիոններում բենչմարքինգի իրականացման շրջանակներում հիմնականում տեղի է ունեցել ՄԿԾ-ների դասընթացների անվանումների, կրեդիտների քանակի պարզ համեմատում և համապատասխանեցում, սակայն առավել խորքային և բովանդակային վերլուծություններ չեն իրականացվել, քանի որ բենչմարքինգն իրականացվել է միայն բաց տեղեկատվության (բուհերի կայքերում տեղադրված) միջոցով:

ՇՊՀ-ում գործում է 06.10.2020 թ. ԳԽ-ի կողմից հաստատված «Ակադեմիական շարժունության ծրագրերի կազմակերպման» ընթացակարգ, որը լրամշակվել է 2021 թ.-ին: Ակադեմիական շարժունության ծրագրերով արտերկրի բուհերում սովորած ուսանողների կրեդիտների ճանաչումը իրականացվում է մասնագիտական ամբիոնների մակարդակով, քննարկումների միջոցով դասընթացների բովանդակության և վերջնարդյունքների ընդհանրությունների 75% համընկնումների դեպքում կուտակած կրեդիտները ճանաչվում են: Ըստ ինքնավերլուծության՝ մագիստրոսական ՄԿԾ-ներում 25%-ը կազմող մասնագիտական ընտրովի կրթամասը նպաստում է շարժունությանը՝ ուսումնական պլանների առավել ճկունության հաշվին: 2014-2021թթ.-ին ՇՊՀ-ի 16 ուսանող և 13 դասավանդող մասնակցել են շարժունության ծրագրերի:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՇՊՀ-ում գործում է 20.02.2013 թ. ԳԽ-ի կողմից հաստատված «Մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման» քաղաքականությունը: Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրով ևս նախատեսվել էր վերանայել սույն քաղաքականությունը, ինչը նաև ամրագրված է ՇՊՀ-ի ԳԽ-ի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանում: Հարկ է նշել, որ քաղաքականության վերանայման և լրամշակման գործընթացը դեռևս ավարտված չէ, ինչը նաև հետաձգում է ՄԿԾ-ների աշխատաշուկայի ներկայիս պահանջներին համապատասխանեցնելու կարևոր գործընթացները, օրինակ՝ բակալավրիական ՄԿԾ-ներում կամընտրական կրթամասի ներառման գործընթացը:

ՇՊՀ-ում ՄԿԾ-ի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման կարևոր մեխանիզմներից են ներքին և արտաքին շահակիցների շրջանում հարցումները: Այդ հարցումները ներդրված են ԳՔՈԱԿԿ-ի կողմից և իրականացվում են 2017 թ.-ից:

Որպես մշտադիտարկման մեխանիզմ է օգտագործվում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների ընդգրկումը, ովքեր այնուհետև իրենց

կարծիքն են արտահայտում շրջանավարտների կոմպետենցիաների վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ արդյունքները վերլուծվում են մասնագիտական ամբիոններում, սակայն համապարփակ բարելավման գործընթաց այդ վերլուծությունների հիման վրա չի իրականացվել: Փորձագիտական հանդիպումներից նաև պարզվեց, որ գործատուները և շրջանավարտները ՇՊՀ-ի կողմից առաջարկ չեն ստացել մասնակցել ՄԿԾ բարելավման գործընթացներին և չեն ընդգրկվել համապատասխան մեթոդական հանձնաժողովներում: Շահակիցները նշում են, որ ՄԿԾ-ները բարելավման անհրաժեշտություն ունեն, հատկապես գործնական, լաբորատոր պարապմունքների ժամերի, պրակտիկաների ավելացման տեսակետից, քանի որ շրջանավարտների գործնական հմտությունների և կարողությունների ոչ լիարժեք ձևավորումը մեծ խոչընդոտ է աշխատաշուկայում մրցունակության ապահովման համար:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը նշում է, որ ՇՊՀ-ն կարևորում է ՄԿԾ-ների մրցունակությունն ու որակավորումների համադրելիության ապահովումը, իրականացվում են տարբերաշատ ՄԿԾ-ներ, պարբերաբար ներդրվում են նորերը, սակայն անհանգստացնող է, որ որոշ ՄԿԾ-ներում, այդ թվում՝ նոր ներդրվածներում, ընդունելություն չի կատարվում, որոշներում էլ դիմորդների քանակը բավականին քիչ է՝ առանձին ՄԿԾ-ների միջև ձևավորելով ներքին մրցակցություն: Շարունակաբար՝ քանի որ ՄՈՒՀ-ում մինչև ութ ուսանողից կազմված խմբերը կազմում են ընդհանուր խմբերի կեսից ավելին, իսկ տնտեսական առումով դրանք ՇՊՀ-ի համար շահութաբեր չեն, ուստի խոշոր հաշվով կարող է վտանգվել առանձին ՄԿԾ-ների արդյունավետությունը:

Թեև ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ները մանրամասնորեն նկարագրված են, մասնագիրը մշակվել է ARMENQA ծրագրի շրջանակում կազմված ուղեցույցի հիման վրա, այդուհանդերձ առկա են շեղումներ ՄԿԾ-ների նպատակների և սահմանված վերջնարդյունքների համապատասխանության համատեքստում՝ առաջացնելով ՄԿԾ-ի և դասընթացների վերջնարդյունքների համահնչեցման խնդիր:

ՄԿԾ-ների մասնագրերի «Դասընթացի նկարագրիչներում» մեծամասամբ ցույց տրված չէ կապը դասընթացի հայտարարված նպատակների և վերջնարդյունքների, հայտարարված դասավանդման, ուսումնառության մեթոդների և առաջադրանքների միջև, ինչը կարող է խոչընդոտել գործող ՄԿԾ-ներով վերջնարդյունքների ձեռքբերումը: Բացի դա, արտաքին շահակիցների և դասախոսների մասնակցության բացակայությունը ՄԿԾ-ների վերջնարդյունքների սահմանմանը կարող է խզել կապը գործատուի, աշխատաշուկայի պահանջի և ՄԿԾ-ն իրականացնողի միջև, որն էլ իր հերթին կարող է խոչընդոտել ՄԿԾ-ների արդյունավետությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ բակալավրիատում կամընտրական դասընթացների բաղադրիչի ձևավորումը կնպաստի ուսանողակենտրոն ուսուցման ամրապնդմանը և մասնագիտական գործնական կարողությունների ավելացմանը:

Անհանգստացնող է, որ նոր փոփոխված ուսումնական պլանները մշակելիս բոլոր դասընթացներին հատկացվել է 3 կամ 6 կրեդիտ, ինչը բացասաբար կարող է անդրադառնալ

ուսանողների շարժունության արդյունավետության, միջբուհական ակադեմիական շարժունության խթանման, ուսանողների հեռացման և վերականգնման գործընթացների իրականացման վրա: Միևնույն ժամանակ դրական է գնահատվում, որ ՄՈՒՀ -ը շահագրգռված է նշյալ խնդրի լուծման գործում:

Փորձագիտական խումբը նշում է՝ թեև ՇՊՀ-ում ՄԿԾ-ների մասնագրերը և ԹՕՊ-երը կազմված են ըստ մշակված ձևաչափերի, ԹՕՊ-երում առանձնացվում են դասավանդման և ուսումնառության մեթոդները, հանձնարարականները (առաջադրանքներ), ռեսուրսները, սակայն անհանգստացնող է, որ ԹՕՊ-երում դրանց ներառվածությունը զուտ ֆորմալ բնույթ է կրում, որոշ դեպքերում էլ՝ ՄԿԾ-ների վերջնարդյունքներին ոչ համարժեք: Բացի դա, ներկայացված ՄԿԾ-ների մասնագրերի «Դասընթացի նկարագրիչներում» հիմնականում չի երևում կապը դասընթացի հայտարարված նպատակների և վերջնարդյունքների, հայտարարված դասավանդման և ուսումնառության մեթոդների միջև, որը կարող է հանգեցնել վերջնարդյունքների ոչ ամբողջովին ձեռքբերմանը: Արդյունքում տուժում է դասավանդման մեթոդ-գնահատման մեթոդ համահնչեցումը:

Թեև ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների գնահատման համակարգի բարելավման քաղաքականություն և ՇՊՀ-ում կիրառվում են գնահատման ձևավորող և ամփոփիչ ձևաչափերը, այդուհանդերձ ՄԿԾ-ների մասնագրերում հստակ արտահայտված չէ ընտրված գնահատման մեթոդների և վերջնարդյունքների ստուգման կապը: Երբեմն տարբեր բարդություններով հարցերին տրամադրվում է միևնույն միավորը, որը կարող է որոշակիորեն վտանգել գնահատման օբյեկտիվությունը: Հավելելով՝ գնահատման ընթացքում հիմնականում ստուգվում է ուսանողի գիտելիքը, ոչ թե հմտություններն ու կարողությունները: Արդյունքում գնահատման բարելավման քաղաքականությունը կարող է վտանգվել:

Փորձագիտական խումբը նշում է, որ ՇՊՀ-ում առկա գրագողության դեմ պայքարի քաղաքականության իրականացման իրական մեխանիմզների ռեալ գործարկումը կարող է էապես բարձրացնել ակադեմիական ազնվության մակարդակը:

Թեև ՇՊՀ-ն իրականացնում է ՄԿԾ-ների բենչմարքինգ ինչպես ՀՀ առաջատար բուհերի, այնպես էլ ՌԴ բուհերի հետ, արդյունքում ներդրվել է նոր մագիստրոսական կրթական ծրագիր, այդուհանդերձ շոշափելի և չափելի չեն ՄԿԾ-ների բարելավման արդյունքները, ինչը հստակ չի արտահայտում ՄԿԾ-ների բարելավման անհրաժեշտությունն ու դրան միտված հետագա քայլերի հաջորդականությունը: Նշյալի շրջանակում դրական է դիտվում, որ ԳՔՈԱԿԿ-ն մշակել է բենչմարքինգի ձևաչափ, սակայն ՄԿԾ-ների համահունչության վերաբերյալ առկա չեն հստակ վերլուծություններ, որոնք կարող են նպաստել ՄԿԾ-ների շարունակական բարելավման գործընթացին:

Հաշվի առնելով, որ 2014-2021թթ-ին ՇՊՀ-ի 16 ուսանող և 13 դասավանդող մասնակցել են շարժունության ծրագրերի, ուստի այդ շարժունության ծրագրին մասնակցած ուսանողներն անհատական գրաֆիկով հանձնում են առարկաների տարբերություններ, սակայն ուսանողների փաստարկմամբ տարբերությունների քանակը բավականին շատ է: ՈՒ քանի որ առկա են նշյալ և փաստաթղթաշրջանառության հետ կապված խնդիրները, ուսանողների մի

մասը խուսափում է մասնակցել նման ծրագրերի՝ վտանգելով շարժունության ծավալների մեծացումը:

Քանի որ ՇՊՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման քաղաքականության վերանայումը ներառված է ՇՊՀ-ի ԳԽ-ի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանում ու դեռևս ՄՈՒՀ-ի կողմից չի ամբողջականացվել, զուգահեռաբար՝ փորձագիտական խումբն ընդգծում է կամընտրական դասընթացների բաղադրիչի կարևորությունն ինչպես դասախոսակենտրոն ուսուցումից ուսանողակենտրոն ուսուցման անցնելու, այնպես էլ աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին ՄԿԾ-ի վերջնարդյունքների համապատասխանության տեսանկյունից, ուստի նշյալի համատեքստում ուղղակիորեն վտանգվում է ՄԿԾ-ների կառավարման գործընթացը:

Թեև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների ընդգրկումը որպես մշտադիտարկման մեխանիզմ է օգտագործվում, այնուամենայնիվ, շրջանավարտների կոմպետենցիաների վերաբերյալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների վերլուծությունները հիմնականում քննարկվում են մասնագիտական ամբիոններում, մեծամասամբ բարելավման գործընթացների մեջ չեն ներառվում: Անհանգստացնող է նաև, որ գործատուներն ու շրջանավարտները իրենց մասնակցությունը չունեն ՄԿԾ-ների լավարկման գործընթացներին: Վերոնշյալի համատեքստում սահմանափակվում են ՄԿԾ-ների բարելավման հնարավորությունները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ում առկա է ՄԿԾ-ների արդյունանավետ կառավարման խնդիր, մասնավորաբար՝ առանձին ՄԿԾ-ների գծով ձևավորված են փոքրաթիվ խմբեր, որոշ նոր ներդրված ՄԿԾ-ներ դիմորդներ չունեն կամ սակավ են, առկա են շեղումներ ՄԿԾ-ների նպատակների և սահմանված վերջնարդյունքների համապատասխանության համատեքստում, ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները համահունչ չեն, ՄԿԾ-ների շարունակական բարելավման մեխանիզմները հստակ չեն աշխատում, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն չի բավարարում Չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՇՊՀ-ն ուսանողների ընդունելությունը կանոնակարգում է ՀՀ օրենսդրությամբ և ներքին կանոնակարգերով (ՇՊՀ-ի մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կանոնակարգ, ՇՊՀ-ում ասպիրանտուրայի/հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգ):

Առկա ուսուցման ընդունելությունն իրականացվում է տվյալ ուստարվա համար ՀՀ Կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկին համապատասխան: Ըստ «Պետական և ոչ պետական բուհերի ընդունելության (ըստ բակալավրի ԿԾ-ի) կարգի»՝ բակալավրի առկա ուսուցման համակարգում ՄՈՒՀ-ը կազմակերպում է ներբուհական ընդունելության քննություններ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «Նախնական զինվորական պատրաստություն», «Համակարգչային գրաֆիկա», «Դիզայն», «Դեկորատիվ կիրառական արվեստ» մասնագիտություններով: Բակալավրիատի ՄԿԾ-ներով հեռակա ուսուցման ընդունելության քննությունները կազմակերպում է ՄՈՒՀ-ը՝ հիմք ունենալով ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կարգը:

ՇՊՀ-ի մագիստրոսի և հետազոտողի ՄԿԾ-ներով սովորողների ընդունելությունը և ուսուցումը կազմակերպվում է՝ ըստ ՇՊՀ-ի մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման ու ՇՊՀ-ում սպիրանտուրայի/հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգերի: ՇՊՀ ընդունելության մասին տեղեկատվության տարածումը տեղի է ունենում կայքէջի, ֆեյսբուքյան էջի, հեռուստատեսության ու շաբաթաթերթի միջոցով, կազմակերպվում են նաև «Բաց դռների օրեր», որի շրջանակներում ապագա դիմորդները հնարավություն են ունենում ծանոթանալու ՄՈՒՀ-ի կողմից առաջարկվող ՄԿԾ-ներին և գործունեությանը: ՄՈՒՀ-ը համագործակցում է նաև տարածաշրջանի միջնակարգ ու ավագ դպրոցների հետ: Դիմորդների հավաքագրման գործընթացին նպաստում են նաև ՇՊՀ ավագ դպրոցը և ՇՊՀ քոլեջը: ՇՊՀ ավագ դպրոցը կազմակերպում է անվճար դասընթացներ ուսանողներին ՄՈՒՀ ընդունվելու հարցում աջակցելու համար: Փորձագիտական այցից պարզ նաև դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում են նաև մասնագիտական կողմնորոշմանն ուղղված խորհրդատվական հանդիպումներ մարզի տարբեր դպրոցների աշակերտների հետ:

2017-2018 ուստարում առկա և հեռակա բակալավրիատի ՄԿԾ-ներով ՇՊՀ-ն ունեցել է 665 դիմորդ, 2018–2019 ուստարում՝ 315 դիմորդ, իսկ 2019-2020 ուստարում՝ 577 դիմորդ: 2020-2021 ուստարում դիմորդների թիվը եղել 676 է, իսկ 2021-2022 ուստարում՝ 596, ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, համաճարակի և հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված ՄՈՒՀ-ը դիմորդների կտրուկ նվազում չի ունեցել: Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ մի շարք նոր ներդրված ՄԿԾ-ներում ընդունելություն չի գրանցվել՝

«Լրագրություն», «Քաղաքագիտություն», իսկ որոշներում էլ սահմանված տեղերի համեմատ ընդունվողների քանակը ոչ բավարար է եղել:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

2018թ.-ից ՄՈՒՀ-ում գործում է «ՇՊՀ ուսանողների կարիքների բացահայտման, օժանդակման և ուղղորդման կարգ», որը կանոնակարգում է ՇՊՀ ուսանողների գիտակրթական, սոցիալ-մշակութային կարիքների մշտադիտարկման, ուսումնասիրման, բացահայտման և դրանց բավարարման գործընթացները՝ միտված որակյալ կրթական միջավայրի ապահովմանը: ՇՊՀ ուսանողներն ընդգրկված են ՇՊՀ-ի կառավարման մարմիններում (ՀԽ-ում, ԳԽ–ում և ՖԽ-ում), ինչպես նաև ուսանողական ինքնակառավարման մարմիններում: ՈՒսանողները կարող են տարբեր խնդիրներ բարձրաձայնել ուսանողական խորհրդում և այդպիսով լուծումներ գտնել իրենց խնդիրների համար, օրինակ՝ բանակցությունների միջոցով լուծում տալ ուսանողի և դասախոսի միջև առաջացած կոնֆլիկտին:

ՄՈՒՀ-ում գործող ԳՔՈԱԿԿ բաժինը հետազոտություններ է իրականացնում ուսանողների տարբեր կարիքների բացահայտմանն ուղղված, մասնավորապես՝ ՇՊՀ ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման հարցումներ, ՇՊՀ-ի ուսանողների կողմից ՄՈՒՀ-ի մասնագիտական և կազմակերպչական գործընթացներից ակնկալիքների գնահատման հարցումներ, ՇՊՀ-ի ուսանողների կողմից ստացած կրթության, մասնագիտական և կազմակերպչական վարկանիշների գնահատման հարցումներ, ՇՊՀ-ում հեռավար ուսուցման իրականացման գործընթացից ուսանողների գոհունակության և կարիքների գնահատման հարցումներ և այլն: Ըստ ինքնավերլուծության՝ ուսանողների կարիքների վերհանման մեկ այլ մեխանիզմ է Որակի ապահովման գործընթացների ուսանող աջակիցների կողմից կազմակերպված քննարկումներն ուսանողների հետ, որի նպատակներից է նաև բացահայտել ուսանողների կարիքները և ներկայացնել ԳՔՈԱԿԿ-ին: Պետք է փաստել, որ այս մեխանիզմի արդյունավետությունը ՄՈՒՀ-ի կողմից գնահատված չէ:

Փորձագիտական այցերը ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ի վարչական ստորաբաժանումները հիմնականում տեղյակ են ուսանողների կարիքներից և փորձում են դրանց քայլ առ քայլ լուծումներ տալ:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

2018թ. օգոստոսից ՇՊՀ-ում ներդրվել է ակադեմիական խորհրդատվությունների ծառայություն, որը կազմակերպվում է ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանի կողմից: Կառույցի կողմից առաջարկվում են ակադեմիական խորդրդատվության

4 ձևեր (գիտահետազոտական գրագիտության խորհրդատվություններ, համակարգային կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվություններ, ՄԿԾ-ների մասնագիտական առարկաների առանձին թեմաների արտածրագրային խորհրդատվություններ /վճարովի հիմունքներով/, հետազոտական խորհրդատվություններ), պետք է նաև նշել, որ ՄԿԾ-ների մասնագիտական առարկաների առանձին թեմաների արտածրագրային խորհրդատվությունները վճարովի հիմունքներով չի գործում՝ պայմանավորված վճարովի լինելու հանգամանքով: Ակադեմիական խորհրդատվությունները տրամադրվում են թողարկող ամբիոնների պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները և դասախոսները: Ուսանողների միայն 10%-ն է ընդգրկված լրացուցիչ ակադեմիական խորհրդատվական պարապմունքներում, տրամադրված խորհրդատվություններից ուսանողների բավարարվածությունը կազմում է 99%:

Ուսումնական խորհրդատվությունների նկատմամբ ուսանողների հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով ՄՈՒՀ-ը կազմակերպում է տեղեկատվական հանդիպումներ ուսանողների և ՊԴ կազմի հետ, տեղեկատվություն է տարածում էլեկտրոնային փոստերի միջոցով և խորհրդատվությունների վերաբերյալ հայտարարություն է տարածում ՇՊՀ կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով: Խորհրդատվությունները տրամադրվում են՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

ՄՈՒՀ-ում գործում է վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ: Յուրաքանչյուր վարչական օղակ ունի հստակ սահմանված ընդունելության ժամեր, իսկ նրանց դիմելու ժամային գրաֆիկները փակցված են և հասանելի են ուսանողներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ աշխատակիցները պատրաստակամ են նաև պատասխանել ուսանողների հարցերին սահմանված ժամերից դուրս: Հնարավոր է վարչական աշխատակազմին դիմել նաև պաշտոնական կայքէջի և սոցիալական էջերի միջոցով: Ըստ ԳՔՈԱԿԿ բաժնի իրականացրած հարցումների արդյունքների՝ ուսանողների շուրջ 90% բավարարված են իրենց տրամադրված օժանդակությունից և ուղղորդումից:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ մատուցելու նպատակով ՄՈՒՀ-ում ձևավորվել է ենթակառուցվածք՝ Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժին: Բաժնի գործունեության հիմնական նպատակը ՄԿԾ-ներին, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, աշխատաշուկայում ՇՊՀ-ի ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացումն ու ուսանողների կրթական, սոցիալ-հոգեբանական, ֆինանսական, իրավական աջակցության ապահովումն է:

Ըստ ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ը շրջանավարտների կարիերայի պլանավորման և ուղղորդման հարցերում նախաձեռնում է տարբեր միջոցառումներ, որոնցից են աշխատանքի

հայտարարությունների տարածումը, ժամանակավոր աշխատանքներին, փորձնակության ծարագրերին և աշխատանքային պրակտիկաներին մասնակցելու հնարավորություններին, կարողությունների հզորացման դասընթացներին և այլնին ծանոթացումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժինը դեռևս ակտիվորեն չի գործում, կատարված մեծ աշխատանքներ դեռևս առկա չեն:

Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ երբեմն շրջանավարտների կարիերայի հարցերով զբաղվում են նաև ամբիոնները՝ տեղեկացնելով շրջանավարտներին, օրինակ, դպրոցներում կամ այլ վայրերում թափուր աշխատատեղերի մասին: Այսպիսի ձեռնարկումները դասախոսների անհատական նախաձեռնություններն են:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՄՈՒՀ-ում դեռևս 2016 թ.-ից ներդրվել է ՇՊՀ-ի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգը, ըստ որի՝ խմբում որպես կատարող պետք է ընդգրկվի ՇՊՀ-ի բարձր առաջադիմություն ունեցող բակալավրի, մագիստրոսի կամ հետազոտողի կրթական աստիճանի առնվազն 1 ուսանող: ՈՒսանողները ներգրավվում են նաև Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող և համալսարանում իրականացվող գիտական ծրագրերում: Վերջին 3 տարիներին ներդրված ներբուհական դրամաշնորհային ծրագրերով պայմանավորված աճել է ուսանողների մասնակցությունը գիտական ծրագրերում:

Բակալավրիատի և մագիստրոսական ՄԿԾ-ների ուսանողները հետազոտական աշխատանքներ են իրականացնում կուրսային աշխատանքների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակներում, որոնց արդյունքները նաև տպագրվում են համապատասխան գիտական հոդվածներում:

ՄՈՒՀ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ), որի նպատակն է նպաստել ուսանողական համակազմի գիտական գործունեության զարգացմանը: ՈՒԳԸ-ն կազմակերպում է գիտաժողովներ՝ խրախուսելով ՇՊՀ ուսանողների գիտական կարողությունների ներկայացմանը: ՇՊՀ ուսանողները հնարավություն ունեն իրենց հոդվածները ներկայացնել գիտաժողովների ընթացքում և տպագրել ՇՊՀ ՈՒԳԸ գիտական ժողովածուում: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները կարիք ունեն ձեռք բերելու հետազոտություն իրականացնելու մեթոդաբանական գործիքների:

2020թ.-ի վերջին ՄՈՒՀ-ում ներդրվել է «Ուսանողների վարկանիշավորման և խրախուսման կանոնակարգը», որի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է ուսանողների գիտական, գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բարձր վարկանիշ ունեցող ուսանողը կարող է պարգևատրվել գրքերի և այլ իրերի տեսքով: Պետք է նաև փաստել, որ ոչ բոլոր ուսանողներն են տիրապետում այս կանոնակարգի մասին լիարժեք տեղեկատվության:

ՄՈՒՀ-ում առկա են մի շարք մեխանիզմներ ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում ապահովելու համար, սակայն միևնույն ժամանակ պետք է փաստել, որ տարեցտարի ուսանողների մոտիվացիան հետազոտական աշխատանքով զբաղվելու անկում է ապրում: Հետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը բակալավրիատի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով եղել է 2019թ.-ին՝ 122 ուսանող, 2020թ.-ին՝ 111, իսկ 2021թ.-ին՝ 110:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՇՊՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության, նրանց խնդիրների վերհանման համար պատասխանատու մարմինը ՈՒԽ-ն է, ուսանողական կառույցի աշխատանքները կանոնակարգվում են ՈՒԽ կանոնադրությամբ: 2020 թ.-ից ՇՊՀ-ում ձևավորվել և գործում է նոր ՈՒԽ-ը, ուսանողական կառույցում ներկայումս ներգրավված է 300 ուսանող: ՈՒսանողական խորհուրդն իրականցնում է ուսանողների խնդիրների բացահայտում և իրավունքների պաշտպանություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տարեկան բյուջեով կառույցին ֆինանսական հատկացումներ չեն տրվում, կառույցը անհրաժեշտ պարագաներ ձեռք է բերում զեկուցագրերի և ռեկտորի հաստատման հիման վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախկինում ՈՒԽ անդամ կարող էին դառնալ այն ուսանողները, որոնք վերջին երկու կիսամյակում ապահովել են Միջին որակական գնահատականի (ՄՈԳ-ի) 65 տոկոսը, իսկ առաջին կուրսի դեպքում դիտարկվում են միայն մեկ կիսամյակի արդյունքները: Ներկայումս ՈՒԽ-ին կարող են անդամակցել բոլոր ուսանողները՝ անկախ ՄՈԳ-ից :

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն կազմակերպել է ստորագրահավաք (700 հոգի), որով դիմել են ԿԳՄՍ նախարարություն ՄՈՒՀ-ում ՀԽ ձևավորելու համար, քանի որ ՇՊՀ-ն տևական ժամանակ չի ունեցել Խորհուրդ, որն, ըստ ուսանողների, խաթարել է ՄՈՒՀ-ի ընթացիկ աշխատանքների իրագործումը: Ստորագրահավաքից հետո ՄՈՒՀ-ում ձևավորվել է ՀԽ:

ՈՒԽ-ն 2020-2021 ուստարում իրականացրել է հետազոտություն ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետության վերաբերյալ: Ուսանողները ՇՊՀ հնարավոր բարեփոխումների շրջանակում առավել հաճախ նշել են հետևյալ խնդիրների լուծումը. վարձավճարների նվազեցում, զեղչային համակարգին առավել մեծ ճկունության հաղորդում, բուֆետի վերաբացում. շենքային պայմանների և, հատկապես, լսարանների կահավորում ու բարեկարգում, համալսարանի տարածքի պատշաճ ջեռուցում, կրթության որակի բարձրացում և պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացում:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներն ամրագրված են ՇՊՀ-ի որակի

ապահովման և կառավարման հայեցակարգում: ՈՒսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման նպատակով ՄՈՒՀ-ում իրականացվում են մի շարք հարցումներ՝ ՇՊՀ-ի ուսանողների կողմից ՊԴԿ-ի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատում, Ուսանողների և շրջանավարտների կողմից ՄՈՒՀ-ի կազմակերպչական վարկանիշների գնահատում, ՇՊՀ-ի ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատում, ՇՊՀ-ի ուսանողների կողմից գիտելիքների գնահատման արդյունավետության և որակի գնահատում, ՇՊՀ-ի ուսանողների կողմից բուհում ստացած կրթության, ՄՈՒՀ-ի մասնագիտական և կազմակերպչական վարկանիշների գնահատում, ՇՊՀ-ի ուսանողների կողմից ՄՈՒՀ-ի մասնագիտական և կազմակերպչական գործընթացներից ակնկալիքների գնահատում, ՇՊՀ-ում հեռավար ուսուցման իրականացման գործընթացից ուսանողների գոհունակության և կարիքների գնահատում և այլն: Որակի ապահովման կենտրոնի կողմից տարին մեկ անգամ պարբերականությամբ հարցումներ են իրականացվել ուսանողների կողմից ՊԴԿ-ի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատման վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների համար հարցարաններում եղած հարցերը երբեմն բարդ և դժվար ընկալելի են: Հարցումների շարունակական բարելավումն ապահովելու նպատակով հարցաթերթերը վերանայվում են:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՇՊՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման կանոնակարգված մեխանիզմներ: Դիմորդների հավաքագրման գործընթացին նպաստում են նաև ՇՊՀ ավագ դպրոցը և ՇՊՀ քոլեջը, իսկ ՇՊՀ ավագ դպրոցի կողմից կազմակերպվող անվճար դասընթացները ՇՊՀ-ն դիմորդների համար դարձնում է առավել գրավիչ և հասանելի: Դիմորդների ընդունելության ցուցանիշները թույլ են տալիս եզրակացնելու, որ ուսանողների հավաքագրման մեխանիզմներն ընդհանուր առմամբ աշխատող են, սակայն որոշ ՄԿԾ-ների, այդ թվում՝ նոր ներդրված, գործող մեխանիզմներն ամբողջովին բավարար չեն լիակատար հավաքագրում իրականացնելու համար: Անհրաժեշտություն է զգացվում նոր՝ առավել արդյունավետ մեխանիզմների գործարկման:

ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների կարիքների բացահայտմանն ուղղված մի շարք հարցումներ: Փորձագիտական խումբը ողջունելի է համարում ՇՊՀ-ի քայլերը ուսանողների կարիքների բացահայտման ուղղությամբ, սակայն հարցաշարերի շատ, բազմաբովանդակ և խրթին լինելը կարող է վտանգել գործիքի լիարժեք և արդյունավետ աշխատանքը, նամանավանդ առաջին կուրսերում:

Հատկանշական է ՄՈՒՀ-ում ներդրված է ակադեմիական խորհրդատվությունների ծառայությունը, որը կարող է ուսանողների առաջընթացի ապահովման համար կարևոր և գործուն մեխանիզմ դառնալ, սակայն դեռևս անհրաժեշտություն կա մեծացնելու ուսանողների հետաքրքրությունն այս ծառայությունների նկատմամբ:

Դրական է նաև այն հանգամանքը, որ ՇՊՀ-ում գործող յուրաքանչյուր վարչական օղակ ունի հստակ սահմանված ընդունելության ժամեր, ինչպես նաև ուսանողների ու աշխատակիցների պնդմամբ, ուսանողները կարող են նաև աշխատակիցներին դիմել սահմանված ժամերից դուրս, որը հնարավորություն է տալիս ուսանողներին օժանդակություն ու ուղղորդում ստանալ ցանկացած պահի:

ՄՈՒՀ-ում ձևավորվել է Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժինը, որի նպատակներից է նաև աջակցել ուսանողներին և շրջանավարտներին իրենց կարիերայի ձևավորման մեջ, սակայն դեռևս անհարժեշտություն կա, որպեսզի բաժինը լիարժեք իրականացնի իր առջև դրված բոլոր գործառույթները և մշակի կարիերային նպաստող հստակ և համակարգային մեխանիզմներ: Գովելի է այն, որ դասախոսները նույնպես աջակցում են շրջանավարտներին աշխատանք գտնելու հարցում, սակայն այս գործընթացը համակարգման կարիք ունի:

Փորձագիտական խումբը գնահատում է ՄՈՒՀ-ի ջանքերը ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ: ՄՈՒՀ-ում ձևավորվել են ուսանողներին հետազոտության մեջ ներգրավելու հստակ մեխանիզմներ, ներկայումս անհրաժեշտ է գնահատել այդ մեխանիզմների արդյունավետությունը և քայլեր ձեռնարկել այդ մեխանիզմների նկատմամբ ուսանողների հետաքրքրվածությունը մեծացնելու ուղղությամբ: Ուսանողները կարիք ունեն նաև ձեռք բերելու հետազոտական կարողություններ (նաև վերլուծական), որոնք թույլ կտան նրանց իրականացնելու կիրառական հետազոտություններ և տպագրելու դրանք, այս ամենը իրաապես կանդրադառնա նաև տպագրվող հոդվածների որակի բարելավմանը:

Փորձագիտական խումբը հատկանշական է համարում այն, որ 2020 թ.-ից ՇՊՀ-ում ձևավորվել և գործում է նոր ՈՒԽ, որը ուսանողների իրավունքների պաշտպանության, նրանց խնդիրների վերհանման համար պատասխանատու մարմինն է, կառույցը սկսել է ակտիվորեն գործել, որը կարող է հանգեցնել ուսանողների ինքնավարության և ՄՈՒՀ-ում ունեցած դերի բարձրացմանը: ՈՒսանողական խորհուրդը նախաձեռնող է և գիտակցում է իր դերը:
Դրական է այն, որ ՇՊՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ և իրականացվում են բազմապիսի հարցումներ, աշխատանքները կրում եմ համակարգված բնույթ և իրականացվում են հստակ պարբերականությամբ: Հարցումները նպաստում են ուսանողների ընթացիկ խնդիրների վերհանմանը և դրանց օպերատիվ լուծմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՇՊՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ, իրականացվում է ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթաց, սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակացույց, գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին, որը սկսել է ակտիվորեն աշխատել, գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների

գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն բավարարում է Չափանիշ 4-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**։

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ն իր ՌԾ-ում նպատակադրել է ՄԿԾ-ների իրականացման համար ապահովել անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով։ ՇՊՀ-ի ՊԴ և ՈւՕ կազմերի տարակարգերը, պաշտոնների տեղակալման չափանիշները, մրցույթի անցկացման և ընտրության և/կամ ոչ մրցութային կարգով նշանակման, հեռացման ընթացակարգերը սահմանված են «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման» կանոնակարգում։ ՇՊՀ-ում ՊԴ կազմը ձևավորվում է մրցութային (պայմանագիր՝ 5 տարի ժամկետով, պրոֆեսորի և դոցենտի համար 1 անգամ՝ 1 տարի ժամկետով) և ոչ մրցույթային (պայմանագիր՝ 1 տարի ժամկետով) ձևերով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՊԴ կազմի մրցութային կամ ոչ մրցութային կարգով ձևավորման միջև տարբերակման հստակ մեխանիզմներ առկա չեն։ Անհրաժեշտությունից ելնելով՝ հրավիրվում են նաև դասախոսներ այլ ՄՈՒՀ-երից։

Ըստ 2016-2017, 2017-2018, 2018-2019 և 2019-2020 ուստարիների ռեկտորի հաշվետվությունների՝ ՊԴԿ-ի առնվազն 70%-ի համար ՇՊՀ-ն համարվում է հիմնական աշխատավայր։ ՊԴ կազմի գերակշիռ հատվածը (շուրջ 58%) ունի գիտական աստիճան և/կամ կոչում, ՊԴ կազմի շուրջ 7%-ը գործատու դասախոսներ են։ Ըստ փորձագիտական ուսումնասիրությունների՝ վերջին 3 տարիներին նկատվում է նոր ընդունված դասախոսների դինամիկ աճ՝ 2020-2021թթ.-ին կազմելով 53 հոգի։

Ուսումնաօժանդակ կազմի համար մրցույթներ չեն իրականացվում, այլ ընտրվում են՝ ելնելով կանոնակարգում նշված ընդհանրական պահանջներից, հիմնականում հաշվի են

առնում կրթական աստիճանը: ՄՈՒՀ-ում մշակված են ՊԴ կազմի տարակարգերի և ուսումնաօժանդակ կազմի պաշտոնի անձնագրեր:

ՄՈՒՀ-ը ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականության արդյունավետության գնահատում չի իրականացրել:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

ՄՈՒՀ-ն իր առջև խնդիր է դրել (2015-2019թթ. ՌԾ) յուրաքանչյուր ՄԿԾ-ի արդյունավետ իրականացման համար սահմանել դասախոսական կազմին ներկայացվող պահանջներ ու չափանիշներ: Պետք է փաստել, որ ՊԴ կազմի համալրման համար մինչ օրս այդ պահանջները և չափանիշները չեն սահմանվել:

ՇՊՀ-ում ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող առաջնային պահանջը համապատասխան բազային մասնագիտական կրթության առկայությունն է, կարևորվում են նաև գիտական աստիճանը և/կամ կոչումը:

Մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգով սահմանված են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարներին ներկայացվող պահանջներ՝ գիտական աստիճան և/կամ կոչում, առանձին դեպքերում առնվազն 5 տարվա գիտամանկավարժական գործունեություն և վերջին հինգ տարվա ընթացքում տպագրված առնվազն 3 հոդված՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում պահպանվում են նշյալ պահնջները:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ՇՊՀ-ում գործում է Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման» կարգը, որը հաստատվել է 2018 թ. և լրամշակվել՝ 2021 թ.: Կարգում հստակ ամրագրված են ՊԴ կազմի գնահատման ցուցիչներն ու բաղադրիչները՝

- մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաներ,
- գիտական, գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեություն,
- ուսումնամեթոդական, ուսումնական, ուսումնակազմակերպչական և գիտակազմակերպչական գործունեություն,
- ներհամալսարանական և արտահամալսարանական (հանրային) հասարակական գործունեություն:

Վարկանիշի ձևավորման համար օգտագործվում են տարբեր գործիքներ՝ դասախոսի աշխատանքի անհատական պլան, դասախոսի հաշվետվություններ տարբեր ձևաչափերով, օրինակ՝ հաշվետվություն աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ, դասախոսի գործունեության որակի արդյունավետության վարկանիշային տարեկան գնահատման

ձևաթերթ, դասախոսների և ուսանողների համար մշակված տարբեր հարցարաններ, հարցաթերթիկներ, ըստ նախապես հաստատված ժամանակացույցերի դասալսումներ:

Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական հանդիպումներից ստացված տվյալների՝ որոշ դեպքերում ուսանողները ՊԴ կազմին գնահատելիս ցուցաբերում են սուբյեկտիվ և անձնային վերաբերմունք: Ավելին, ուսանողների որոշ հատված տեղյակ չէ, որ անցկացված հարցումները ազդում են դասախոսների վարկանիշի ձևավորման վրա, իսկ ՊԴ կազմի մի մասը տեղյակ չէ վարկանիշի ձևավորման բոլոր բաղադրիչներից և հիմնվում է միայն ուսանողների կողմից իրականացված հարցումների արդյունքների վրա՝ համարելով դրանք սուբյեկտիվ գործոն:

Վարկանիշավորման արդյունքները, ըստ համանուն կարգի, ղեկավար կազմի կողմից կարող են օգտագործվել որպես հիմք՝ ՊԴ կազմի աշխատանքային պայմանագրերի վերակնքման, երկարաձգման կամ խզման, մրցութային ընտրությունների, պաշտոնական առաջընթացի, նյութական և բարոյական խրախուսման միջոցների կիրառման, ինչպես նաև կադրերի վերապատրաստման միջոցառումներ կազմակերպելու դեպքերում: Փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ դասախոսների վարկանիշավորման արդյունքների հիման վրա գործող պայմանագրերի խզում չի արձանագրվել, չեն արձանագրվել նաև կարգապահական տույժի ենթարկման դեպքեր: Բարձր վարկանիշի առկայությունը չի ազդում նաև դասախոսի աշխատավարձի չափի վրա: Նշվեց, որ արդյունքները հիմնականում ծառայել են կարիքների վերհանման և գործընթացների բարելավման համար, օրինակ՝ վերապատրաստումների կազմակերպման անհրաժեշտության արձանագրում և այլն: Վարկանիշավորման կարգը ներդրնելու և լրամշակելուց հետո իրականացվել են փորձնական հետազոտություններ արդյունավետությունը հասկանալու համար, արդյունքները դեռևս ամփոփված չեն:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ

ՇՊՀ-ում 2013թ.-ից ներդրվել է «ՊԴ և ՈւՕ կազմերի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման» կանոնակարգը, ըստ որի, վերապատրաստումներն իրականացվում են պլանավորված պարտադիր և/կամ բացահայտված կարիքներից ելնելով: Գործող կարգի համաձայն՝ ՊԴ կազմի վերապատրաստումն ու մասնագիտական որակավորման բարձրացումն իրականացվում է երկու ուղղություններով՝ ընդհանուր-պարտադիր և հատուկ-մասնագիտական: Համապատասխանաբար, վերապատրաստումներն իրականացվում են պլանավորված պարտադիր և/կամ բացահայտված կարիքներից ելնելով (ըստ ՊԴ կազմի կարիքների վերհանման հարցումների արդյունքների և ամբիոններ փոխանցված վարկանիշավորման արդյունքների): Ըստ ՄՈՒՀ-ի վիճակագրական տվյալների՝ ՇՊՀ ՊԴ կազմը մասնակցել է ՇՊՀ-ի, այլ կազմակերպությունների և բուհերի կողմից կազմապերպված վերապատրաստումների, աշխատաժողովների, սեմինարների: Մասնավորապես՝ 2018-2019թթ. վերապատրաստվել է

118 դասախոս (63-ը՝ ոչ մասնագիտական, 55-ը՝ մասնագիտական), 2019-2020թթ.՝ 174 դասախոս (127-ը՝ ոչ մասնագիտական, 47-ը՝մասնագիտական)։ Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս՝ ՄՈՒՀ-ում գերակշռում են ոչ մասնագիտական վերապատրաստումները և մասնագիտական վերապատրաստումներին ՇՊՀ-ն տարեկան բյուջեով առանձին ֆինանսական միջոցներ չի հատկացնում։

ՇՊՀ-ում ՊԴ կազմի վերապտրաստումներն իրականացվում են նաև դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում (ՆՈՐԿԵՆՏ ծրագրի շրջանակներում 2018-2019թթ.-ին վերապատրաստվել է 33 աշխատակից, 2019 թ.-ին ERASMUS+ ծրագրի շրջանակներում /ABionet “Communication skills for professionals” and “Science to start-up”/ վերապատրաստվել է 11 աշխատակից)։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՊԴ կազմը դեռևս կարիք ունի նեղ մասնագիտական և օտար լեզվի (անգլերեն) կարողությունների զարգացմանը նպաստող վերապատրաստումների։

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը։

ՇՊՀ-ում 2019-2020 ուստարվա տվյալներով աշխատում է 255 դասախոս, որոնցից 148-ը՝ շուրջ 58%-ը, ունեն գիտական աստիճան (17-ը՝ շուրջ 6.7%, գիտությունների դոկտորի աստիճան, 131-ը՝ մոտ 51.4%, գիտությունների թեկնածուի աստիճան)։ Դասախոսներից 121-ը՝ շուրջ 47.7%-ը, ունեն գիտական կոչում (1 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 16 պրոֆեսոր՝ շուրջ 6.3%, 104 դոցենտ՝ շուրջ 40.8%)։ Երիտասարդ դասախոսները (մինչև 35 տարեկան) կազմում են ՊԴ կազմի 16.1%, միջին տարիքի դասախոսները (35-ից 65 տարեկան)՝ 69.4%, բարձր տարիքի դասախոսները՝ 14.5%։ 2016-2017 ուստարվա համեմատ արձանագրվել է բարձր տարիքի դասախոսների տոկոսային հարաբերության նվազում՝ 15.9%-ից մինչև 14.5%։ Միևնույն ժամանակ նկատվել է նաև երիտասարդ դասախոսների քանակի նվազում՝ 18.7% -ից կազմելով 16.1%։

ՊԴ կազմի կայունության ապահովման և սահուն սերնդափոխության իրականացման համար ՇՊՀ-ն իրականացնում է որոշակի քայլեր, մասնավորապես՝ մագիստրոսական կրթական ծրագրերի շրջանավարտներին ուղղորդում է հետազոտողի ԿԾ-ով կրթությունը շարունակելու, ներկայումս 8 աշխատակիցներ (դասախոսներ և ՈւՕ կազմի ներկայացուցիչներ) կրթությունը շարունակում են հետազոտողի կրթական համակարգում։ Միաժամանակ պետք է նշել, որ համատեղող և/կամ ժամավճարային կարգավիճակ ունեցող մասնագետները չեն գերազանցում ՊԴ կազմի կազմի 26%-ը։

Փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ ՇՊՀ-ն կարիք ունի երիտասարդ և պրակտիկ աշխատանքային փորձ ունեցող դասախոսներով համալրման։

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր։

ՇՊՀ-ում գործում են ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման որոշակի մեխանիզմներ, մասնավորապես՝ գիտահետազոտական, գիտամեթոդական գործունեության խրախուսման և խթանման: Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ում դեռևս չի հաստատվել Մենթորության քաղաքականությունը, սակայն փորձառու դասախոսները մշատեպես աջակցում և ուշադրության կենտրոնում են պահում սկսնակ դասախոսներին՝ տրամադրելով խորհրդատավություններ և օժանդակելով ընթացիկ աշխատանքներում:

Որպես մեխանիզմներ գործում են նաև հետևյալ կանոնակարգերը՝ «ՇՊՀ-ում ասպիրանտուրայի/հայցորդության ընդունելության և ուսուցման», «ՇՊՀ-ի ՊԴ և ՈւՕ կազմերի ձևավորման», «ՇՊՀ-ի ՊԴ և ՈւՕ կազմերի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման»: Այցից պարզ դարձավ, որ դրանք գործուն կարգեր են:

ՇՊՀ-ի գիտական տեղեկագրում հոդվածները տպագրվում են անվճար, որը նպաստում է գիտական աստիճան և/կամ կոչում ձեռք բերելուն:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

2017թ.-ին ՄՈՒՀ-ն իրականացրել է ենթակառուցվածքային փոփոխություններ՝ փորձելով իրականացնել մարդկային ռեսուրսի օպտիմալացում: Օպտիմալացումից հետո հստակեցվել է վարչական և ուսումնաօժանդակ կազմի գործառույթները, մշակվել են համապատասխան պաշտոնի անձնագրեր:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է դիտարկում, որ մրցունակ կադրերի ներգրավման նպատակով ՄՈՒՀ-ում գործում է պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման կանոնակարգ, սակայն անհրաժեշտություն կա հստակ չափանիշներով տարանջատել, թե ՊԴ կազմը որ պարագայում կարող է ընդունվել աշխատանքի մրցութային և որ պարագայում՝ ոչ մրցութային ձևով, որը կարող է մեծացնել դասախոսի աշխատանքի ընդունվելու պայմանների օբյեկտիվությունը և թափանցիկությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ն անհրաժեշտություն ունի գնահատելու ՊԴ կազմի ընտրության քաղաքականության արդյունավետությունը, որը թույլ կտա ՄՈՒՀ-ին հասկանալու, թե տվյալ մեխանիզմները որքանով են թույլ տալիս իրեն ներգրավելու մասնագիտական բարձր որակներ ունեցող ՊԴ և ՈՒՕ կազմ:

Գովելի է, որ ՄՈՒՀ-ում առկա են ՊԴ կազմի ընտրության պահանջներ՝ մասնագիտական կրթություն, գիտական աստիճան, կոչում և այլն, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ միայն այս չափանիշներով առաջնորդվելը ՄՈՒՀ-ին ոչ միշտ հնարավորություն կտա գտնելու թիրախավորված և մասնագիտական բարձր կարողություններ ունեցող մասնագետների: Հրավիրյալ դասախոսների առկայությունը թույլ է տալիս ՄՈՒՀ-ին անձնակազմը համալրել նաև առավել փորձառու մասնագետներով, իսկ

պրակտիկ դաշտի մասնագետները նպաստում են ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը:

Գովելի է, որ ՄՈՒՀ-ում ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզեր կարող են ղեկավարել այն դասախոսները, ովքեր ունեն գիտական աստիճան, կոչում և հետազոտական աշխատանք գրելու փորձառություն:

Դրական է, որ ՇՊՀ-ում բազմագործոն գնահատման հիմքի վրա իրականացվում է ՊԴ կազմի փորձնական վարկանիշավորման գործընթաց, սակայն ՄՈՒՀ-ը պետք է հավասարաչափ կիրառի վարկանիշավորման բոլոր բաղադրիչները՝ չշեշտադրելով միայն ուսանողների կողմից ՊԴ կազմին գնահատող հարցումները, այլապես կարող է վտանգվել նոր ներդված մեխանիզմի արդյունավետությունը և ՊԴ կազմի կողմից դրա կարևորումը: Վարկանիշավորման համակարգի լիարժեք օգտագործումը թույլ կտա ՄՈՒՀ-ում բարձրացնել դասավանդման գործընթացի արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՄՈՒՀ-ի ՊԴ կազմի համար իրականացվում են մի շարք վերապատրաստումներ՝ օգտագործելով նաև արտաքին դրամաշնորհների հնարավորությունները: Ողջունելի է, որ վերապատրաստումները միտված են և՛ ընդհանրական, և՛ մասնագիտական կարողությունների զարգացմանը, սակայն անհրաժեշտ է, որ դրանք լինեն պլանավորված՝ նաև գնահատելով վերապատրաստումների արդյունավետությունը, որը թույլ կտա գնահատելու մասնագետի առաջընթացը և արժանահավատ համարելու վերապատրաստման արժեքը: Անհրաժեշտություն է նկատվում ավելացնելու մասնագիտական վերապատրաստումների քանակը, որպեսզի ՊԴ կազմը կարողանա զուգահեռ քայլել մասնագիտական զարգացումներին:

ՊԴ կազմի 70%-ի համար ՇՊՀ-ն հիմնական աշխատավայր է, որն ապահովում է ՊԴ կազմի կայունությունը, սակայն այն իր մեջ պարունակում է նաև որոշակի ռիսկեր ուսանողներին պրակտիկ հմտություններ փոխանցելու տեսանկյունից, անհրաժեշտ է մշակել այս ռիսկի հաղթահարման հստակ մեխանիզմներ:

Դրական են ՄՈՒՀ-ի քայլերը սեփական կադրերի զարգացման, ՊԴ կազմի կայունության ապահովման և սահուն սերնդափոխության իրականացման համար, դա է փաստում այն, որ ՇՊՀ-ի 8 աշխատակիցներ կրթությունը ներկայումս շարունակում են հետազոտողի կրթական համակարգում:

ՄՈՒՀ-ում գործում են ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման որոշ մեխանիզմներ, սակայն անհրաժեշտ է, որպեսզի այդ մեխանիզմներն առավել կատարելագործվեն՝ նպաստելով ՊԴ կազմի գիտական արդյունքի տպագրությունների մեծացմանը տեղական և միջազգային բարձր վարկանիշ ունեցող հանդեսներում:

ՇՊՀ-ն իր ռազմավարական նպատակների իրականացման համար ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ ՇՊՀ-ում գործում են ՊԴ և ՈւՕ անձնակազմի ընտրության հստակ քաղաքականություն և տարբեր ընթացակարգեր, ներդրված է ՊԴ կազմի վարկանիշավորման կարգը, իրականացվում են ՊԴ կազմի մասնագիտական և ընդհանրական

կարողությունների զարգացմանը միտված վերապատրաստումներ, ունի անհրաժեշտ որակավորում ունեցող ՊԴ կազմ, քայլեր է իրականացնում ՊԴ կազմի կայունության ապահովման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է Չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Նախորդ հավատարմագրման արդյունքում տրամադրված խորհրդատվությունների հիման վրա ՇՊՀ-ն մշակել է բարելավման գործողությունների պլան, որտեղ նախատեսված է եղել նաև մշակել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության հստակ ուղղությունները: Այս ուղղությամբ ՄՈՒՀ-ն ամբիոնների մակարդակով առանձնացրել է որոշ գիտական ուղղություններ, սակայն պարզ չէ, թե ՇՊՀ-ի համար ինստիտուցիոնալ մակարդակում որոնք են գիտական առաջնահերթությունները, դրանք սահմանված չեն: ՄՈՒՀ-ը վերջին տարիներին բյուջեի շուրջ 2.5%-ը տրամադրել է հետազոտությանը և զարգացմանը, սակայն գնահատված չի եղել, թե որքան ֆինանսական միջոցներ են իրականում անհրաժեշտ որդեգրած հետազոտական ուղղություններով կոնկրետ արդյունքների հասնելու համար: Ամբիոններում մշակված չեն գիտական ուղղությունների իրականացման գնահատման առանցքային ցուցիչներ, որոնք տեսանելի կդարձնեին, թե ինչպիսի հաջողություններ պետք է նրանք գրանցեն իրենց ուղղություններում: Ինչ վերաբերում է ինստիտուցիոնալ մակարդակով ՄՈՒՀ-ի գիտական հետաքրքրություններին, ապա փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ղեկավար անձնակազմը ՄՈՒՀ-ի համար դեռևս չի կանխորոշել:

ՇՊՀ-ն, ուսումնասիրելով ՀՀ գիտության ոլորտում զարգացման միտումները և Շիրակի մարզի կարիքները և առաջնահերթությունները, 2019թ-ին մշակել է Գիտության և հետազոտության զարգացման հայեցակարգ (ԳԶՀ), որտեղ նպատակներ և խնդիրներ բաժնից առանձնացվել են նաև հետևյալ շեշտադրումները.

ա. Ժամանակակից գիտակրթական, գիտահետազոտական զարգացումները տանել այն ուղղությամբ, որ վերջինս նպաստի Շիրակի մարզի գիտահետազոտական, տնտեսական և տեխնոլոգիական ոլորտում առաջնակարգության ապահովմանը,

բ. Ապահովել և խթանել պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածությունը հետազոտական, գիտահետազոտական, գիտամեթոդական, գիտակրթական և նորարարական տեղեկատվական ոլորտի աշխատանքներում,

գ. Գիտահետազոտական, գիտակրթական, գիտամեթոդական, հետազոտական և նորարարական արդյունքների հենքով տարածաշրջանում պահանջված ծառայությունների մատուցում, ինչպես նաև այդ արդյունքների առևտրայնացում:

Վերոնշյալ կետերի շրջանակում պետք է փաստել, որ դեռևս ՄՈՒՀ-ում ընդհանուր առմամբ բացակայում են տարածաշրջանի կարիքները բացահայտող հետազոտությունները: Ինչ վերաբերում է Հետազոտական և գիտական աշխատանքներում ՊԴ կազմի ներգրավվածության ապահովմանը և խթանմանը, ապա անհրաժեշտ է ընդգծել, որ գիտության և հետազոտության ոլորտում ընդգրկված աշխատակիցները հիմնականում նույն անձիք են: Հարկ է նշել, որ այս խնդրի լուծման համար ՄՈՒՀ-ը որոշակի քայլեր ձեռներակել է (առավել մանրամասն չափորոշիչ 3-ում): Նաև պետք է շեշտել, որ ՄՈՒՀ-ը դեռևս չի պատկերացնում ստացված գիտական արդյունքի առևտրայանացման ճանապարհները, գնահատված չեն առևտրայնացնելու համար պահանջվող ծախսերը, ստացված օգուտը և առկա ռիսկերը:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

2015-2019թթ. ՌԾ-ի Հետազոտությունը և զարգացումն տիրույթում նկարագրված խնդիրներից ՄՈՒՀ-ն առանձնանում է նաև հետևյալը՝ ՌԾ-ի հիման վրա մշակել և ներդնել երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ կոնկրետ ծրագրեր, ինչպես նաև այդ ծրագրերի արդյունքում իրականացված հետազոտական աշխատանքների վավերացման մեխանիզմներ: Այս խնդրի լուծման նպատակով ՄՈՒՀ-ը ներդրել և ձեռք է բերել մի շարք կարճաժակետ և միջնաժամկետ ծրագրեր: 2016թ.-ից ՄՈՒՀ-ն իր միջոցների հաշվին հայտարարել է պայմանագրային թեմատիկ ֆինանսավորվող դրամաշնորհի մրցույթ: 2016-2020թթ.-ի ընթացքում ներկայացվել է 22 հայտ, որոնցից ֆինանսավորում է ստացել 6 հայտ, իսկ 2021թ.-ին ոչ մի հայտ չի ֆինանսավորվել ՄՈՒՀ-ի կողմից, քանի որ մերժված հայտերը որակապես չեն համապատասխանել ներկայացվող պահանջներին[5]:

Ֆինանսավորված դրամաշնորհների շրջանակներում մասնակիցները պարտավորվում են հրապարակել առնվազն 8 գիտական, գիտամեթոդական հոդվածներ՝ տպագրված ՀՀ ԲՈԿ-ի, ՌԴ ԲՈՀ-ի կողմից ճանաչված, Impact Factor-ով օժտված կամ РИНЦ-ում գրանցված մասնագիտական ամսագրերում: Ներբուհական դրամաշնորհային ծրագրերի արդյունքում պաշտպանվել են 2 մագիստրոսական թեզ և 1 ավարտական աշխատանք: Պետք է փաստել, որ ներքին դրամաշնորհային ծրագրի ընթացակարգում չկա սահմանափակում ֆինանսավորել որևէ կոնկրետ գիտական ուղղություն, միևնույն ժամանակ բացակայում է վերլուծությունը առավել շահավետ գիտական ուղղվածություն ընտրելու վերաբերյալ:

[5] ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԵԼ Է ՄՈՒՀ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և SS ամբիոնների կողմից ՀՀ պետական բյուջեից և միջպետական ֆինանսավորմամբ իրականացվում են գիտական հետազոտություններ, 2016-2017թթ.-ին՝ 4, 2018թ.-ին՝ 5, 2019 թ.-ին՝ 5, 2020 թ.ին՝ 5 գիտական ծրագիր:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՄՈՒՀ-ում 2014 թ.-ից ներդրվել և գործում է աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգը, ըստ որի տրամադրվում է հավելավճար՝ ըստ ընթացակարգում ամրագրված գիտական գործունեության տեսակների: Այդ ընթացակարգում նկարագրված են գործընթացները, ըստ որի նախատեսվում են հավելավճարներ գիտահետազոտական գործունեություն և գիտական արդյունք ապահոված աշխատակիցներին: Որպես գիտական արդյունք նախանշված են տարբեր ամսագրերում տպագրությունները, գիտամեթոդական աշխատանքները և մենագրությունները, գիտական գյուտի պետական հեղինակային վկայագիր ունենալը, միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ լինելը, մենագրությունների, դասագրքերի, գիտական հոդվածների գրախոսումը: Ընդ որում, գիտական գյուտի արտոնագրման դիմաց տրվող հավելավճարը հավասար է միջազգային մասնագիտական կազմակերպության անդամակցության հավելավճարին և կրկնակի զիջում է միջազգային վարկանիշավորում ունեցող ամսագրերում տպագրություններից:

Ինչպես արդեն նշվել է, համալսարանում գործում է նաև ՇՊՀ-ի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման ընթացակարգը, որտեղ մանրամասն նկարագրված են դրամաշնորհին դիմելու, մրցույթին մասնակցելու և արդյունքները ներկայացնելու դրույթները:

ՄՈՒՀ-ի ՊԴ կազմի կողմից 2017թ.-ին տպագրվել է 189 հոդված, 2018թ.-ին՝ 164, 2019թ.-ին՝ 216, իսկ 2020թ-ին՝ 169 հոդված: Հոդվածները ներկայացվել են ըստ ամբիոնային ուղղությունների:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՄՈՒՀ-ը 2020թ. հաստատել է «Գիտության և հետազոտության միջազգայնացման քաղաքականություն», որտեղ նկարագրված են այն քայլերը, որոնք անհրաժեշտ են գիտության միջազգայնացման ոլորտում միջազգային ռազմավարական գործընկերության և գիտության ոլորտում արդյունքներ գրանցելու համար: Պետք է նշել, որ այդ քայլերը դեռևս կիրառական բնույթ չունեն, բացի այդ քաղաքականությունում նշված բոլոր քայլերի իրականացման համար անհրաժեշտ կլինեն զգալի ֆինանսական ռեսուրսներ, որոնք ՄՈՒՀ-ը դեռևս չունի:

Գիտության միջազգայնացումը խթանելու համար, ՄՈՒՀ-ն ունի որոշակի մեխանիզմներ՝ դրամական պագևավճար նախատեսելով միջազգային ամսագրերում կամ պարբերականներում տպագրվող հեղինակներին: Միևնույն ժամանակ սահմանված քաղաքականությամբ կամ դրանից բխող փաստաթղթերում ամրագրված չեն քանակական և որական այն չափելի ցուցանիշները, որոնց ձգտելու է հասնել ՄՈՒՀ-ը իր երկարաժակետ նպատակներում:

Ըստ ինքնավերլուծության՝ վերջին 5 տարիներին միջազգային վարկանիշավորում ունեցող գիտական ամսագրերում տպագրված հոդվածների թիվը աճել է՝ 4-ից դառնալով 16 /2016-2020թթ. տվյալներ/: Ինքանվերլուծությունից կարելի է փաստել, որ Համալսարանը գիտահետազոտական գործունեության շրջանակներում համագործակցում է 17 եվրոպական երկրների, 6՝ ԱՊՀ երկրների և 7 ՀՀ գիտահետազոտական գործունեություն ծավալող կազմակերպությունների և կառույցների հետ՝ որոշակիորեն ընդլայնելով համագործակցության շրջանակը:

ՈՒսումնասիրություններից պարզ դարձավ, որ 2018-2022թթ. ՇՊՀ-ի ՊԴ կազմի կողմից տպագրվել 14 հոդված, որոնք ունեն ազդեցության գործակից: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գիտական տպագրությունների զգալի մասը բաժին է ընկնում բնագիտամաթեմատիկական ուղղությանը, հիսուն տոկոս դեպքերում հոդվածները համատեղ են այլ գիտահետազոտական ինստիտուտների հետ, տպագրությունների հեղինակները կրկնվում են՝ ապահովելով աշխատակիցների քիչ ներգրավվածություն: Ազդեցության գործակիցը տատարվում է 0,4 - 3,2 սահմաններում:

ՄՈՒՀ-ը որպես գիտահետազոտական աշխատանքների և գործունեության միջազգայնացման չափանիշ նշում է պայմանագրային փոխհամաձայնությունները արտասահմանյան գիտահետազոտական գործունեություն ծավալող կազմակերպությունների և կենտրոնների հետ:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Նախորդ հավատարմագրման արդյունքում տրամադրված խորհրդատվությունների հիման վրա, ՇՊՀ-ն ԹՎԳԾ-ում նախատեսել է մշակել և ներդնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականություն և ընթացակարգեր: Նշյալն իրականացնելու համար ՄՈՒՀ-ը մշակել և ներդրել է գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգը, որով ապահովում է ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում, բացի այդ, ըստ այդ կարգի իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքները ներդրվելու են ուսումնական գործընթացում, այցից պարզ դարձավ, որ ուսումնական գործընթացում դրանք բավարար ներկայացվածություն չունեն:

Հետազոտական կարողությունները բարձրացնելու նպատակով ՄՈՒՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում ներդրվել են որոշ առարկաներ՝ Հետազոտական աշխատանքների իրականացման մեթոդաբանություն, Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և այլն, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողներն ունեն հետազոտական հմտությունների պակաս: Պետք է նաև փաստել, որ ՄՈՒՀ-ը դեռևս չի գնահատել, թե որքանով են ներդրված առարկաները նպաստում ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը և ուսանողների կողմից իրականացված հետազոտական աշխատանքների որակի բարձրացմանը:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը, ըստ տրամադրված խորհրդատվությունների, ամբիոններում մշակել է գիտական ուղղություններ, սակայն պարզ չէ, թե դրանք որքանով են համընկնում ՄՈՒՀ-ի ինստիտուցոնալ մակարդակում գիտահետազոտական ոլորտում ունեցած առաջնահերթություններին: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է առնվազն հինգ տարիների համար նշել այն կոնկրետ թեմաները, որոնց շրջանակում կատարվելու են գիտական հետազոտությունները: Կոնկրետ թեմաների շուրջ ուժերի կենտրոնացումն օգտակար է ռեսուրսներն արդյունավետ կիրառելու և առավելագույն արդյունք ունենալու տեսանկյունից: Այս ամենն իրականացնելուց հետո է միայն անհրաժեշտ մշակել ամբիոնային մակարդակում կոնկրետ ուղղություններ՝ գնահատման քանակական և որակական հստակ ցուցիչներով: Ցուցիչները հնարավորություն կտան առավել տեսանելի դարձնել գրանցած առաջընթացը, միևնույն ժամանակ ամբիոնների վրա կդրվի հստակ պարտավորություն արդյունք ապահովելու տեսանկյունից: Փորձագիտական խմբի պնդմամբ՝ ՇՊՀ առաջնահերթությունները մշակելուց հետո անհրաժեշտ է ունենալ նաև համապատասխան հմտություններով օտված աշխատանքային խումբ կամ ստորաբաժանում, որը կկարողանա և ունակ կլինի գնահատել դասախոսների, գիտնականների, ուսանողների կողմից առաջարկվող թեմայի համապատասխանությունը ՄՈՒՀ-ի առաջնահերթություններին, ինչպես նաև կգնահատի այդ թեմայի հնարավոր ֆինանսական ապահովումը արտաքին ռեսուրսների հաշվին, խմբի առկայությունը հնարավորություն կտա ուղղորդելու գիտնականներին իրենց աշխատանքի արդյունավետությունը բարձրացնել: Մյուս կողմից այդ խմբի կողմից կապահովվեն գրավոր դրամաշնորհային առաջարկներ և ծանուցումներ անմիջապես դասախոսներին, գիտնականներին էլեկտրոնային նամակների տեսքով, որը նրանց համար կլինի ուղղորդիչ իրենց թեմաների ընտրության հարցում, ավարտական թեզերի թեմաների ընտրության հարցում: Փորձագիտական խմբի կարծիքով դասախոսների հետ անմիջական կապի ապահովումը կմեծացնի աշխատանքի արդյունավետությունը և կնվազեցնի տեղեկատվության կորուստը կամ թերի ծանուցման վտանգը:

Թեև ՄՈՒՀ-ում գործող գիտահետազոտական աշխատանքները խթանելու և աշխատակիցներին այդ հետազոտություններում ընդգրկելու համար նախատեսված ընթացակարգերն ունեցել են իրենց դրական ազդեցությունը, սակայն ներգրավվածություն ապահովելու միայն «փափուկ» գործիքների կիրառումը (դրամական պարգևատրում, ՄՈՒՀ-ի ժողովածուում անվճար տպարգրություն և այլն) բավարար չէ կարճ ժամանակում անհրաժեշտ և բավարար արդյունքի հասնելու համար: Չնայած որ ՄՈՒՀ-ի ջանքերն այս ուղղությամբ նկատելի են, սակայն միևնույն ժամանակ, ոչ բավարար: Դեռևս չեն գործում առարկայական այնպիսի համակարգեր և մեխանիզմներ, որոնք գիտական աշխատանքներով զբաղվելու և գիտական արժեք ստեղծելու գործընթացը կդարձեն հրապուրիչ և շահավետ ՊԴ կազմի համար: Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՊԴ կազմի համար նախատեսված վերապատրաստման պարտադիր դասընթացներ ներմուծելու միջոցով ՄՈՒՀ-ը

հնարավորություն կունենա զարգացնել նրանց հետազոտական կարողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն «արժեքավոր» գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու համար, ներառյալ լեզվի իմացությունը՝ հաշվի առնելով այն, որ ստեղծված գիտական արժեքը պետք է ճանաչվի և գնահատվի միջազգային հանրության ոլորտային հեղինակավոր ամսագրերի և կազմակերպությունների կողմից:

Մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ում գիտության միջազգայնացման վերաբերյալ առկա քաղաքականությունը սահմանափակվում է ՇՊՀ-ի աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգով, ընթացակարգի վերաբերյալ դասախոսների տեղեկացվածությունը փորձագիտական խմբի հանդիպումների արդյունքում գնահատվում է ցածր՝ վտանգելով աշխատակիցների ներգրավվածությունը: Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի կողմից ներբուհական դրամաշնորհների տրամադրումը, նամանավանդ այն, որ ներբուհական դրամաշնորհային ծրագիրը ֆինանսավորման ներկայացնելիս կնքվում է պայմանագիր/համաձայնագիր, որի համաձայն խումբը թեմայի շրջանակներում իրականացված արդյունքները պարտավորվում է հրապարակել առնվազն 8 գիտական, գիտամեթոդական հոդվածներում, որոնք տպագրված կլինեն ՀՀ ԲՈԿ-ի, ՌԴ ԲՈՀ-ի կողմից ճանաչված, Impact Factor-ով օժտված կամ РИНЦ-ում գրանցված մասնագիտական ամսագրերում: Փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին դրամշնորհային ծրագրերն առավել արդյունավետ կլինեին, եթե այսուհետ բխին ՄՈՒՀ-ի ՝ գիտության ոլորտում ունեցած առաջնահերթություններից:

ՇՊՀ-ի աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգում ազդեցության միավոր ունեցող ամսագրերում տպագրության համար տրամադրվում է ֆիքսված գումար, և չկա տարբերակում օրինակ 0.3 և 3.5 ազդեցության միավորների տպագրությունների միջև, որը կարող է բացասաբար անդրադառնալ ՊԴ կազմի առավել արժեքավոր հոդված տպագրելու շարժառիթի վրա:

ՄՈՒՀ-ը որպես գիտահետազոտական աշխատանքների և գործունեության միջազգայնացման չափանիշ նշում է պայմանագրային փոխհամաձայնությունները արտասահմանյան գիտահետազոտական գործունեություն ծավալող կազմակերպությունների և կենտրոնների հետ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այս փաստը, սակայն միևնույն ժամանակ արձանագրում է այդ համագործակցության ոչ արդյունավետությունը, քանի որ համատեղ միջազգայնորեն ընդունելի վարկանիշավորված ամսագրերում հոդվածները և տպագրությունները խիստ սահավաթիվ են:

Դրական է, որ ՄՈՒՀ-ը պատկերացնում է, թե ինչ միջացառումներ է անհրաժեշտ իրականացնել գիտության միջազգայնացման ոլորտում հաջողությունների հասնելու համար, սակայն բացակայում է այս փաստաթղթից բխող երկարաժամկետ, միջնաժամկետ, կարճաժամկետ պլանավորումները, դրանց կատարողականները: Բացի այդ, քաղաքականության իրականացումը պահանջում է զգալի ֆինանսական ռեսուրսներ, փորձագիտական խումբն ունի մտավախություն, որ ՄՈՒՀ-ը չի կարողանա եղած միջոցներով ամբողջովին իրականացնել այն: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը պետք է հետևողականություն դրսևորի իր իսկ սահմանած քաղաքականությունն իրագործելու

ուղղությամբ, պլանավորի կոնկրետ գործողություններ, կոնկրետ ժամանակահատվածում՝ գտնելով և տրամադրելով համապատասխան ներքին և արտաքին ռեսուրսներ:

Թեև ՄՈՒՀ-ը գործադրում է գրագողության դեմ պայքարի ջանքեր, սակայն դեռևս գրագողության դեպքեր որպես այդպիսիք չեն բացահայտվել, ուստի գործիքի արդյունավետությունը կարիք ունի գնահատման և դրա հիման վրա նոր մեխանիզմների ներդրման: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ներքին դրամաշնորհային ծրագրերի արդյունքները ՄՈՒՀ-ը փորձում է ներդնել ուսումնական գործընթացում, սակայն միայն այդ նյութերով սահմանափակվելը, ըստ փորձագիտական խմբի, բավարար չէ:
Կարևորվում է այն, որ բակալավրիատի և մագիստրոսական ծրագրերում ներդրված են հետազոտական կարողություններ ձևավորող առարկաներ, սակայն արդյունքները չեն գնահատվում, որը կարող է խոչընդոտել ուսանողների հետազոտական հմտությունների լիարժեք ձեռքբերումը և կիրառումը հետազոտական աշխատանքներում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՇՊՀ-ում սահմանված չեն ինստիտուցիոնալ մակարդակով հետազոտական առաջնահերթություններ և դրանց գնահատման ցուցիչներ, գնահատված չէ գիտությանը տրամադրվող անհրաժեշտ ռեսուրսը, ՄՈՒՀ-ում միջնաժակետ և կարճաժամկետ ծրագրեր են համարվում միայն ներքին դրամաշնորհային ծրագրերը, առկա չեն արտաքին դրամաշնորհային ծրագերի դիմելու և հաջողության հասնելու անհրաժեշտ փորձ և հմտություն, ինչպես նաև այդ փորձի տարածումը ՊԴ կազմի շրջանում, գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացման ուղղությամբ առկա է միայն քաղաքականություն, սակայն այն դեռևս չի վերածվել հստակ քայլերի, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ուսումնական ու աշխատանքային միջավայրի շարունակական բարելավումը ՇՊՀ-ի 2015-2019թթ.-ի ՌԾ-ի խնդիրներից (7.1) մեկն է եղել: ՇՊՀ-ն ունի 22039մ² մակերես զբաղեցնող շինություններ, ընդ որում, շինությունների ծավալը 2016-2017թթ.-ին աճել է 5819մ²: ՇՊՀ-ն իր գործունեությունն

իրականացնում է երկու շենքերում: Գլխավոր ուսումնական մասնաշենքը կազմում է 10002.87մ², իսկ երկրորդ մասնաշենքը՝ 1125.87մ²: 2017 թ.-ից գլխավոր մասնաշենքը բարեկարգվել և համալրվել է նիստերի դահլիճով (Լրացուցիչ և շարունակական (ցկյանս) կրթության կենտրոն), «Բանականության բանալի» ակումբով, Լրացուցիչ և շարունակական կրթության ռեսուրս կենտրոնով, Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի սենյակով, Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի (ԳՈՒԽՆՏՏԿ), ակադեմիական խորհրդատվությունների սենյակով, ինչպես նաև բուֆետով: Նիստերի դահլիճը, ռեսուրս կենտրոնը, ԱՀՀԿԿ-ի սենյակը հեռաուսուցում իրականացնելու համար համալրված են համապատասխան սարքավորումներով: Անհրաժեշտ է նշել, որ ռեսուրսների համալրումը ՇՊՀ-ն իրականացրել է հիմնականում միջազգային ծրագրերից եկած ֆինանսական մուտքերից: ՇՊՀ-ի գլխավոր մասնաշենքում համացանցի հասանելիությունը ապահովվում է «Սերվերի սենյակ»-ում և ստորաբաժանումներում տեղադրված 17 WiFi-Router-ների և 36 Switch-ների օգնությամբ:

ՇՊՀ-ն ունի պրոյեկտորներով և էկրաններով համալրված լսարաններ, որոշ լսարաններ կահավորված են նաև SmartBoard գրատախտակներով, միաժամանակ առկա են նաև շարժական պրոյեկտորներ (2 հատ) և էկրան: Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի լաբորատորիաների թիվը 10-ն է, որոնք զինված են սարքավորումներով: 2019թ.-ին ERASMUS+ ABioNet ծրագրով Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում ստեղծվել է Կենսատեխնոլոգիայի լաբորատորիա՝ համալրված լաբորատոր սարքերով: Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում առկա է նաև «Քիմիական նյութերի պահեստարան», որտեղ ապահովված են անվտանգության բոլոր կանոնները:ՇՊՀ-ն ունի նաև լինգաֆոնային կաբինետ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այն չի գործում, ՄՈՒՀ-ը պլանավորում էր հիմնել նորը: Գլխավոր մասնաշենքում տեղակայված է 2 մարզադահլիճ, որոնք կահավորված են համապատասխան գույքով և սարքավորումներով:ՇՊՀ 2-րդ մասնաշենքում գլխավորապես իրագործվում է (բացի համահամալսարանական առարկաներից) ռազմական մասնագիտությունների ուսումնական գործընթացը՝ սկսած 2016թ.-ից: Մինչ այդ՝ ուսումնական գործընթացը կազմակերպվել է անբարենպաստ շենքային պայմաններում: Ռազմական ամբիոնում տեղադրված է 2 համակարգիչ՝ տպիչներով, ինչպես նաև ապահովված է հասանելիություն համացանցին ու ներքին ցանցին:ՄՈՒՀ-ն ունի նաև հիմնանորոգված հյուրատուն՝ ապահովված անհրաժեշտ պայմաններով: Ըստ ինքնավերլուծության՝ բոլոր ուսումնական մասնաշենքերում ուսումնական գործընթացը կազմակերպվում է երկհերթ:ՇՊՀ-ի գրքաֆոնդը տեղակայված է գրադարանի փաստացի գործող 3 գրապահոցում (ընդհանուր 160.68մ²), ընթերցարանում (201.14մ²) և ամբիոններում (առավելապես մասնագիտական գրականություն): Ընթերցասրահը կահավորված է անհատական համակարգիչներով: 2018-2019 ուստարվա ավարտին միավոր գրքերի թիվը կազմել է 60362, իսկ 2019–2020 ուստարվա ավարտին՝ 60657: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ գրադարանն ունի մասնագիտական արդի գրականության պակաս՝ հատկապես համեմատաբար նոր ՄԿԾ-ների համար:www.shsu.am կայքի http://library.shsu.am/ բաժնի էլեկտրոնային գրականություն

ենթաբաժնում տեղակայված են էլեկտրոնային գրքեր՝ ըստ տարբեր բաժինների: Բազայում ներառված գրականությունը՝ ըստ բաժինների, հիմնականում փոքրաքանակ է և հայալեզու, սահմանափակ թվով գրքեր առկա են ռուսերեն լեզվով, իսկ անգլերենով՝ ընդամենը 4 գիրք:

ՇՊՀ-ն ունի նաև հեռուստաստուդիա, որը նախատեսված է եղել ՇՊՀ-ի գործունեության լուսաբանման, ինչպես նաև Լրագրության ու մյուս մասնագիտությունների ուսանողների համար փորձառության ձեռքբերման համար, սակայն ներկայումս Հեռուստաստուդիայի տեխնիկական սարքավորումները թարմացման կարիք ունեն և այն լիարժեքորեն չի գործում:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ՇՊՀ-ի ֆինանսական ռեսուրսները գոյանում են բյուջետային և արտաբյուջետային մուտքերից, որոնցից 2020թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշվով մուտքերի շուրջ 52.5%-ը պետական ֆինանսավորումից են, 46.8%՝ ուսման վճարներից, 0.7 %-ը՝ այլ մուտքերից: ՇՊՀ-ի բյուջեով ֆինանսավորման այլ աղբյուրներն էական կշիռ չունեն և հիմնականում ձևավորվում են վերապատրաստումներից:

ՄՈՒՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվով դրամական միջոցների բաշխումն ընդհանուր առմամբ չի իրականացվում ըստ ռազմավարական առաջնահերթությունների, դրանք մասնավորապես ունեն բաշխման հետևյալ ուղղությունները՝ կառավարում և վարչարարություն, ՄԿԾ, ՊԴ և ՈւՕ կազմ, ուսանողներ, հետազոտություն և զարգացում, ենթակառուցվածք և ռեսուրսներ, արտաքին կապեր և միջազգայնացում, ՈԱ ներքին համակարգ:

ՇՊՀ-ն պլանավորում է իր տարեկան բյուջեն՝ եկամուտների և ծախսերի նախահաշվի տեսքով, առկա է նաև տարեկան բյուջեի կատարողականը: Հարկ է նշել, որ, ըստ 2020 թ. համալսարանի եկամուտների և ծախսերի կատարողականի տվյալների, գրեթե բոլոր ծախսային հոդվածներով առկա են շեղումներ՝ գերածախսերի կամ թերածախսերի տեսքով, մասնավորապես՝ կառավարում և վարչարարություն հոդվածով՝ մոտ 15.3% թերածախս, ՄԿԾ, ՊԴ և ՈւՕ կազմ հոդվածով՝ մոտ 10.2%, ուսանողներ հոդվածով՝ մոտ 31.5%, հետազոտություն և զարգացում՝ մոտ 27.3 %, արտաքին կապեր և միջազգայնացում՝ մոտ 89%, ՈԱ ներքին համակագ՝ մոտ 80.8%: Միայն ենթակառուցվածք և ռեսուրսներ հոդվածով արձանագրվել է գերածախս՝ մոտ 23.9%:

Փորձագիտական հանդիպումների ժամանակ ներքին շահակիցների կողմից հնչեցվեցին համակարգչային հագեցվածությունը բարձրացնելու, ծրագրային ապահովումը թարմացնելու և այլ առաջնահերթություններ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՇՊՀ-ի ծախսային հոդվածներով գերակշռում են աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված միջոցների ծախսերը՝ կազմելով 79.9 %, բացի այդ, խրախուսում և դրամական աջակցություն ծախսային հոդվածը կազմում է 5.6 % (ըստ 2019 թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի տվյալների): Զգալիորեն քիչ դրամական միջոցներ են հատկացվում գիտահետազոտական

գործունեությանը՝ բյուջեի շուրջ 2.4%-ը, արտաքին կապերին և միջազգայնացմանը՝ շուրջ 0.14%, ՈԱ ներքին համակարգին՝ շուրջ 0.19%:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ՇՊՀ-ում գործում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության» ընթացակարգը, որը հստատվել է ԳԽ-ի կողմից 31.01.2018թ.-ին: ՇՊՀ-ում ֆինանսական միջոցների բաշխումը, ըստ ծախսային հոդվածների, իրականացվում է համաձայն հաստատված ֆինանսական նախահաշվի, որի հիմքում են նախօրոք հաշված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը, մասնավորապես՝ համապատասխան ստորաբաժանումներից ստացված պահանջագրերը կարիքների վերաբերյալ: Կարիքների բավարարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափի հաշվարկը և ընդհանրապես ֆինանսական միջոցների կառավարումը և մշտադիտարկումն իրականացվում է Ֆինանսատնտեսագիտական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի կողմից:

Ֆինանսատնտեսագիտական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժինն իր գործունեության իրականացման ժամանակ հիմնվում է ՇՊՀ-ի կանոնադրության, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի վրա՝ հաշվի առնելով ՇՊՀ-ի 2015-2019 թթ. ՌԾ-ում նախանշված առաջնահերությունները և ՇՊՀ-ի առկա կարիքները:

Հարկ է նշել, որ ֆինանսական միջոցների պլանավորման և բաշխման գործող քաղաքականության արդյունավետությունը գնահատված չէ ՄՈՒՀ-ի կողմից:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Ըստ ինքնավերլուծության՝ ՇՊՀ-ում ռեսուրսների բաշխման գործընթացը հակարգում են ռեկտորը, Ֆինանսատնտեսագիտական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման և Տնտեսական գործունեության, գնումների համակարգման բաժինները՝ հիմք ընդունելով ՇՊՀ-ի ռազմավարական նպատակները: Ռեսուրսների պլանավորումն ու ձեռքբերումը հիմնականում իրականացվում է համաձայն ուսանողների քանակի: ՇՊՀ-ում ընդունելությունը կազմակերպվում է նախապես պլանավորված թվի համաձայն, ՄՈՒՀ-ն արձանագրել է, որ պահանջվող և ձեռքբերված ռեսուրսների միջև կտրուկ շեղումներ չեն արձանագրվում: Կարևոր է արձանագրել, որ ՄՈՒՀ-ը ֆինանսական մեծ ծանրաբեռնվածություն ենթադրող ռեսուրսները հիմնականում ձեռք է բերում դրամաշնորհային ծրագրերի միջոցով: Ռեսուրսների դիտարկման և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ այս պահին հրատապ են համակարգիչների և ծրագրային ապահովման թարմացումը, լինգաֆոնային կաբինետի ստեղծումը: Պետք է

փաստել, որ ո՛չ ստորաբաժանումների, ո՛չ էլ ՄՈՒՀ-ի մակարդակով երկարաժամկետ չեն պլանավորվում գույքի բարոյական մաշվածության ժամկետները և նորի ձեռքբերումը:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ՇՊՀ-ում տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացներն իրականացվում են, ըստ ՇՊՀ-ի «Ընդհանուր բաժնի կանոնադրության», որը մշակվել և հաստատվել է 2019թ.-ին: Ներքին փաստաթղթաշրջանառությունը կատարվում է ինչպես ՇՊՀ-ի ներքին ցանցով՝ սերվերի վրա ստեղծված և ներքին շահագործման համար նախատեսված հարթակով: 2019 թ.-ի մարտից ՇՊՀ-ում ներդրված է Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը, որը ապահովում է հաղորդակցությունը ՀՀ ԿԳՄՄՆ-ի հետ: 2019 թ.-ից Ընդհանուր բաժնից գրությունները նույնպես ուղարկվում են նշված համակարգի միջոցով, ինչի շնորհիվ տեսանելի է փաստաթղթի շարժն ու կարգավիճակային փոփոխությունը:

2017թ.-ից սկսել է գործարկվել ՇՊՀ-ի նոր կայքը (shsu.am), կայքում տեղադրվում են ՇՊՀ-ի կանոնադրությունը, ՌԾ, գործող կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, ստորաբաժանումների հաշվետվությունները և այլ հիմնարար փաստաթղթեր:

Ըստ ինքնավերլուծության՝ ՇՊՀ-ում դեռևս 2007 թ.-ից ներդրվել է ուսանողների ակադեմիական տվյալների էլեկտրոնային հենք, այն ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման բազմագործառնական համակարգ է, որի շնորհիվ հնարավոր է դուրս բերել ուսանողի ՄՈԳ-ը, ակադեմիական տեղեկանքը, ակադեմիական կրեդիտ պարտքերը և այլն: 2020-2021 ուստարվա նախաշեմին ստեղծվել են նաև ՊԴ համակազմի և ուսանողների կոնտակտային տվյալները բովանդակող բազաներ:

ՇՊՀ-ում փաստաթղթերի արխիվացումը և պահպանումը, ինչպես նաև արխիվային փաստաթղթերի գիտատեխնիկական մշակումը, հաշվառումը, օգտագործումն ու պահպանությունը կատարվում է Արխիվի կողմից՝ համաձայն Արխիվի կանոնադրության նախագծի հիման վրա:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ՄՈՒՀ-ում առկա է բուժկետ՝ առաջին օգնության համար նախատեսված անհրաժեշտ դեղորայքով և բուժգործիքներով: Բուժկետում բուժքրոջ հաստիքը զբաղեցված է, իսկ նախատեսված բժշկի հաստիքն այս պահին թափուր է: Արվեստի և Ռազմական ամբիոնների ու քոլեջի շահակիցների սպասարկման համար ԳՔՈԱԿԿ-ի կողմից բարձրացվել է ՄՈՒՀ-ի 2-րդ մասնաշենքում բուժկետի բացման անհրաժեշտությունը, որը բավարարվել է:

Ըստ ինքնավերլուծության՝ ՆԶՊ ու Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մասնագիտությունների գծով դիմորդների, ինչպես նաև ՇՊՀ-ի առաջին կուրսեցիների համար իրականացվում է պարտադիր բուժզննում՝ հրավիրյալ սրտաբանի

մասնակցությամբ: ՇՊՀ-ի աշխատողների համար ևս իրականացվում է պարտադիր բուժզննում՝ Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկայի հետ համագործակցան միջոցով:

Հատուկ կարիքներ ունեցող անձանց համար ՇՊՀ-ի գլխավոր մասնաշենքն ունի թեքահարթակներ, որոնց միջոցով հնարավոր է մուտք գործել միայն առաջին հարկ, կենտրոնական մասնաշենքի դահլիճի արտաքին ու բանականության բանալի ակումբի մուտքային դռները ևս հարմարեցրած են հատուկ կարիքներ ունեցող անձանց համար: Պատերազմից հետո հատուկ կարիք ունեցող ուսանողների քանակը ՄՈՒՀ-ում ավելացել է:

Ուսումնական մասնաշենքերում գործում է պահպանության և անվտանգության շուրջօրյա հերթապահության ռեժիմ, գլխավոր մասնաշենքի մի մասը հսկվում է տեսախցիկներով: ՇՊՀ-ի գլխավոր մասնաշենքում հասարակական կարգի ապահովումն իրականացվում է ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Գյումրիի պահպանության բաժնի համապատասխան մասնագետների կողմից:

ՇՊՀ-ի ուսումնական մասնաշենքերում փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման սխեմաներ և առկա են հրդեհի տարածման կանխարգելման համար առաջին անհրաժեշտության միջոցներ: Գլխավոր մասնաշենքի յուրաքանչյուր թևը ապահովված է հրդեհային ելքով: Ըստ ինքնավերլուծության՝ մինչ 2021թ. միայն ՇՊՀ-ի դահլիճն ու Բանականության բանալի ակումբն է ապահովված եղել հրդեհ ազդարարող ինքնաշխատ ժամանակակից համակարգով, իսկ 2021թ.-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին գլխավոր մասնաշենքում ներդրվել է հակահրդեհային ահազանգման ամբողջական համակարգ:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներից են ԳՔՈԱԿԿ-ի կողմից անցկացվող հարցումները, որակի աջակից-ուսանողների կողմից անցկացվող քննարկումներն ու ուսումնասիրությունները:

ԳՔՈԱԿԿ-ի կողմից անցկացվող հարցումների միջոցով գնահատվում է շահակիցների բավարարվածությունը ուսումնամեթոդական, նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսներից: Ըստ ինքնավերլուծության՝ Մինչ 2019թ. ռեսուրսների գնահատման հարցումներին մասնակցել են միայն ուսանողները, իսկ 2019-2020 ուստարվանից՝ նաև հետազոտողները և ՊԴԿ-ի ներկայացուցիչները: Ըստ հետազոտությունների արդյունքների՝ ուսումնառողների շուրջ 82.7%-ը, իսկ հետազոտողների և ՊԴ կազմի 63%-ը բավարարված են ՄՈՒՀ-ի ռեսուրսային ապահովվածությունից: Ռեսուրսային կարիքները բացահատող հարցումներում շահակիցները հիմնականում նշում են հետևյալ բարելավման ենթակա կողմերը՝ լաբորատորիաներում սարքավորումների ավելացում և փարմաում, գրադարանային ֆոնդի արդիականացում և այլն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ ՇՊՀ-ում հագեցած ուսումնական միջավայր ստեղծելու, առաքելությունը և նպատակները իրականացնելու համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ:

Դրական է այն, որ վերջին ժամանակահատվածում ՄՈՒՀ-ի ուսումնական միջավայրը բալելավվել է՝ գլխավոր մասնաշենքը համալրվել է նիստերի դահլիճով, «Բանականության բանալի» ակումբով, Լրացուցիչ և շարունակական կրթության ռեսուրս կենտրոնով, ԱՀՀԿԿ սենյակով, ակադեմիական խորհրդատվությունների սենյակով, ստեղծվել է կենսատեխնոլոգիայի լաբորատորիա՝ անհրաժեշտ լաբորատոր սարքերով, վերանորոգվել և կահավորվել են մարզադահլիճները, որն առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում թե՛ ուսանողների, և՛ թե ՊԴ և վարչական կազմի համար:

Չնայած առկա կրթական ռեսուրսներին, նկատվում է նաև լաբորատորիաների վերահագեցման, համակարգչային առկա բազայի նորացման, գրադարանային ֆոնդի և էլեկտրոնային գրադարանի արդի մասնագիտական գրականությունով համալրման անհրաշեժտություն, ինչը կնպաստի ՇՊՀ-ի կրթական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ֆինանսական միջոցների գեռակշռող մասը կազմում են պետական ֆինանսավորումը և ուսման վճարները (ֆինանսական այլ մուտքերը կազմում են ֆինանսական միջոցների մոտ 1%-ը), վերջիններիցս մեծ կախվածությունը կարող է հետագայում վտանգել ՄՈՒՀ-ի ֆինանսական կայունությունը: Ներկա իրավիճակում ՇՊՀ-ն, որպես հիմնադրամ, կարիք ունի գտնել մեխանիզմներ՝ ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներհոսքի ստեղծման ուղղությամբ: Դա իր հերթին կպահանջի առավել զգալի ֆինանսական ներդրումներ կատարել այլ առանցքային ուղղություններում՝ գիտություն և հետազոտություն, միջազգայնացում:

Անհանգստացնող է այն, որ ՄՈՒՀ-ի բյուջեի ամենամեծ հավտածը աշխատավարձի (79.9%) և խրախուսման (5.6%) տրամադրմանն է բաժին ընկնում, որի արդյունքում այլ ուղղությունների բավարար ֆինանսավորում չի տրամադրվում: Փորձագիտական խումբը մի կողմից դրական է գնահատում, որ համալսարանի ընդհանուր ծախսերում աշխատավարձը զգալի տեսակարար կշիռ ունի, մյուս կողմից էլ մտահոգիչ է, որ այլ ծախսային հոդվածների՝ ոչ զգալի լինելը կարող է խոչընդոտել ՄՈՒՀ-ի հետագա զարգացումը:

Թեև ՇՊՀ-ում յուրաքանչյուր տարի կրթական գործընթացի իրականացման և կրթության որակի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումն իրականացվում է ըստ անհրաժեշտության, ներքևից վերև սկզբունքով՝ ընթացիկ գործունեության կազմակերպման համար կարիքների վերաբերյալ ստորաբաժանումների պահանջագրերի հիման վրա, որոնք հաշվի են առնվում եկամուտների և ծախսերի նախահաշվում, սակայն ստորաբաժանումների կողմից հիմնականում չեն իրականացնվում ռեսուրսների երկարաժամկետ պլանավորում, որը թույլ կտար առավել օպտիմալ պլանավորել նաև ՄՈՒՀ-ի բյուջեի բաշխումը երկարաժամկետ հեռանկարով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՇՊՀ-ում գործում է ֆինանսական ռեսուրսների պլանավորման և բաշխման քաղաքականություն, որը միտված է ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացմանը: Ֆինանսական ռեսուրսների

պլանավորման և բաշխման գործող քաղաքականության արդյունավետությունը գնահատման կարիք ունի, այդ է փաստում նաև այն, որ էական տարբերություններ են նկատվում նախահաշվի և փաստացի կատարողականի միջև, ինչը վտանգում է ֆինանսական ռեսուրսների արդյունավետ պլանավորման և օգտագործման գործընթացը:

Դրական է, որ ՇՊՀ-ում տեղեկատվության շրջանառման և փաստաթղթավորման գործընթացներն իրականացվում են ներքին սերվերի և Mulberry համակարգի միջոցով, որը թույլ է տալիս ՄՈՒՀ-ին առավել համակարգային իրականացնել փաստաթղթաշրջանառությունը, սակայն Mulberry համակարգով ՄՈՒՀ-ի ներքին փաստթաղթաշրջանառությունն ապահովման պարագայում հնարավոր կլինի նաև վերահսկելու փաստաթղթերի շարժն ու կարգավիճակային փոփոխությունները:

ՇՊՀ-ում ուսումնական միջավայրի առողջության, ապահովության և անվտանգության ուղղված քայլերը տեսանելի են, սակայն դեռևս անհրաժեշտություն կա բերելավելու հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ուսումնառության պայմանները:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՇՊՀ-ում իրականացվում են ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հարցումներ ոչ միայն ուսանողների, այլև դասախոսական կազմի շրջանում, որը թույլ է տալիս ՄՈՒՀ-ին բացահայտելու և ընթացիկ լուծումներ տալու կարևոր ներքին շահկիցների կարիքները:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ ՇՊՀ-ում առկա լսարանային ֆոնդը, լաբորատորիաները, կրթական գործընթացի իրականացմանն օժանդակող ռեսուրսները հիմնականում ապահովում են մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը, նաև առկա են տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու քաղաքականություն և ընթացակարգ, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններ, փորձագիտական խումբը գտնվում է, որ ՇՊՀ-ը բավարարում է Չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՇՊՀ- ում կիրառվում է բազմամակարդակ հաշվետվողականության մեխանիզմ, ինչը նաև պարզ դարձավ ՇՊՀ կատարված փորձագիտական այցի ընթացքում: Բազմամակարդակ հաշվետվողականության համակարգի միջոցով ապահովվում է հաշվետվողականության ներքևից վերև մոտեցում: Հաշվետվություններ են ներկայացնում ամբիոնների վարիչները, դեկանները, կենտրոնների տնօրենները, ՈՒԳԸ նախագահը, ռեկտորը: Հաշվետվությունները

քննարկվում են ամբիոններում, ֆակուլտետային խորհուրդներում, ԳԽ-ում և հրապարակվում են ՄՈՒՀ-ի կայքէջում: Ռեկտորի տարեկան հաշվետվությունը ներկայացվում է ՀԽ-ին և նույնպես տեղադրվում է համալսարանի կայքէջում:

Նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագիտական խմբի կողմից խորհրդատվություն էր տրամադրվել ՄՈՒՀ-ի ներքին հաշվետվողականության համակարգում զարգացնել վերլուծական բաղադրիչը: Նշյալի համատեքստում փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում առկա հաշվետվություններն ունեն սահմանված ձևաչափ, ապահովված է վերլուծական բաղադրիչը, որոշակի առումով նաև խնդիրներ վերհանող են:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

ՇՊՀ-ում առկա ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը էլեկտրոնային հարթակում ապահովվում է համալսարանի կայքէջի, սոցցանցերի (Facebook, Instagram, Twitter, LinkedIn, YouTube) և էլեկտրոնային լրատվականների լուսաբանումների միջոցով: Բացի այդ, տեղեկատվության տարածում է ապահովվում մարզային ու հանրապետական հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների, նաև թերթերի միջոցով: Հայտարարությունները փակցվում են համալսարանի պատերին, որոնք նկատելի էին փորձագիտական այցի ընթացքում: Իրականացված հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների 88,5%-ը հիմնականում բավարարված է կայքէջի և սոցցանցերի միջոցով տեղեկատվության հասանելիությունից: Հարկ է նշել, որ ՇՊՀ-ի կայքէջում տեղադրված են նաև ռուսերենով և անգլերենով տեղեկատվություններ, որոնք, ամփոփ տեղեկատվության տեսանկյունից, ամբողջությամբ թարգմանված չեն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՇՊՀ-ում գործում է «Համալսարանական լրագիր» հաղորդաշարը, որի միջոցով պատրաստված տեսանյութերը հրապարակվում են ՇՊՀ-ի YouTube-ի պաշտոնական ալիքով: Փորձագիտական խումբը դիտարկել է, որ այդ տեսանյութերի դիտումները մեծ թիվ չեն կազմում: Հատկանշական է, որ 2022թ. ռեկտորի ընտրություններն իրականացվել է ուղիղ հեռարձակմամբ:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ՇՊՀ-ում համալսարանի գործունեության մասին տեղեկատվության տարածման և դրական վարկանիշի ձևավորման առումով իրականացված աշխատանքներն իրականացնում է Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնը (ԱՀՀԿԿ)՝ հետադարձ կապ ապահովելով լրագրողների, մեդիաոլորտի և այլ արտաքին շահակիցների հետ: Հետադարձ կապը հասարակության հետ իրականացվում է ինչպես կայքի հետադարձ կապ հատվածի միջոցով, այնպես էլ համալսարանի սոցիալական կայքէջերի միջոցով: Համալսարանի կայքեջ այցելուների քանակը տարեցտարի աճել է շուրջ 1000-ով՝ 2021

թվականին կազմելով ամսականը միջին 5300 այցելություն, սակայն հետադարձ կապի ամենաարդյունավետ միջոցը Facebook սոցիալական ցանցն է, որն ունի շուրջ 8500 ակտիվ հետևորդներ։ Արագորեն զարգանում է նաև Instagram-ը՝ շարունակաբար ավելացնելով հետևորդների թիվը։ ԱՀՀԿԿ-ն հավաքագրում, ուսումնասիրում և վերլուծում է լրատվամիջոցներում համալսարանի գործունեությանը վերաբերող հրապարակումների հեռարձակումները, որի արդյունքում պարզ է դարձել, որ սակավ են մամուլի ասուլիսները։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ԱՀՀԿԿ-ի աշխատակիցները ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակում մասնակցել են միջզգայնացմանն ուղղված հաղորդակցության ռազմավարության մշակման վերապատրաստմանը՝ ավելացնելով հաղորդակցության ապահովման հմտությունները։

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ։

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ի կողմից հանրակրթական դպրոցների աշակերտների համար կազմակերպվում են դասընթացներ՝ օգնելով նրանց պատրաստվել միասնական քննություններին, տրամադրում են մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություններ։ ՇՊՀ-ն իրականացնում է նաև մասնագիտական խորհրդատվություններ՝ ներգրավելով ՄՈՒՀ-ի ներքին շահառուներին։ Ինչպես նշվում է ինքնավերլուծությունում, այդ դասընթացները, խորհրդատվությունները որոշակի պարբերականություն և շարունակականություն չեն ապահովում և որոշ դեպքերում հիմնված չեն հասարակական պահանջի ուսումնասիրման վրա, նաև չեն դիտարկվում հետադարձ կապի միջոցով շահառուների դիտարկումներն ու առաջարկները։

ՇՊՀ-ում ներքին շահակիցների մասնակցությամբ կազմակերպվում են գրքերի քննարկումներ, մասնավորապես՝ ուսանողների առաջարկությամբ և մասնակցությամբ «Հեքիաթասեր» վերլուծական ակումբում 2018-2019թթ. կազմակերպվել են հեքիաթների քննարկումներ, որոնք դիտարկվել են մասնագիտական գիտելիքների կիրառման խթանման նկատառումով։

Փորձագիտական խումբն առանձնացնում է, որ 2021թ. ՇՊՀ-ում իրականացվել են Շիրակի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների շուրջ 100 ուսուցչի նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացներ, որն իրականացնելու թույլտվություն ստանալու համար ՇՊՀ-ն մասնակցել և շահել է ՀՀ ԿԳՄՄՆ հայտարարած մրցույթին։ Նշյալ վերապատրաստումից ՇՊՀ-ն լրացուցիչ ֆինանսական մուտքեր է ապահովել։ ՇՊՀ-ն պլանավորել է առաջիկայում ևս իրականացնել նմանատիպ դասընթացներ։

Դատողություններ։

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում, որ ՇՊՀ-ում կիրառվում է բազմամակարդակ հաշվետվողականության մեխանիզմ՝ ապահովելով ներքնից վերև մոտեցում։ Դրական է նաև դիտվում, որ հաշվետվություններն ունեն սահմանված ձևաչափ, պարունակում են հետազոտական բաղադրիչ, քննարկվում են տարբեր օղակներում և

հրապարակվում ՄՈՒՀ-ի կայքէջում: Արդյունքում շահում է ՄՈՒՀ-ի հաշվետվողականության համակարգը:

Արժևորվում է, որ ՄՈՒՀ-ն ունի կայքէջ, սոցցանցեր (Facebook, Instagram, Twitter, LinkedIn, YouTube) և իրականացնում է էլեկտրոնային լրատվականների լուսաբանումներ, միևնույն ժամանակ առկա է տեղեկատվության տարածելիություն՝ մարզային, հանրապետական հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների, թերթերի միջոցով՝ ապահովելով համալսարանի գործունեության հասանելիությունն ու թափանցիկությունը հասարակությանը: Փորձագիտական խումբը նշում է, որ անգլերեն և ռուսերեն լեզուներով թարգմանված կայքէջը կնպաստի ՄՈՒՀ-ի միջազգային հարաբերությունների զարգացմանը:

Գովելի է, որ ՄՈՒՀ-ում իրականացվում են աշխատանքներ՝ միտված համալսարանի դրական վարկանիշի ձևավորմանը և գործունեության մասին տեղեկատվության տարածմանը, մասնավորապես՝ հետադարձ կապ է ապահովվում արտաքին շահակիցների հետ, գործարկվում է կայքի հետադարձ կապ հատվածը, տեղեկատվություն է տարածվում է սոցցանցերի միջոցով: Փորձագիտական խումբը նշում է, որ սակավ են մամուլի ասուլիսները, YouTube-ի պաշտոնական ալիքով հրապարակված տեսանյութերի դիտումները մեծ թիվ չեն կազմում՝ որոշակիորեն խոչընդոտելով հետադարձ կապի ապահովմանը: Դրական է, որ ԱՀՀԿԿ-ի աշխատակիցները ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակում մասնակցել են միջզգայնացմանն ուղղված հաղորդակցության ռազմավարության մշակման վերապատրաստման՝ ավելացնելով հաղորդակցության ապահովման հմտությունները:

Հատկանշական է, որ ՇՊՀ-ն հանրակրթական դպրոցների աշակերտների համար կազմակերպվում է դասընթացներ, օգնում նրանց պատրաստվել միասնական քննություններին, տրամադրում մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություններ, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվություններ: Սակայն այդ դասընթացներն ու խորհրդատվությունները շարունակականություն և պարբերականություն չեն ապահովում՝ միտված ՄՈՒՀ-ի վարկանիշի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ ՇՊՀ-ում իրականացվել են Շիրակի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացներ, որոնց շարունակական իրականացումը պլանավորված է ՄՈՒՀ-ի կողմից: Տվյալ պարագայում ՄՈՒՀ-ը կարող է ապահովել լրացուցիչ ֆինանսական մուտքեր:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում կիրառվում է բազմամակարդակ հաշվետվողականության մեխանիզմ, հաշվետվությունները ներառում են վերլուծական բաղադրիչ, քննարկելի են և հրապարակային, ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ը հասարակության շրջանում ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը, համալսարանի դրական վարկանիշի ձևավորման առումով աշխատանքներ են տարվում, որոշակիորեն գործում են հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն բավարարում է Չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՇՊՀ-ում գործում է 2021թ. լրամշակված և հաստատված «Արտաքին համագործակցության և հասարակության հետ կապերի կենտրոնի» կանոնակարգը, որով կենտրոնի նպատակ է սահմանված արտաքին համագործակցության, ՇՊՀ-ի միջազգայնացման, հասարակական պատասխանատվության և տեսանելիության ապահովման գործընթացի կազմակերպումը, համակարգումն ու իրականացումը: Կանոնակարգով սահմանված են թվով 6 խնդիր, 12 գործառույթ, որոնք ամբողջության մեջ ապահովում են կենտրոնի նպատակի իրականացումը: 2015-2019թթ. ՌԾ-ի աշխատանքային պլանով տվյալ տիրույթի համար սահմանված որոշակի գործողություններից ոչ բոլորն են ամբողջությամբ իրագործվել, մասնավորպես՝ ներքին շահակիցների մասնագիտական օտար լեզվի իմացության մակարդակի ապահովում, ՄԿԾ-ներում օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասընթացների ներդնում, արտաքին կապերի բաժնի որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգի ներդնում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը չունի միջազգային համագործակցության վերաբերյալ սահմանված քաղաքականություն:

Երկար ժամանակահատված է (շուրջ 25 տարի), ինչ ՇՊՀ-ն ընդգրկված է Եվրամիության կողմից ֆինանսավորվող TEMPUS ծրագրի աշխատանքներում, ինչը համալսարանի համար համագործակցության, միջազգայնացման մշակույթ ձևավորելու և գործընկերների հետ լավագույն փորձի փոխանակման հարթակ է հանդիսացել: ՄՈՒՀ-ի միջազգայնացման առումով ՇՊՀ-ն առանձնացնում է 2016-2019թթ. ERASMUS+ «Հայաստանում բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանում» - BOOST ծրագիրը, որով մասնակից բուհերի, այդ թվում՝ ՇՊՀ-ի և այլ կազմակերպությունների կողմից մշակվել է ՀՀ բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացման ազգային ռազմավարության նախնական տարբերակը, ինչի հիման վրա էլ բուհերը առաջիկայում պետք

է կազմեն իրենց միջազգայնացման ռազմավարական ծրագրերը: Նշյալ համատեքստում, ՇՊՀ-ի արտաքին համագործակցության և միջազգայնացման ռազմավարությունը, դրանցից բխող ընթացակարգերը դեռևս մշակման փուլում են:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ՇՊՀ-ի Արտաքին համագործակցության և հասարակության հետ կապերի կենտրոնը (ԱՀՀԿԿ) գործում է 2018թ.-ից: Մինչ այդ՝ 2005թ.-ին ձևավորվել է Արտաքին կապերի և բարեփոխումների բաժինը, 2013թ. վերափոխվել է Արտաքին կապերի բաժնի, 2017թ՝ Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կենտրոնի: Նշյալ կառույցների միջոցով համալսարանը մասնակցել է միջազգային համագործակցության ավելի քան 10 ծրագրերի (TEMPUS, ERASMUS MUNDUS, ERASMUS+ ծրագրեի շրջանակում): Այդ ծրագրերի իրականացման արդյունքում ձևավորվել են նոր մասնագիտություններ (սոցիալական աշխատանք, կայուն տուրիզմի զարգացում, կենսատեխնոլոգիա), առկա են շարժունության սակավ դեպքեր, ձևավորվել է «Կենսատեխնոլոգիա» կրթական ծրագրի լաբորատորիան, հիմնվել է բուհ-գործատու համագործակցության կենտրոնը (ՈՒսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժին), ՈԱԿ-ը (ԳՔՈԱԿԿ), Սոցիալական աշխատանքի կրթական կենտրոնը:

ԱՀԿՀԿԿ-ն ունի տնօրեն և 7 աշխատակից, որոնք իրականացնում են կենտրոնի կանոնակարգով սահմանված գործառույթները: Կենտրոնն առանձին բյուջե չունի: Ներկայումս կենտրոնը համակարգում է SMARTI ծրագիրը՝ անգլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին ու գործիքակազմի կիրառմանն աջակցելը, WBL4JOB ծրագիրը, որն ուղղված է Հայաստանում և Մոլդովայում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ներդրմանը: Նշյալ 2 ծրագրերով ՇՊՀ-ի աշխատանքային խմբերը մասնակցել են տարբեր վերապատրաստումների, աշխատաժողովների: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ եվրոպական գործընկեր համալսարաններում վերերապատրաստվողներն իրենց փորձը փոխանցել են ՇՊՀ-ի և Գյումրիի այլ բուհերի աշխատակիցներին և ուսանողներին:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ՄՈՒՀ-ը համագործակցություններ ունի ERASMUS MUNDUS, ERASMUS+ ծրագրերի շրջանակում: 1997թ.-ից սկսած TEMPUS ծրագրի շրջանակներում ՄՈՒՀ-ն իրականացրել է մի շարք միջազգային ծրագրեր: Միջազգային համագործակցության ծրագրեր իրականացվել է՝ 2013-2016թթ.՝ ARMENQA-ն, 2017-2020թթ. ERASMUS+ շրջանակում «Բիոարտադրանքի գիտությունների և տեխնոլոգիաների հայկական գերազանցության ցանցի ստեղծում»-ABioNet ծրագիրը, որի արդյունքում մշակվել է «Կենսատեխնոլոգիա» մագիստրոսական կրթական ծրագիրը, ձեռք են բերվել կենսաբանական լաբորատորիայի անհրաժեշտ սարքավորումները և 2020-2021 ուստարում կատարվել է առաջին ընդունելությունը: Այս համատեքստում հարկ է

նշել, որ նշյալ կրթական ծրագրի գծով 2020-2021 ուստարվա համար իջեցված 10 լիցենզիոն տեղի համար 6 դիմորդ են եղել: ՇՊՀ-ն մասնակցում է ակադեմիական շարժունության և փոխանակումների ERASMUS+ KA1 ծրագրի աշխատանքներին, որի շրջանակում համագործակցում է Ռումինիայի Կլուժ Նապոկայի, Յոհան Կուզայի, Սուչավայի, նաև՝ Իսպանիայի Վալլադոլիդի Գրանադայի և Անգլիայի Քիլի համալսարանների հետ: Հարկ է նշել, որ մինչ այժմ նշյալ ծրագրերի շրջանակում համալսարանն ունեցել է արտագնա շարժունությամբ 17 ուսանող, 15 ՊԴ ու 5 վարչական աշխատակից, ներգնա շարժունությամբ՝ 1 ուսանող, 2 ՊԴ կազմի աշխատակից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը միջազգային համաձայնագրերի վրա հիմնված համագործակցության շրջանակներում բացի շարժունության ապահովումից, դասավանդումից և հետազոտությունից միջազգային գործընկերների հետ այլ միջազգային համագործակցության միջոցառումներ չի իրականացնում:

Փորձագիտական խումբն առանձնացնում է ՄՈՒՀ-ի համագործակցությունը ՀՀ ՊՆ-ի հետ, որի շրջանակում կանոնակարգվում է ՇՊՀ-ի «Ռազմական ամբիոնի» գործունեությունը, «ՇՊՀ-ի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ ծրագիրը (Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի համակարգմամբ), որի բյուջեի 15%-ը ՇՊՀ-ի համաֆինանսավորմամբ է:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ տարածաշրջանային մակարդակում ՄՈՒՀ-ն ունի գործընկերային համագործակցությունների լայն շրջանակ մարզի դպրոցների հետ՝ օժանդակելով «Մանկավարժություն» կրթական ծրագրի իրականացմանը: Առկա են համագործակցություններ նաև ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների, Չինաստանի դեսպանությունների հետ: Բացի այդ, «Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի» ամբիոնում դասավանդում և սովորում են հանրապետական և միջազգային մրցումների հաղթողներ, մրցանակակիրներ, որոնք տվյալ մասնագիտության շրջանակում ամրապնդում են արտաքին համագործակցությունը միջազգային կառույցների հետ:

Ըստ ՄՈՒՀ-ի ներկայացրած տվյալների՝ վերջին 3 տարիներին ՇՊՀ-ն համագործակցության պայմանագրեր, հուշագրեր է կնքել և վերակնքել 20 եվրոպական, 8 ԱՊՀ երկրների, 14 հայաստանյան համալսարանների, թվով 8 տարբեր կազմակերպությունների հետ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այդ պայմանգրերն ու հուշագրերը ոչ բոլոր դեպքերում են գործուն համագործակցություն ապահովում: 2018թ. և 2021թ. ՇՊՀ-ում կազմակերպվել են միջազգային գիտաժողովներ, ուր իրենց մասնակցությունն են ունեցել արտասահմանյան գործընկեր համալսարանների ներկայացուցիչներ:

Փորձագիտական այցի տվյալներով 2020-2021 ուստարվա ընթացքում ըստ ԳՔՈԱԿԿ-ի կողմից տարածված վեբինարների՝ թվով 6 գիտաժողովի խորագրերով հայտարարությունների, ՇՊՀ-ից ընդամենը մեկ աշխատակից մասնակցել է թվով 2 վեբինարի:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՇՊՀ-ի տրամադրած տվյալների դիտարկմամբ 2018-2019թթ. ՊԴ կազմի շուրջ 60 %-ը, վարչական կազմի շուրջ 90%-ը և ՈՒՕ կազմի 70%-ը տիրապետում են օտար լեզուների: ՈՒսանողների շրջանում այդ թիվը կազմում է մոտ 80%: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընդհանուր առմամբ համալսարանում օտար լեզվի (անգլերեն) իմացության մակարդակը բարվոք վիճակում չէ: ՇՊՀ-ում 2014-2019թթ. առկա են եղել օտարալեզու ՄԿԾ-ներ, օտարերկրյա ուսանողները ընդամենը 7-ն են: Հարկ է նշել, որ այդ ուսնողները տիրապետում են հայերեն լեզվին և դասընթացները հիմնականում կազմակերպվում են հայերենով: Միակ երկիրը Ռումինիան է, որտեղից օտարալեզու կրթական ծրագրով այդ թվականներին ներգրավված է եղել ընդամենը 1 ուսանող: Փորձագիտական այցից պարզվեց, որ ՄՈՒՀ-ում կազմակերպվում են օտար լեզուների դասընթացներ, սակայն այդ դասընթացների արդյունավետությունը պարբերաբար չի գնահատվում: Ինչ վերաբերում է մասնագիտական օտար լեզվի՝ անգլերենի դասընթացներին, ապա ՄՈՒՀ-ում այդպիսիք չեն կազմակերպվում: Դրան զուգահեռ, ՇՊՀ-ի բակալավրիատի կրթական ծրագրով նախատեսված է «Օտար լեզուն մասնագիտական ոլորտում» դասընթացը, որի արդյունավետության հետ կապված էլ առկա չեն համապատասխան գնահատականներ: Բացի դա, ՇՊՀ-ի ՊԴԿ-ի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կարգով օտար լեզվի իմացության համար վարկանիշային միավոր է հատկացված:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՇՊՀ-ում առկա է արտաքին հարաբերությունների և միջազգայնացման աշխատանքները համակարգող կառուցվածքային ստորաբաժանում՝ ի դեմս ԱՀՀԿԿ-ի է, որի գործունեությունը կանոնակարգվում է 2021թ. «Արտաքին համագործակցության և հասարակության հետ կապերի կենտրոնի» կանոնակարգով՝ նպատակադրելով սահմանված խնդիրներն ու գործառույթները ծառայեցնել ՇՊՀ-ում միջազգայանացման հետագա զարգացմանը: Միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ 2015-2019թթ. ՌԾ-ի աշխատանքային պլանով տվյալ տիրույթի համար սահմանված կարևոր գործողություններից ոչ բոլորն են իրագործվել: Բացի այդ, ՄՈՒՀ-ում միջազգային համագործակցության վերաբերյալ սահմանված քաղաքականության բացակայությունը խոչընդոտում է կենտրոնի հետագա զարգացմանը:

Գովարժան է, որ ՇՊՀ-ն մասնակցություն ունի 2016-2019թթ. ERASMUS+ «Հայաստանում բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանում»-BOOST ծրագրին, որով մշակվել է ՀՀ բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացման ազգային ռազմավարության նախնական տարբերակը: Հարկ է նշել, որ ՇՊՀ-ի արտաքին համագործակցության և միջազգայնացման ռազմավարությունը, դրանցից բխող ընթացակարգերը ևս մշակման փուլում են, որոնց կիրառումը ՄՈՒՀ-ին հնարավորություն կտա հստակեցնել և իրատեսական դարձնել միջազգայնացման ռազմավարությունը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբն արժևորում է միջազգային ծրագրերին մասնակցության կայուն ազդեցությունը, ինչի հետևանքով ՇՊՀ-ում ձևավորվել են առանձին կենտրոններ, նյութատեխնիկական բազա և փորձառու անձնակազմ: Բացի այդ, ՀՀ կառավարության,

օտարերկրյա տարբեր կազմակերպությունների և հիմնադրամների կողմից ֆինանսավորվող միջազգային դրամաշնորհային ծրագրերի առկայությունը և դրանց ոլորտների դիվերսիֆիկացումը կարող է մեծացնել ՄՈՒՀ-ի համագործակցային հնարավորությունները:

Դրական է, որ տարբեր ծրագրերի շրջանակում եվրոպական գործընկեր համալսարաններում վերերապատրաստվողներն իրենց փորձը փոխանցել են ՇՊՀ-ի և Գյումրիի այլ բուհերի աշխատակիցներին և ուսանողներին՝ նպաստելով վերջիններիս մասնագիտական առաջընթացին:

Փորձագիտական խումբն առանձնացնում և կարևորում է ՄՈՒՀ-ի տարածարջանային լայն համագործակցությունների շրջանակը, համագործակցությունը ՀՀ ՊՆ-ի հետ, միջազգային հաստատությունների և կառույցների հետ տարբեր համագործակցությունները, այդուհանդերձ միջազգային համագործակցության համաձայնագրերով հաստատվող միջազգային միջոցառումների, այդ թվում՝ ակադեմիական շարժունության և ակադեմիական հետազոտությունների քանակը գոհացուցիչ չէ, ավելին՝ ERASMUS+ ծրագրից բացի ուսանողների, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ակադեմիական շարժունություն առկա չէ: Բացի դա, ՇՊՀ-ի միջազգային գործընկերների հետ միջազգային միջոցառումների շրջանակը սեղմ է: Դրանք ընդլայնելու, մասնավորաբար՝ միջազգային հրավիրյալ դասախոսներ ներգրավելու, միջմշակութային և միջազգային հմտությունները խթանելու և զարգացնելու պարագայում (ինչպես առցանց, այնպես էլ առկա ձևաչափով), էականորեն կշահի ՄՈՒՀ-ի միջազգայանացումը:

Դրական է դիտարկվում, որ ՇՊՀ-ն համագործակցության պայմանագրեր, հուշագրեր է կնքել և վերակնքել 20 եվրոպական, 8 ԱՊՀ երկրների, 14 հայաստանյան համալսարանների հետ, թվով 8 տարբեր կազմակերպությունների հետ, սակայն միևնույն ժամանակ այդ պայմանագրերից և հուշագրերից ոչ բոլորն են գործուն համագործակցություններ ապահովում: Դրանք ողջ ծավալով գործարկելու պարագայում ՇՊՀ-ն միջազգայնացման տիրույթում առավել բարձր արդյունքներ կարող է ապահովել:

Անհանգստացնող է ուսանողների, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի շրջանում օտար լեզուների, մասնավորապես՝ անգլերենի իմացության ոչ բավարար մակարդակը, օտարերկրյա ուսանողների սակավությունը: Այս համատեքստում փորձագիտական խումբը կարևորում է ՄՈՒՀ-ի դիրքորոշումը՝ միտված օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը (օտար լեզուների դասընթացների կազմակերպում, բակալավրիատում նախատեսված դասընթաց), այնուամենայնիվ, դասախոսների և ուսանողների համար նախատեսված մասնագիտական օտար լեզվի իմացությունը բարձրացնող պարբերական դասընթացները, ինչպես նաև դրանց արդյունավետությունը գնահատող մեխանիզմների մշակումը կմեծացնեն հետագա կրթական համագործակցությունների արդյունավետությունը: Փորձագիտական խումբն առանձնացնում է, որ միջազգային վեբինարներին մասնակցության շրջանակի ընդլայնումը ևս դրականորեն կարող է անդրադառնալ միջազգայնացման գործընթացների աշխուժացման վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՇՊՀ-ում արտաքին համագործակցության և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքներն ընդհանուր առմամբ համակարգված են և կանոնակարգված, ՄՈՒՀ-ն ունի տարածաշրջանային լայն գործընկերային համագործակցություններ, գործուն միջազգային համագործակցություններ, միջազգայնացման կոնտեքստում տեսանելի են ՄՈՒՀ_ի նպատակադրումներն ու ներուժը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն բավարարում է Չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՇՊՀ-ի որակի ապահովման քաղաքականության փաստաթղթային հենքն է՝ Որակի ապահովման քաղաքականությունը և նրա ընթացակարգերը (2013թ.), ՇՊՀ-ի ԳՔՈԱԿԿ կանոնադրությունը (2019թ.), Որակի ապահովման և կառավարման հայեցակարգը (2019թ.), Որակի ապահովման ներքին համակարգի ուղեցույցը (2014թ.), Որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկի նախագծային տարբերակը (2019թ.):

2015-2019թթ. ՌԾ-ով սահմանված է որակի ապահովման ներքին համակարգի նպատակը, այն է՝ ՄՈՒՀ-ի բոլոր գործընթացների շարունակական բարելավումը և որակի մշակույթի ձևավորման ապահովումը. սահմանված են նաև նպատակին հասնելու խնդիրները: 2019թ. ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման հայեցակարգը ներառում է համալսարանի որակի ապահովման քաղաքականության հիմնական սկզբունքները՝ համակարգային մոտեցում, կենտրոնացված կանոնակարգում, գործընթացների ապակենտրոնացված իրականացում, ինքնագնահատում, բարելավում: Սահմանված են որակի ներքին ապահովման համակարգի թվով 6 նպատակ և 6 խնդիր:

2011թ.-ից Արտաքին կապերի և բարեփոխումների բաժնում գործել է Որակի ապահովման և վերահսկման կենտրոնը, մեկ տարի անց այն դարձել է ինքնուրույն կառուցվածքային միավոր՝ վերանվանվելով ՈԱ կենտրոնի: ՇՊՀ-ի կառուցվածքայի փոփոխության արդյունքում ՈԱ կենտրոնը վերանվանվել է ՈԱԿԿ-ի՝ ընդլայնելով գործառույթները և գործել է մինչև 2018թ.-ը: Հաջորդիվ, հերթական կառուցվածքային փոփոխության արդյունքում 2018թ.-ից ՇՊՀ-ում գործում է ԳՔՈԱԿԿ-ն և, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը, ի

սկզբանե, նպատակադրվել է կենտրոնի կողմից իրականացվող հետազոտությունները կատարել գիտական հենքով՝ ապագայում զարգացնելով և խթանելով գիտական հետազոտությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳՔՈԱԿԿ-ն հետազոտական բաղադրիչը ներդրել է ՈԱ գործընթացներում, ձևավորվել են համապարփակ հետազոտությունների փաթեթներ: 2019թ. ՇՊՀ-ի ԳՔՈԱԿԿ-ի կանոնադրությամբ սահմանված են կենտրոնի նպատակները, նպատակներց բխող թվով 14 խնդիր: ԳՔՈԱԿԿ-ի համար սահմանված են 30 գործառույթ: Փորձագիտական այցից ևս պարզ դարձավ, որ ԳՔՈԱԿԿ-ն գործում է իր սահմանած նպատակներին և խնդիրներին համարժեք, միևնույն ժամանակ էլ՝ բազմաֆունկցիոնալ ստորաբաժնում է:

ՇՊՀ-ում գործում են որակի ապահովման տարբեր մեխանիզմներ և ընթացակարգեր: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ՝ այդ մեխանիզմներն ու ընթացակարգերը ընդհանուր առմամբ աշխատող են և խնդիրներ վեր հանող, միտված են կրթական գործընթացի շարունակական բարելավմանը: Փորձագիտական խումբը հարկ է համարում նշել, որ ԳՔՈԱԿԿ-ի կողմից մշակվել են տարբեր հարցարաններ, իրականացվում են տարաբնույթ հարցումներ, որոնցից են՝ ՇՊՀ-ի ուսանողների կողմից ՊԴԿ-ի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների գնահատման հարցարան, ուսանողների և շրջանավարտների կողմից ՄՈՒՀ-ի կազմակերպչական վարկանիշների գնահատման հարցարան և այլն: Միևնույն ժամանակ, այդ հարցումների արդյունքների օբյեկտիվության վերաբերյալ ՇՊՀ-ի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների մոտ առկա է տարակուսանք, ինչը հաստատվեց նաև փորձագիտական այցի տարբեր հանդիպումների ընթացքում: Մասնավորապես՝ 2018-2019թթ., 2019-202թթ. մանկավարժության ֆակուլտետի հաշվետվություններում ներառված են ուսանողների կողմից մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ու ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնների ՊԴ կազմի գնահատման արդյունքները, ինչի կապակցությամբ 2 տարի շարունակաբար դեկանն ու ամբիոնների վարիչները եզրակացրել են, որ ստացված արդյունքները չի կարելի համարել օբյեկտիվ տարբեր պատճառներով՝ շատ հարցեր հստակ ձևակերպված չեն, ուսանողների համար ընկալելի չեն և այլն: Բացի այդ, ֆակուլտետի 2018-2019թթ. հաշվետվությունում նշվում է, որ հաշվետվության ներկայացված ձևաչափը ոչ լիարժեքորեն է արտահայտում ֆակուլտետի գործունեությունը և հիմնականում պահանջվում են ստատիստիկ տվյալներ, բաց են մնացել մի շարք կարևոր հարցեր, օրինակ՝ ուսանողների հետ տարվող դաստիարակչական, կազմակերպչական բնույթի աշխատանքներ, ֆակուլտետում կարգապահական հարցերի վերլուծություններ և այլն:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ԳՔՈԱԿԿ-ի կողմից մշավել և կիրառության մեջ է դրվել 2018թ. ՇՊՀ-ի ՊԴԿ-ի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կարգը: Կարգի գործողության արդյունքներն ապահովված չեն այն առումով, որ կարգով սահմանված վարկանիշավորման արդյունքում դասախոսների աշխատանքային պայմանգրի վերակնքման, երկարաձգման, խզման, դասախոսներրի խրախուսման դեպքեր չեն արձանագրվել:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՇՊՀ-ում ԳՔՈԱԿԿ-ն գործում է 8 հաստիքով՝ որակի ապահովման պատասխանատու, հետազոտական վերլուծությունների համակարգող, հետազոտությունների իրականացման համակարգող, համակարգչային օպերատոր-գործավար, գիտական քաղաքականության և հետբուհական կրթության պատասխանատու, ՊԴ և վարչական կազմերի գիտահետազոտական գործունեության համակարգող, հետբուհական կրթության համակարգող, ՊԴ և վարչական կազմերի վերապատրաստման գործընթացների համակարգող: Փորձագիտական խմբի դիտարկմամբ, հետազոտական վերլուծությունների համակարգող և հետազոտությունների իրականացման համակարգող, գիտական քաղաքականության և հետբուհական կրթության պատասխանատու և հետբուհական կրթության համակարգող հաստիքները գրեթե նույնական են, պաշտոնի անձնագրերով էլ որոշակի գործառույթներ կրկնում են միմյանց: Ֆակուլտետներն ու ամբիոնները ունեն ՈԱ համակարգողներ, ամբիոններում գործում են ՈԱ հանձնախմբեր, որոնցում ընդգրկված են նաև ՈՒԽ և ՈՒԳԸ ներկայացուցիչներ. փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ հանձնախմբերն իրենց ամբողջ ներուժը չեն ներդնում ՈԱ գործընթացների բարելավմանը: Կենտրոնում գործընթացների իրականացման համար առկա են անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, իսկ կենտրոնի աշխատակիցները մասնակցել են վերապատրաստումների, աշխատաժողովների: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՇՊՀ-ի ղեկավարությունը կարևորում է կենտրոնի աշխատակիցների մասնագիտական հետագա զարգացումը, և վերապատրաստված աշխատակիցները իրենց ձեռքբերած հմտությունները փոխանցել են այլ աշխատակիցների: ԳՔՈԱԿԿ-ն ունի գործունեության աշխատանքային պլաններ, տարեկան հաշվետվություններ: ՄՈՒՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվով ՈԱ ներքին համակարգի համար նախատեսվող միջոցները կազմում են՝ 2018թ., 2019թ., 2020թ. ՝ 10 մլն. դրամ (առանց աշխատավարձի), ինչը կազմում է համալսարանի բյուջեի շուրջ 1%-ը: 2020թ. փաստացի կատարողականը շեղվել է պլանային ցուցանիշից՝ 10 մլն.դրամի փոխարեն հատկացրել են 1,9 մլն. դրամ[6]: Փորձագիտական այցի ընթացքում ֆինանսատնտեսագիտական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժինը գրավոր մեկնաբանեց, որ որակի ապահովման ներքին համակարգին վերաբերող փաստացի ծախսերի անկումը 2020թ.-ին հիմնականում պայմանավորված է համավարակի բացասական ազդեցությամբ:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

[6] ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԵԼ Է ՄՈՒՀ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

ՇՊՀ-ի դասախոսական, վարչական անձնակազմը, ուսանողներն իրենց մասնակցությունն ունեն ՈԱ գործընթացներին։ Ներքին և արտաքին շահակիցները մասնակցում են ԳՔՈԱԿԿ-ի հարցարաններով իրականացված հարցումներին, մասնավորապես՝ գիտական գրադարանից ուսանողների և դասախոսների բավարարվածության, ՊԴ կազմի կողմից կառավարման համակարգի և վարչական կառույցների գործունեության արդյունավետության գնահատման, մանկավարժական պրակտիկայից ուսանողների բավարարվածության, ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման հարցարաններ, համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներ այլն։ Համալսարանում ՈԱ գործընթացների մասնակցության շրջանակում հավաքագրվում են շրջանավարտներից գործատուների բավարարվածության մակարդակի վերաբերյալ կարծիքներ, պրակտիկաների դասավանդման վերաբերյալ աշակերտների և ուսուցիչների կարծիքներ, ավարտական ատեստավորման հանձնախմբերում ներգրավում են արտաքին շահառուներ, իրականացվում են ուսանողների կարիքների գնահատման հետազոտություններ։ Այդքանով հանդերձ, փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ արտաքին շահակիցներն ավելի քիչ մասնակցություն են ցուցաբերում և առավել քիչ են շահադրդված ներգրավվել համալսարանի ՈԱ գործընթացներին։ Բացի այդ էլ՝ արտաքին շահակիցների հիմնավոր առաջարկները ոչ բոլոր դեպքերում են ներդրվում համալսարանի բարելավումներում։

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ՇՊՀ–ի ՈԱ քաղաքականությունը միտված է ապահովել դասավանդման, ուսումնառության, գնահատման գործընթացների որակի շարունակական և կայուն բարելավում՝ սովորողների և աշխատաշուկայի կարիքներին համահունչ։ Համալսարանում գործում է 2013թ. ԳՊՄԻ-ի ՈԱՔ և նրա ընթացակարգերը, որով սահմանված են ՈԱ քաղաքականության նպատակները, խնդիրները, ՈԱ քաղաքականության իրականացման ընթացակարգերը։ Ըստ նշյալ փաստաթղթի, ՈԱ քաղաքականության հիմք են ԳՊՄԻ-ի իրական կարողությունները և դրանց հաշվառմամբ ընտրված կոնկրետ գործողությունների իրականացման գործիքակազմը, ինչը համահունչ չէ ՇՊՀ-ի ներկայիս իրողություններին։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանում իրականացվում է ՈԱ համակարգի շարունակական բարելավում, մասնավորաբար՝ ՈԱ գործընթացներն ընդհանուր առմամբ կանոնակարգված են, ենթակա են մշտադիտարկման, վերանայման պարբերականություն ունեն, ՈԱ գործընթացներում ներդրված է հետազոտական բաղադրիչը, որով ուսումնասիրություններն առավել հիմնավոր են և տվյալահենք։ Առկա են ԳՔՈԱԿԿ-ի տարբեր տարիների հաշվետվություններ, որոնք գրված են Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 Չափանիշների շրջանակում։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդ հաշվետվություններն ավելի շատ համապարփակ հետազոտություններ են, քան այնպիսի հաշվետվություններ, որոնք պետք է համալսարանի գործունությունը բնութագրող քանակական և որակական տվյալների համադրումով գնահատեն գործունեությունից ակնկալվող արդյունքները և

պատճառահետևանքային կապերը: Բացի այդ, հաշվետվություններում գնահատման, բարելավման արդյունքները համակարգված չեն:

ԳՔՈԱԿԿ-ի կողմից շարունակաբար վերանայվում են հարցարանները, ամբիոնների և ֆակուլտետների որակի ապահովման համակարգողների գործառույթները և այլն: Հարցարանների ուսումնասիրությունից, միևնույն ժամանակ շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ առկա են որոշակի դժգոհություններ հարցարաններում ներառված հարցադրումների բովանդակության մատչելիության և դրանց գնահատման օբյեկտիվության առումով: Հարկ է նշել, որ հարցարանների մատչելիության ուղղությամբ ԳՔՈԱԿԿ-ն որոշակի քայլեր է իրականացնում:

Պարբերաբար վերանայվում են հոդվածների, մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների գրախոսման մեխանիզմները: ԳՔՈԱԿԿ-ի կողմից իրականացվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքների բովանդակային վերլուծություններ, որոնք, ըստ փորձագիտական այցի տվյալների, չեն ներառվում ՄԿԾ-ների հետագա բարելավումների պլաններում: Մասնավորաբար՝ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 2021թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվության մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ առաջարկությունների մեջ առկա են նկատառումներ՝ կապված ավարտական աշխատանքների ավելի արդիական և ժամանակակից դպրոցի ուսուցման հարցերից բխող թեմաների ընտրության հետ, ինչպես նաև նույն մասնագիտության մագիստրոսական թեզերի պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունում արձանագրվել են որոշ շեղումներ՝ հաստատված թեզերի վերնագրերի, դրանց շարադրանքի և, որ շատ կարևոր է՝ հաստատված թեմայի և տվյալ մասնագիտության մագիստրոսին տրվող որակավորման միջև: Հաշվետվությունում առկա է առաջարկ՝ հետագայում մասնագետների պատրաստման որակի բարելավման գործընթացում մագիստրոսական թեզերը լիովին համապատասխանեցնել շնորհվող մագիստրոսի որակավորմանը:

Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզ է, որ ՇՊՀ-ի ԹՎԳԾ-ով նախատեսված գործողությունները բավարար չափով իրականացվել են՝ մշակվել, կիրառվել են ընթացակարգեր և մեխանիզմներ որակի ապահովման համակարգում արտաքին շահառուների մասնակցությունը ապահովելու նպատակով, բարելավվել է որակի ապահովման ներքին համակարգը, մշակվել են որակի ապահովման համակարգի մասնագետների պաշտոնի նկարագրեր, որոշակի առումով իրականացվել են որակի ապահովման պատասխանատուների մասնագիտական զարգացմանն ուղղված վերապատրաստումներ, բարելավվել է հարցումների համակարգը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման աշխատակիցները մասնագիտական վերապատրաստման կարիք ունեն:

10.5 Որակի ապահովման ներքին հաակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ՇՊՀ-ն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն իրականացնելու արդեն երկրորդ փորձն ունի (առաջին անգամ ԻՎ իրականցրել է 2015թ.)։ 2017թ.-ին մշակվել և ներդրվել է հաշվետվության նոր ձևաչափ՝ ըստ Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 Չափանիշների, ուր առկա է վերլուծական բաղադրիչը։ Ինչպես ռեկտորի հաշվետվությունը, այնպես էլ բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները ամբողջությամբ համապատասխանեցվել են ինքնավերլուծության ձևաչափին։ ԳՔՈԱԿԿ-ն այդ կերպ նպատակ է հետապնդում ձևավորել ինքնավերլուծություն իրականցնելու մշակույթ, ներառել ՌԾ-ի կատարման հաշվետվությունը։ Ինքնավերլուծությունն իրականացվել է յուրաքանչյուր չափանիշի գծով առանձին հանձանախմբով, ուր ներառվել են ամբիոնների վարիչներ, դասախոսներ, ուսանողներ շրջանավարտներ, վարչական բլոկի աշխատակիցներ։ Ինքնավերլուծության լրամշակումն իրականացվել է առանձին աշխատանքային խմբի կողմից։ Փորձագիտական խումբը նշում է, որ իրականացված ինքնավերլուծությունն ընդհանուր առմամբ տվյալահենք է, ընդգծված է վերլուծական բաղադրիչը։

ԳՔՈԱԿԿ-ն կարևորում է բոլոր գործընթացների ԳԱՑ-երի հաշվարկումը և ներդնումը՝ ըստ տարիներ համեմատականությունն ապահովելու համար։ Այս առումով, փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ հաշվարկված ԳԱՑ-երի համար առկա չեն օպտիմալ, համադրելի նորմատիվներ։

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԳՔՈԱԿԿ-ն ՇՊՀ-ի կայքէջում ունի իր առնաձնացված բաժինը և պարբերաբար համալրում է ՇՊՀ-ի կայքում համապատասխան բաժինը և ֆեյսբուքյան էջը, ուր լուսաբանվում են իրադարձությունները, գործընթացները։ ԳՔՈԱԿԿ-ի հաշվետվությունները պարբերաբար հրապարակվում են ՄՈՒՀ-ի կայքէջում։ Համալրվել է նաև է ՇՊՀ-ի շրջանավարտների հաջողությունների բաժինը։ Համալսարանում կիրառվում է էլեկտրոնային հարցաթերթիկներ համալսարանի գործունեության գնահատման վերաբերյալ, որի միջոցով ուսումնասիրվում է ՇՊՀ-ի ծավալած գործունեության վերաբերյալ շահակիցների կարծիքը, որոշակիորեն հետադարձ կապ է ապահովվում շրջանավարտների հետ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցաշարերի արդյունքները քննարկվում են ֆակուլտետներում, ամբիոններում, առանձին դասախոսների հետ։

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՇՊՀ-ում որակի ապահովման գործընթացն ունի անհրաժեշտ փաստաթղթային հենք, որակի ապահովման քաղաքականության վեկտորը ՄՈՒՀ-ի բոլոր գործընթացների շարունակական բարելավումն ու որակի մշակույթի ձևավորման ապահովումն է՝ նպաստելով համալսարանում ՈԱ արդյունավետության բարձրացմանը։ Փորձագիտական խումբը նաև դրական է համարում, որ ԳՔՈԱԿԿ-ն իր վերլուծություններում ներդրել է հետազոտական բաղադրիչ՝ միտված

լինելով հիմնավոր պայմաններ առաջադրել համալսարանի ՈԱ գործընթացի բարելավումների համար։

Գովելի է, որ ՇՊՀ-ում գործող որակի ապահովման մեխանիզմներն ու ընթացակարգերը ընդհանուր առմամբ աշխատող են և խնդիրներ վերհանող, ինչը դրականորեն կարող է անդրադառնալ համալսարանի կրթական գործընթացի հետագա բարելավման վրա։ Այս համատեքստում փորձագիտական խումբն անհանգստացնող է համարում, որ հարցումների արդյունքների վերաբերյալ ՇՊՀ-ի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների մոտ առկա է տարակուսանք հարցերի ոչ պարզ լինելու առումով, և հարցաշարի՝ որպես հիմնական գործիք օգտագործելու ռիսկը կարող է վտանգել որոշումների կայացման արժանահավատությունը։ Ինչ վերաբերում է ՇՊՀ-ի ՊԴԿ-ի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կարգի գործարկմանը, ապա այս համատեքստում ևս փորձագիտական խումբն իր նկատառումն ունի առ այն, որ առկա չեն դասախոսների աշխատանքային պայմանգրերի վերակնքման, երկարաձգման, խզման, դասախոսներրի խրախուսման դեպքեր։ Վարկանիշավորման արդյունքների կիրառումը մրցակցային պայմաններ կարող է ստեղծել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների լավացման առումով՝ միտված կրթության որակի բարձրացմանը։

Փորձագիտական խմբի կողմից դրականորեն է դիտվում, որ ՇՊՀ-ում որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով առկա են մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, մասնավորապես՝ համապատասխան հաստիքներ, աշխատանքային միջոցներ, որոշակի բյուջե։ Մարդկային ռեսուրսների առումով գովելի է, որ ՈԱ և գիտական քաղաքականության իրականացման աշխատանքներում ներգրավված են 8 աշխատակից, սակայն փորձագիտական խումբը մտավախություն ունի, որ այդ հաստիքներն ու նրանց գործառույթները որոշ դեպքերում կարող են կրկնել միմյանց՝ առաջացնելով աշխատանքի անարդյունավետություն։ Միևնույն ժամանակ, դրականորեն չի ընկալվում, որ ՄՈՒՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվով ՈԱ ներքին համակարգին նախատեսվող միջոցները սակավ են (կազմում է բյուջեի շուրջ 1%-ը), ավելին՝ 2020թ. փաստացի կատարողականը շեղվել է պլանային ցուցանիշից՝ հատկացնելով նախատեսվածից բավականաչափ քիչ դրամական միջոցներ։ Փորձագիտական խումբը կարևորում է կենտրոնին հատկացվող դրամական միջոցների անընդհատության ապահովումը։

Դրական է, որ ՇՊՀ-ի դասախոսական, վարչական անձնակազմը, ուսանողները իրենց մասնակցությունն ունեն ՈԱ գործընթացներին։ Ներքին և արտաքին շահակիցների շրջանում տարբեր հարցումներ են իրականացվում, հավաքագրվում կարծիքներ, իրականացվում են ուսանողների կարիքների գնահատման հետազոտություններ։ Փորձագիտական խումբը նշում է, որ արտաքին շահակիցների հիմնավոր առաջարկների ներդրումն ու նրանց ողջ ներուժի կիրառումը կարող են էապես բարելավել ՄՈՒՀ-ի ՈԱ գործընթացները։

Ողջունելի է, որ ՇՊՀ–ի ՈԱ քաղաքականությունը միտված է դասավանդման, ուսումնառության, գնահատման գործընթացների որակի շարունակական և կայուն

բարելավմանը, ՇՊՀ-ի դասախոսական, վարչական անձնակազմը, ուսանողները իրենց մասնակցությունն ունեն համալսարանի ՈԱ գործընթացներին, ՈԱ գործընթացներն ընդհանուր առմամբ կանոնակարգված են, ենթակա են մշտադիտարկման, վերանայման պարբերականություն ունեն, ՈԱ գործընթացներում ներդրված է հետազոտական բաղադրիչը, որով ուսումնասիրություններն առավել հիմնավոր են և տվյալահենք, սակայն գործող «ԳՊՄԻ-ի ՈԱ քաղաքականությունն ու նրա ընթացակարգերը» չեմ բխում համալսարանի ներկայիս իրողություններից՝ շեղում առաջացնելով գործող ընթացակարգի և առկա գործընթացների միջև, արդյունքում կարող է տուժել ՈԱ գործընթացների կանոնակարգված իրականացումը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում տարբեր ստորաբաժանումների՝ ըստ տարիների հաշվետվությունների առկայությունը, միևնույն ժամանակ նշելով՝ որպես համապարփակ հետազոտություններ, այդ հաշվետվություններում գնահատում, բարելավում շրջափուլերի տվյալները համակարգված չեն: Արդյունքում կարող է վտանգվել ՈԱ կառավարման գործընթացը:

Չնայած որ առկա են Հավատարմագրման 10 Չափանիշների շրջանակում գրված ԳՔՈԱԿԿ-ի տարբեր տարիների հաշվետվություններ՝ ևս համապարփակ հետազոտությունների տեսքով, վերանայված գրախոսման մեխանիզմներ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքների բովանդակային վերլուծություններ, այդուհանդերձ, հստակ տեսանելի չեն ակնկալվող արդյունքների վերաբերյալ ամփոփ գնահատականները, բարելավման ենթակա խնդիրները չեն ներառվում հետագա բարելավման պլաններում, ինչը կարող է խոչընդոտել համալսարանի ՈԱ գործընթացի շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրականորեն ընդգծում է, որ ՇՊՀ-ի ԹՎԳԾ-ով նախատեսված գործողությունները բավարար չափով իրականացվել են, բարելավվել է հարցումների համակարգը՝ նպաստելով ՇՊՀ-ում որակի մշակույթի տարածմանը, ՈԱ գործընթացների արմատավորմանը: Այդուհանդերձ, հարցումների համակարգը դեռևս բարելավման անհրաժեշտություն ունի՝ միտված հարցաշարերի պարզեցմանն ու ՈԱ գործընթացների կանոնակարգմանը, բացի այդ, աշխատակիցների մասնագիտական հմտությունների կատարելագործումն ուղղակիորեն կազդի գործընթացների արդյունավետ կառավարման վրա: Հատկանշական է, որ ԳՔՈԱԿԿ-ն, ըստ տարիներ համեմատականությունն ապահովելու նպատակով, կարևորում է բոլոր գործընթացների ԳԱՑ-երի հաշվարկումը և ներդնումը: Այս առումով փորձագիտական խումբն ընդգծում է, որ հաշվարկված ԳԱՑ-երի համար առկա չեն օպտիմալ, համադրելի նորմատիվներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ համալսարանի գործունեության արդյունավետության չափելի գնահատումների համար:

Դրական է, որ ԳՔՈԱԿԿ-ն ՇՊՀ-ի կայքէջում ունի իր առնաձնացված բաժինը, պարբերաբար համալրում է ՇՊՀ-ի կայքում համապատասխան բաժինը և ֆեյսբուքյան էջը, ուր լուսաբանվում են իրադարձությունները, գործընթացները՝ ապահովելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվության տրամադրումն ու թափանցիկությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՇՊՀ-ի որակի ապահովման գործընթացն ունի անհրաժեշտ փաստաթղթային հենք, իրականացվող որակի ապահովման քաղաքականությունը միտված է

համալսարանում որակի ապահովման արդյունավետության բարձրացմանը, ՇՊՀ-ում գործող որակի ապահովման մեխանիզմներն ու ընթացակարգերը ընդհանուր առմամբ աշխատող են և խնդիրներ վերհանող, որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով առկա են մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, ՇՊՀ-ի ԹՎԳԾ-ով նախատեսված գործողությունները բավարար չափով իրականացվել են, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն բավարարում է Չափանիշ 10-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար**։

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում և վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Չի բավարարում
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Արմենուհի Մհերյան
Փորձագիտական խմբի ղեկավար

14 հունիսի 2022թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Միերյան՝ 2000թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) Ֆինանսահաշվային ֆակուլտետի, ֆինանսներ և վարկ մասնագիտությունը, 2004թ. եղել է նույն բուհի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի ասպիրանտ: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ է: 2006–2021թ. աշխատել է ՀՊՏՀ, «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների՝ Տվյալների մշակումը, վիճակագրական վերլուծությունը և ներկայացումը SPSS վիճակագրական փաթեթի միջոցով, Training on capacity building for implementing bologna reforms, «Տեղեկատվական համակարգերի տիրապետում և կատարելագործում», «Ֆինանսական հաշվառում, վերլուծություն և աուդիտ», «Տնտեսամաթեմատիկական մեթոդների և մոդելների յուրացում և կիրառում» և այլ թեմաներով: 2022թ.-ից աշխատում է Եվրոպական համալսարանում որպես դասախոս:

Օլգա Սաֆոնկինա՝ 2002թ-ին ստացել է լեզվաբանության դիպլոմավորված մասնագետի աստճան (Մորդովիայի Օգարյովի անվան պետական համալսարան), 2003թ-ին ավարտել է «Հասարակություն և քաղաքականություն» մագիստրոսական կրթական ծրագիրը (Կենտրոնական Եվրոպայի համալսարան/Լանկաստերի համալսարան (Հունգարիա/Մեծ Բրիտանիա)): 2009թ.-ին ստացել է գիտությունների թեկնածուի աստիճան: 2006-2013թթ. աշխատել է Մորդովիայի Օգարյովի անվան պետական համալսարանի Լեզուների կենտրոնում՝ որպես ծրագրերի պատասխանատու: 2004թ.-ից մինչ օրս դասավանդում է նույն համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետում, միևնույն ժամանակ 2011թ.-ից նույն ֆակուլտետի փոխդեկանն է և համակարգում է Erasmus +-ի փոխանակման ծրագրերը:

Կարեն Դիլբարյան՝ 2007-2010թթ. եղել է ասպիրանտ ԵՊԲՀ դեղաբանության ամբիոնում, դեղագիտական գիտությունների թեկնածու է: 2016-2017թթ.եղել է ԵՊԲՀ քոլեջի տնօրեն: 2010թ.-ից առ այսօր ԵՊԲՀ ֆարմակոլոգիայի ամբիոնի ավագ դասախոս է: 2017թ.-ից առ այսօր ԵՊԲՀ «ԳԼՕԲ-ՈՒՍ» ուսումնական ծրագրի համակարգողն է: 2018թ.-ից մինչ օրս Սիսիանի զինվորական հոսպիտալի դեղատան ղեկավար է: 13 գիտական աշխատանքների հեղինակ է: Աշխատանքային գործունեության ընթացքում արժանացել է մի շարք պատվոգրերի:

Հեղինե Օհանյան՝ 1991թ.-ին ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան Պետական Համալսարանի Հաշվողական մաթեմատիկայի և կիբերնետիկայի ֆակուլտետը, իսկ 1994թ.-ին նույն ֆակուլտետի ասպիրանտուրան: 1994-1995թթ. աշխատել է Հայաստանի Կենտրոնական Բանկում՝ որպես մասնագետ-ծրագրավորող: 1995-1999թթ.-ին եղել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Երկրաչափության և հանրահաշվի ամբիոնի դասախոս, իսկ 1999-2007թթ.՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան Պետական համալսարանի Ինֆորմատիկայի և տնտեսագիտամաթեմատիկական մեթոդների ու մոդելավորման ամբիոնի ավագ դասախոս: 2020-2021թթ. եղել է նույն բուհի Բնական Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ, իսկ 2021թ.-ից մինչ օրս Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչն է:

Կարեն Մաստոյան՝ 2016-2020թթ. Սովորել է Գավառի պետական համալսարանի Բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտություն բակալավրիատի կրթական խրագրում, 2020թ.-ից մինչ օրս սովորում է նույն բուհի Բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտություն մասգիստրոսական կրթական ծրագրում: 2019թ-ից աշխատում է Լուսին մոբայլ ընկերությունում որպես Վեբ ծրագրավորող:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի (ՇՊՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի

15.03.2022–18.03.2022թ.

Zoom-ի մուտքային տվյալներ
https://us02web.zoom.us/j/88308497641?pwd=cGk3dGo1RkU4UllDVUVublByU1piUT09

Meeting ID: **883 0849 7641**
Passcode: **018171**

	15.03.2022թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ՇՊՀ ռեկտորի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում Հոգաբարձուների խորհրդի ներկայացուցիչների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի, պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի, արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի ղեկավարի հետ,	11:50	13:00	70 րոպե
4.	Ընդմիջում	13:10	14:10	60 րոպե
5.	Հանդիպում դեկանների հետ	14:20	15:10	50 րոպե
6.	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ (ընդհանուր բաժին, ֆինանսատնտեսագիտական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժին, անձնակազմի կառվարման և իրավական ապահովման բաժին, ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժին, տնտեսական գործունեության, գնումների համակարգման բաժին)	15:20	16:20	60 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	16:30	17:30	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:40	19:00	80 րոպե

	16.03.2022թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*

1.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում հիմնական և համատեղությամբ աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	10:30	11:30	60 րոպե
3.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ (10-12 հոգի)	11:40	12:40	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5.	Հանդիպում ՈւԽ և ՈւԳԸ ներկայացուցիչների հետ	14:00	14:45	45 րոպե
6.	Հանդիպում առկա բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների հետ (10-12 հոգի)	14:55	15:45	50 րոպե
7.	Հանդիպում հեռակա բակալավրիատի ուսանողների հետ (10-12 հոգի)	15:55	16:45	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:55	19:00	125 րոպե

	17.03.2022թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Կենսաբանություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	09:30	10:40	70 րոպե
2.	Հանդիպում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության դասախոսների հետ	Հանդիպում «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության դասախոսների հետ	Հանդիպում «Կենսաբանություն» մասնագիտության դասախոսների հետ	10:55	12:05	70 րոպե

3.	Հանդիպում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության ուսանողների հետ	Հանդիպում «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության ուսանողների հետ	Հանդիպում «Կենսաբանություն» մասնագիտության ուսանողների հետ	12:20	13:10	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:20	14:20	60 րոպե
5.	Հանդիպում շրջանավարտների հետ			14:30	15:40	70 րոպե
6.	Բաց հանդիպում			15:50	16:40	50 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:50	19:00	140 րոպե

	18.03.2022թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման բաժնի ներկայացուցիչների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:40	11:30	50 րոպե
3.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	11:40	12:50	70 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	15:20	70 րոպե
6.	Հանդիպում ՇՊՀ ռեկտորի և ղեկավար անձնակազմի հետ, այցի ամփոփում	15:30	16:00	30 րոպե

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն

Ռ. Թոփչյան _____

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Երվանդ Սերոբյան

Ե. Սերոբյան _____

11.03.2022թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N.	Փաստաթղթի անվանումը	Չափանիշ
1.	Ֆակուլտետների զարգացման ՌԾ-ներ /դեկանի կողմից ներկայացված հայեցակարգ/	1
2.	ՖԽ կազմեր, արձանագրություններ (վերջին 3 տարիների)	1
3.	Գիտության և հետազոտության բաժնի և ԳՔՈԱԿԿ-ի ղեկավարների պաշտոնի անձնագրեր	1
4.	ՇՊՀ աշխատակիցներ բողոքարկման կարգը և համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հրամանները և կարգադրությունները բողոքների վերաբերյալ	2
5.	ԳՔՈԱԿԿ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների եզրակացություններ, թե որքանով է ՊԴ կազմն ապահովում կրթական և մանկավարժական գործընթացի արդյունավետությունը և բարձր որակը	2
6.	Արտաքին և ներքին շահառուների ներգրավվածության ակտիվացման վերաբերյալ վիճակագրական տվյալներ պատասխանատու բաժնի կողմից	2
7.	Օրենքով սահմանված՝ պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների ուսումնասիրությունները փաստող փաստաթղթեր կամ որոշակի տվյալներ-նորմեր	2
8.	Կառավարման տարբեր մակարդակներում, ստորաբաժանումների, ինչպես նաև ՊԴ կազմի և ուսանողների միջև կապի ապահովման ուսումնասիրություն և գնահատական	2
9.	2015-2019թթ. ՌԾ աշխատանքային պլանի կատարողական/տրամադրվել են ռեկտերի և ստորաբաժ. հաշվետվություններ/	2
10.	Ֆակուլտետների և ամբիոնների պլաններ /2020-2022թթ./	2
11.	Տարեկան հաշվետվությունների վերլուծություններ և եզրակացություններ/տրամադրվել են արձանագրություններ/	2
12.	Ներհամալսարանական ակտեր, որոնց կազմմանը մասնակցել են արտաքին շահակիցները	2
13.	Հարցումների ամփոփ գնահատականներ և վերլուծություններ	2
14.	Արձանագրություններ, ռեկտորի որոշումներ՝ կապված ՖԽ-ներում և ԳԽ-ի նիստերում քննարկվող, արտաքին ու ներքին շահակիցների շրջանում հարցումների արդյունքների հետ	2
15.	ՇՊՀ-ի ընթացակարգերի, քաղաքականության պարբերական վերանայումը (որին մասնակցում են բոլոր ստորաբաժանումները՝ ապահովելով թափանցիկություն և խնդիրների արագ արձագանքում) հիմնավորող փաստաթղթեր	2
16.	ՄԿԾ-ների վերանայման համապատասխան եզրակացություններ	2
17.	Կառավարման գործընթացների արդյունավետության գնահատման և բարելավման տարեկան զեկույցներ	2

18.	Ֆակուլտետների, ամբիոնների գործունեության տարեկան հաշվետվություններ, որոնցում առկա է տեղեկատվություն շնորհվող որակավորումների որակի մասին:	2
19.	3 ՄԿԾ-ների մասնագիտական առարկաների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականներ և ԹՕՊ-եր	3
20.	Որևէ նոր բացված ՄԿԾ-ի ներդրման գնահատման փաթեթ	
21.	Համալսարանից դուրս մասնագիտական վերապատրաստում անցած դասախոսների ցանկ	3
22.	IT մասնագիտություններում՝. /061105.01.6/, /061101.02.7/, /021201.04.6/, /011401.06.6/, 2015-2019 թ. ընդունելության վիճակագրությունը /բացարձակ թվերով/	3
23.	Անցումային պլանների օրինակներ	3
24.	Ուսումնական պլանների կազմման ընթացակարգ	3
25.	2021-2022 ՄԿԾ-ների բարելավմման գործընթացի արդյունքներ	3
26.	Ներկայացված 3 ՄԿԾ-ների համեմատական թերթիկներ	3
27.	Բենչմարքինգի իրականացման ձևաչափ	3
28.	TEMPUS-ARMENQA ծրագրի շրջանակում վերապատրաստված դասախոսների ցանկ	3
29.	Մուդլ հարթակով ուսումնառող ուսանողների տոկոսը, մուդլ հարթակի կիրառումն արտահայտող վիճակագրություն	3
30.	Համետական վիճակագրություն՝ առցանց քննությունների և առկա քննությունների արդյունքների համեմատություն՝ տոկոսներով, նույն կուրսի շրջանակներում /ուսանողների գնահատականներ/	3
31.	Դասավանդման և ուսումնառության մեթոդների փոփոխության ժամանակացույց մի քանի ԿԾ-երի գծով /ուսումնասիրվող 3 ԿԾ-երի/-ԹՕՊ	3
32.	ՈՒսումնառության և դասավանդման մեթոդների արդյունավետությունը գնահատող հարցումների վերլուծություններ/վերջին 3 տարիներ/	3
33.	ՈՒսանողների գնահատման համակարգի արդյունավետությունը գնահատող վերլուծություններ/արձանագրություններ/	3
34.	Ավարտական աշխատանքների բողոքարկման դեպքերի ցանկ և թվանշանների փոփոխության ստատիստիկա	3
35.	Գնահատման համակարգի արդյունավետությունը գնահատող հարցումների վերլուծություններ	3
36.	ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման վերլուծություններ /1 օրինակ ուղարկվել է ծրագրի շրջանակներում/	3
37.	Համավարակի շրջանում դասավանդման և ուսումնառության արդյունավետության վերլուծություններ	3
38.	Օտար լեզվով իրականացվող առարկաների ցանկը+ և համապատասխան լիցենզիաները-	3
39.	Շրջանավարտների զբաղվածությունն՝ ըստ մասնագիտությունների	3
40.	Սփյուռքից սովորող ուսանողների ցանկ	3

41.	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա ԲԿԾ-ի ԹՕՊ-եր՝ Ծրագրավորման լեզուներ և մեթոդներ, Օպերացիոն համակարգեր 1, 2, Ծրագրավորման լեզու 1, 2 (Python), Ծրագրավորման լեզու C, Ծրագրավորման լեզու CVV 1,2, Ինֆորմացիայի և կոդավորման տեսություն: Ինֆորմատիկա եվ կիրառական մաթեմատիկա ՄԿԾ-ի ԹՕՊ-եր՝ Տվյալների հենքերի նախագծում, Հավասարումների լուծման մեթոդներ էլեկտրոնային աղյուսակների միջոցով, Բնագիտական խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, Ծրագրավորում Java պլատֆորմում	
42.	Ուսանողների բարձրացրած հարցերի վերաբերյալ գրավոր պատասխանների օրինակներ/ռեկտորատի որոշումներ/	4
43.	Խրախուսված ուսանողների ցանկ՝ ՇՊՀ-ի ուսանողների վարկանիշավորման և խրախուսման կանոնակարգի	4
44.	ՇՊՀ ռեկտորի հրաման ուսանողների վարկանիշավորման և խրախուսման հանձնախմբի ձևավորման	4
45.	ՈՒԳԸ հոդվածների ժողովածու	4
46.	ՈՒԽ-ի կողմից կատարած հետազոտությունների վերլուծություններ	4
47.	5 ՄԿԾ-ի շրջանակներում համամասնությունը պրակտիկների և տեսաբանների՝ ըստ մասնագիտությունների	5
48.	Վիճակագրություն թե քանի ուսումնական ասիտենտ է կցված Պրոֆեսորի, դոցենտի կամ ասիստենտի հետ համատեղ գործնական և լաբորատոր պարապմունքներ իրականացման, կուրսային աշխատանքների և նախագծերի ղեկավարման համար	5
49.	Դասախոսի վարկանիշի հաշվարկման բանաձև կամ մեխանիզմ	5
50.	Վարկանիշավորման արդյունքներ	5
51.	ՊԴ կազմի հարցաշարերի վերլուծություններ/եզրակացություններ հետագա քայլերի համար/	5
52.	Ամբիոններում լրացվող դասախոսի գործունեության արդյունավետությունը ներկայացնող վարկանիշային տարեկան գնահատման թերթիկի լրացված օրինակ	5
53.	Վերջին ներբուհական վերապատրաստումների ծրագրեր, դասախոսների ցանկ, վարողների տվյալներ, արդյունավետության ցուցանիշներ, վերապատրաստման բովանդակություն	5
54.	Վերապատրաստմանը հատկացված բյուջե-%	5
55.	Մասնագիտական վերապատրաստումների ցուցակ և մասնակցության վիճակագրություն	5
56.	ՇՊՀ-ի ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր	5
57.	ՇՊՀ խրախուսման ֆոնդի տվյալներ	5
58.	Սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականության նախագծային տարբերակ	5
59.	Վարչական և ՈՒՕ աշխատակազմերի վերաբերյալ բոլոր հարցումների վերլուծություններ/եզրակացություններ/	5
60.	ՊԴ կազմի մասնակցության ցանկ առցանց վեբինարների	

61.	Հետազոտություններ, որոնք փաստում են գիտական առաջնահերթությունները	6
62.	Որոշումներ, որոնք սահմանում են գիտական առաջնահերթությունները	6
63.	Հետազոտությունների արդյունավետության և արդյունքների ուսումնասիրություններ	6
64.	Գիտահետազոտական թեմատիկա համալսարանի ողջ մասնագիտությունների գծով	6
65.	ՄԿԾ-ների, ԱԾ-երի ցանկը, որտեղ ներառվել են գիտական հետազոտությունների արդյունքները	6
66.	Ֆինանսավորվող ներքին դրամաշնորհների արդյունավետության վերլուծություններ/արդյուքներ/	6
67.	Ներբուհական դրամաշնորհային ծրագրերի արդյունքում պաշտպանված 2 մագիստրոսական թեզ և 1 ավարտական աշխատանքի թեմաները	6
68.	Ներբուհական Impact Factor-ով տպագրված հոդվածների ցանկ՝ իրենց հղումներով	6
69.	Ուսանողների թեզերն իրենց հղումներով+ և ծրագրի շրջանակներում իրականացված 3թեզերին առնչվող Impact Factor տպագրություններ իրենց հղումներով	6
70.	Հեղինակավոր պարբերականներում տպագրվող գիտնականների ցանկ, հոդվածներ	6
71.	Գիտական հոդվածների արտաքին գրախոսողների ցանկ	6
72.	Ամբիոնների կողմից կազմակերպվող գիտական սեմինարների թեմաների ցանկ	
73.	Հարցումներ, արձանագրություններ, դասախոսների ստորագրություններ և այլն, որ ՇՊՀ-ի աշխատակիցները տեղյակ են գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգից, ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատումից	6
74.	Գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգի համաձայն՝ ամրագրված գիտական գործունեության տեսակների տրամադրված հավելավճարի վճակագրություն, գիտնականների ցուցակ՝ ըստ ամբիոնների և գիտական աշխատանքների թեմաների	6
75.	ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների վերաբերյալ հարցման արդյունքների գնահատման, քննարկման և որոշումների ընդունման վերաբերյալ փաստաթուղթ	6
76.	Միջազգայնացման քաղաքականությունում ահմանված ենթակետերի իրականացման արդյունավետության վերլուծություն, քանակականից բացի նաև որակական արդյունքներ	6
77.	Հետազոտություն կատարելու ընդունակությունները զարգացնող դասաընթացների նկարագրեր/մագիստրոսական ՄԿԾ-ներում/	6
78.	Հավելավճարներ ստացած դասախոսների ցանկ	7

79.	Լող մարզաձևից և կա մարզադահլիճների ժամանակակից սարքավորումներից ՊԴ կազմի անվճար օգտվելու հնարավորության վերաբերյալ համապատասխան պայմանագրեր (առկայության դեպքում)	7
80.	Ռեսուրսների կիրառելիության, արդյունավետության ու հասանելիության գնահատման որևէ փաթեթ	7
81.	Արտաքին շահակիցների վերապատրաստման ծրագիր, վերապատրաստվողների ցանկ	9
82.	Կենսաբանական լաբորատորիայի գործունեության հաշվետվություն վերջին 2 տարիների ընթացքում	9
83.	Դրամաշնորհային ծրագրերի ցուցակ, որոնց դիմել է ՄՈՒՀ-ը 2018թ-ից հետո (առանձնացնել՝ որոնք են շահել, որոնք՝ ոչ)	9
84.	ERASMUSV, BOOST, SMARTI ծրագրերի շրջանակներում իրականացվող երեք ծրագրերի աշխատանքները համակարգող անձանց անուն, ազգանուն, պաշտոն	9
85.	TEMPUS, ERASMUS MUNDUS, ERASMUSV ծրագրերի շրջանակներում բուհերի կարողությունների զարգացման և ակադեմիական շարժունության ու փոխանակումների ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, դասախոսների անուններ և մասնագիտություններ, ուսանողների անուններ և ֆակուլտետներ	9
86.	Ներքին դրամաշնորհային ծրագրում ընդգրկված դասախոսների անունները և նրանց կողմից ստացած պարգևավճարները	9
87.	ԵՄ, ՀՀ և ՌԴ մի շարք համալսարանների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում կատարված միջոցառումներ և արդյունքներ	9
88.	ՊԴ /վկայական/ և ուսանողական համակազմի անգլերեն լեզվի գնահատման համակարգի արդյունավետության վերլուծություններ	9
89.	Որևէ օրինակ, երբ հարցումների վերլուծություն արդյունքում մշակվել և ներդրվել է որևէ գործառույթ՝ միտված որակի բարձրացմանը	10
90.	Հարցարանների գնահատականների ամփոփումներ	10
91.	Հետազոտության օրինակ, երբ ուսանողներն ինքնուրույն վեր են հանել խնդիրներ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Ստորաբաժանումներ (ԳՔՈԱԿԿ, Հաշվապահության, ֆինանսատնտեսագիտական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժին, Իրավական ապահովման բաժին, Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն, Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժին, Ընդհանրու բաժին, Հասարակության հետ կապերի և լրատվության բաժին),
2. Լսարաններ (Լինգաֆոնային, համակարգչային և ընթացիկ դասընթացների կազմակերպման)
3. Բանականության ակումբ, Կարմիր սենյակ,
4. Լաբորատորիաներ(աշխարհագրության),
5. Բուժկետ,
6. Սպորտային մարմնամարզության դահլիճներ (2),
7. Ամբիոններ,
8. Գրադարան,
9. Արխիվ,
10. Ընփերցասրահ և ակադեմիական խորհրդատվության սենյակ։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀՀԿԿ- Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնը

ԳԱՑ-Գնահատման առանցքային ցուցանիշ

ԳԶՀ- Գիտության զարգացման հայեցակարգ

ԳԽ-Գիտական խորհուրդ

ԳՊՄԻ-Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ

ԳՔՈԱԿԿ- Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոն

ԵԲԿՏ - Եվրոպական բարձրագույն կրթության տարածք

ԹՎԳԾ- Թերությունների վերացման գործողությունների ծրագիր

ԹՕՊ-Թեմատիկ օրացուցային պլան

ՀԽ-Հոգաբարձուների խորհուրդ

ՄՈԳ-Միջին որակական գնահատական

ՄՈՒՀ-Մասնագիտական ուսումնական հաստատություն

ՄԿԾ-Մասնագիտության կրթական ծրագիր

ՇՊՀ-Շիրակի պետական համալսարան

ՈԱ-Որակի ապահովում

ՈԱՇ-Որակավորումների ազգային շրջանակ

ՈԱԱԿ-Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՊԴ-Պրոֆեսորադասախոսական կազմ

ՊԻԳԲ-Պլանավորում-իրականացում-գնահատում- բարելավում

ՌԾ-Ռազմավարական ծրագիր

ՈՒՕ-Ուսումնաօժանդակ կազմ

ՈՒԳԿԿ-ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն

ՈՒԳԸ- Ուսառողական գիտական ընկերություն

ՈՒԽ-Ուսանողական խորհուրդ